

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ – 85

Գիտական նստաշրջան՝  
նվիրված Հովհաննես Չեքիջյանի  
ծննդյան 85-ամյակին  
(26-27 սեպտեմբերի, 2014)

### Նստաշրջանի նյութեր

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական  
խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
**Արարատ Աղասյան** (նախագահ) - արվեստագիտության  
դոկտոր, պրոֆեսոր  
**Աննա Ասատրյան** - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Լիլիթ Երնջակյան** - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Մարգարիտա Քամայան** - արվեստագիտության թեկնածու

Պատասխանատու խմբագիր՝  
**ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ**

Հովհաննես Չեքիջյան – 85: Գիտական նստաշրջանի նյութեր (26-27  
սեպտեմբերի, 2014) / ՀՀ ԳԱԱ արվեստի ին-տ: Խմբ. խորհուրդ՝  
Ա.Վ.Աղասյան (նախագահ) և այլք: Պատ. խմբ.՝ Ա.Ասատրյան. – Եր.:  
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 179 էջ:

2014թ. հունվարի 23-ին լրացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ  
և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, պրոֆեսոր Հովհաննես  
Չեքիջյանի ծննդյան 85-ամյա հոբելյանը: Չեքիջյանի ծննդյան 85-ամյակի  
կապակցությամբ ստեղծված կառավարական հոբելյանական հանձնաժողովի  
կողմից հաստատված հոբելյանական միջոցառումների շարքում ՀՀ ԳԱԱ  
արվեստի ինստիտուտը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանս-  
սավորմամբ 2014թ. սեպտեմբերի 26-27-ին գումարեց Հ.Չեքիջյանին նվիրված  
անդրանիկ գիտական նստաշրջանը, որի լիազումար նիստը տեղի ունեցավ ՀՀ  
ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, իսկ մյուս երկու նիստերը՝ ՀՀ  
ԳԱԱ գիտաժողովների տանը (Արզական): Ժողովածուն պարունակում է նստա-  
շրջանի մասնակիցների զեկուցումները: Նյութերը ներկայացվում են բնագրով՝  
ըստ ելույթների հաջորդականության:

Ժողովածուն հասցեագրված է երաժշտագետներին, երաժիշտ-կատա-  
րողներին, արվեստաբաններին, հայագետներին և ընթերցող լայն շրջան-  
ներին:

**Հրատարակվում է**

**ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի**

**Ֆինանսավորմամբ**

### ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱՇՐՋԱՆՆԻ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ԾՆՆՂՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ

2014թ. հունվարի 23-ին լրացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյա հոբելյանը:

Հ.Չեքիջյանի ծննդյան 85-ամյակի կապակցությամբ ստեղծված կառավարական հոբելյանական հանձնաժողովի կողմից հաստատված հոբելյանական միջոցառումների շարքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ 2014թ. սեպտեմբերի 26-27-ին գումարեց Հ.Չեքիջյանին նվիրված անդրանիկ գիտական նստաշրջանը, որի լիագումար նիստը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, իսկ մյուս երկու նիստերը՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը (Արզական)<sup>1</sup>: Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտնականներն ու դասախոսները: Ընդ որում՝ հատուկ կարևորվել էր նստաշրջանի աշխատանքներին երիտասարդ երաժշտագետների ու արվեստաբանների մասնակցությունը, որոնցից շատերը Մաեստրոյի հետ անձնապես ծանոթացան հենց այս առիթով:

Գիտական նստաշրջանի նպատակն էր համակողմանիորեն ներկայացնել Հովհաննես Չեքիջյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը:

<sup>1</sup> Գիտական նստաշրջանի մասին տե՛ս **Սանթրյան Վանիկ**, Աշխարհին լսելի դարձնելով մեծն Կոմիտասին. Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, «Հայաստանի Հանրապետություն», 27 սեպտեմբերի, 2014: **Արտեմյան Լիլիթ**, Հովհաննես Չեքիջյան – 85, «Գիտություն», 25 հոկտեմբերի, N 10 (275), 2014, էջ 2: **Արտեմյան Լիլիթ**, գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյա հոբելյանին, «Պատմա-բանասիրական հանդես», 2014, N 3:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Արարատ Աղասյանը**: Նա նշեց, որ Մաեստրոյի մասին հրատարակվել են գրքեր, ավելի քան 1200 հոդվածներ աշխարհի տարբեր երկրներում, տարբեր լեզուներով, և կարևորեց գիտական նստաշրջանի դերը հայ արվեստագիտական կյանքում, քանի որ մեր իրականության մեջ առաջին դեպքն է, երբ մի ամբողջ գիտական նստաշրջան է նվիրվում հայ կատարողական արվեստի կարկառուն ներկայացուցչի, լուսաբանվում են նրա կյանքն ու համերգային գործունեությունը, նրա ստեղծագործությունը: Եվ պատահական չէ, որ շատ հոբելյաններ տեսած Մաեստրոյին ամբողջությամբ նվիրված այս առաջին աննախադեպ միջոցառումը՝ երկօրյա գիտական նստաշրջանը, տեղի է ունենում Գիտությունների ակադեմիայում: «Պատճառը ոչ միայն այն է, որ կապելլան ևս ակադեմիական է, այլև այն պատճառով, որ Հովհաննես Չեքիջյանն արժանացել է ՀՀ ԳԱԱ հուշամեդալի, որ նա ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է և սերտորեն համագործակցում է ինստիտուտի հետ և, վերջապես, նրա ղեկավարությամբ է 2013-ին տեղի ունեցել ՀՀ ԳԱԱ նորաստեղծ հիմնի պրեմիերան», - ասաց Ա.Աղասյանը:

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանը**, ով մասնավորապես նշեց. «Ուրախ եմ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կամարների ներքո Ձեզ ողջունել այս նշանակալի իրադարձության՝ Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի կապակցությամբ: Հատկանշական է, որ գիտության այս կաճառում մենք հոբելյանների առիթով գնահատում ու մեծարում ենք ոչ միայն հայրենական գիտության երախտավորներին, այլև որոշ դեպքերում նաև հայ արվեստի, մեր

հոգևոր մշակույթի երևելի գործիչներին, ովքեր խոր ակոս են բացել արժանի տեղ նվաճել հայ արվեստի անդաստանում: Այսօրվա հոբելյարը՝ մեր հարգելի Մաեստրոն, այդ սակավաթիվ մեծություններից է, հայ կատարողական արվեստի տաղանդաշատ ու միջազգային լայն ճանաչման արժանացած գործիչներից:

Հայաստանի գիտության գործիչները, ժողովրդի լայն խավերի հետ մեկտեղ, միշտ բարձր են գնահատել Չեքիջյանի տաղանդը, նրա վիրտուոզ կատարումները: Հատկանշական է, որ մեր ակադեմիայի պրեզիդենտ երջանակահիշատակ Վիկտոր Համբարձումյանը մեծ արվեստի ասպարեզ երիտասարդ Չեքիջյանի շնորհալից մուտքի հենց սկզբում խորաթափանցորեն նկատեց, որ «Հովհաննես Չեքիջյանը հայ երաժշտության երկնակամարում փայլատակող նորահայտ աստղ է: Նա եկավ, որպեսզի աշխարհին լսելի դարձնի մեր Կոմիտասի իրական երգը՝ հռչակելով և՛ իրեն, և՛ իր ժողովրդին»: Հետագա տարիներն ու տասնամյակները եկան հաստատելու ակադեմիայի երկրորդ պրեզիդենտի այս մարգարեությունը:

Գոհունակությամբ պետք է նշեմ, որ վերջին տարիներին սերտացել է համագործակցությունը ակադեմիայի և Հ.Չեքիջյանի ղեկավարած Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի միջև: Այսօր Մաեստրոն հայ մշակույթի միակ ներկայացուցիչն է, ով արժանացել է ՀՀ ԳԱԱ բարձրագույն պարգևին՝ «ՀՀ ԳԱԱ Հուշամեդալին», որը 2007թ. մայիսի 16-ին հենց այս դահլիճում նրան եմ հանձնել Կապելլան անգերազանցելի բարձունքների հասցնելու և համաշխարհային ճանաչման արժանացնելու, հայ դասական խմբերգային երաժշտությունն ամբողջ աշխարհում պրոպագանդելու համար:

Իր համերգային տևական ու արգասաբեր գործունեության ընթացքում Հովհաննես Չեքիջյանի շնորհիվ մի շարք վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններ ոչ միայն Հայաստանում, այլև Խորհրդային Միությունում հնչել են առաջին անգամ: Շարունակելով այդ ավան-

դույթը՝ Հովհաննես Չեքիջյանը դարձավ նաև ակադեմիայի հիմնի առաջին ու վիրտուոզ կատարողը:

Նորից ողջունելով հոբելյանական գիտաժողովի մասնակիցներին և հյուրերին՝ մաղթում եմ բեղմնավոր աշխատանք, հետաքրքիր զեկուցումներ և քննարկումներ»:

Նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը**, ով մասնավորապես նշեց. «Գիտական նստաշրջանի հարգելի՛ մասնակիցներ և հյուրեր՛ր: Թո՛ւյլ տվեք Հայաստանի մշակույթի գործիչների և Հովհաննես Չեքիջյանի 85-ամյակը նշող հոբելյանական հանձնաժողովի անունից ողջունել Ձեզ հայ երաժշտական կյանքում այս կարևոր իրադարձության՝ Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի առթիվ, ցանկանալ լավագույն ստեղծագործական ծրագրերի իրականացում, առողջություն, որ երկար տարիներ ծառայեք մեր մշակույթին: Գիտական այս երկօրյա նստաշրջանի օրը պատահական չէ ընտրված: Տարին հոբելյանական է, կարելի էր նստաշրջանը գումարել ցանկացած օր:

Այսօր սեպտեմբերի 26-ն է՝ Կոմիտասի ծննդյան օրը: Քիչ առաջ մենք ծաղիկներ խոնարհեցինք Կոմիտասի շիրմին: Կարծում եմ, որ հենց այդ խորհուրդն է կարևոր այսօրվա համար: Սեպտեմբերի 26-ը մեծ խորհուրդ ունի ոչ միայն հայ երաժշտության, այլև հենց մեր հոբելյարի՝ Հովհաննես Չեքիջյանի համար: Չէ՞ որ Մաեստրոյի կատարողական ողջ գործունեությունն ընթացել և ընթանում է Կոմիտասի նշանի տակ: Իր ողջ կյանքում նա ծառայել է կոմիտասյան երաժշտության տարածմանը՝ նրա խմբերգերը հնչեցնելով աշխարհի տարբեր բեմահարթակներից:

Սեպտեմբեր ամիսն իր հատուկ խորհուրդն ունի Մաեստրոյի կյանքում: Թուրքիայում դիրիժորական փայլուն ապագայի հեռանկարը թողած՝ 1961 թվականի հենց սեպտեմբերին երիտասարդ Հովհաննես

Չեքիջյանը տեղափոխվեց Հայաստան: Եվ այդ օրվանից ինքն ամբողջովին իր անձը, կարողությունները ներդրեց ի ծառայություն հայկական երաժշտարվեստի զարգացմանը: Երևանում հաստատվելուն պես նրա կյանքն անխզելիորեն կապվեց Հայաստանի պետական երգչախմբի հետ»:

Նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ **Սամվել Հարությունյանը**: Նա մասնավորապես նշեց. «Մեծարգո՛ Մաեստրո, հարգարժան՝ հյուրեր, ներկաներ: Ինձ համար այսօր շատ մեծ պատիվ է հերթական անգամ ներկա գտնվելու այն արարողությանը, որը նվիրված է մեծանուն Մաեստրոյի ծննդյան օրվան: Ճակատագրի բերումով 75-ամյակին ես նույնպես մասնակցեցի. այն ժամանակ ես Երևանի պետական համալսարանի պրոռեկտորն էի, և Մաեստրոյին տրվեց Երևանի պետական համալսարանի ոսկե մեդալ: 80-ամյա հոբելյանի ժամանակ ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալով պարգևատրվեց Մաեստրոն, և այսօր նորից ինձ համար մեծ պատիվ է գտնվել այստեղ և նորից շնորհավորել մեծանուն երաժշտին: Արվեստի ոլորտը նույնպես գիտության կարևորագույն ճյուղերից մեկն է, և ինձ համար, ճիշտն ասած, շատ տարօրինակ էր, որ մինչև վերջերս արվեստի՝ հատկապես գեղարվեստի, երաժշտության ոլորտում, գիտական հետազոտությունների համար շատ քիչ միջոցներ էին տրամադրում, և ուզում եմ Ձեզ զեկուցել, որ արդեն երրորդ տարին է, ինչ կոնսերվատորիան ունի պետական ֆինանսավորում: Գիտության պետական կոմիտեն ինչ-որ ձևով կապված է մեր Մաեստրոյի հետ, և ես գաղտնիքը կբացեմ: Բանն այն է, որ 1970-ական թվականներին մեր Մաեստրոն ղեկավարում էր Երևանի պետական համալսարանի երգչախումբը, և ես շատ կարճ ժամանակահատված երգել եմ Մաեստրոյի ղեկավարած երգչախմբում: Այդ տեսանկյունից կա որոշակի կապ գիտության պետական կոմիտեի և Մաեստրոյի միջև: Սիրելի՛ Մաեստ-

րո, ուզում եմ մեկ անգամ ևս շնորհավորել Ձեզ՝ փառապանծ 85-ամյակի կապակցությամբ, ցանկանալ երկար-երկար տարիների կյանք և նորանոր հաջողություններ»:

Այնուհետև պրոֆեսոր Սամվել Հարությունյանը Հ.Չեքիջյանին հանձնեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի շնորհավորական ուղերձը:

Նստաշրջանի մասնակիցներին ողջունեց Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ **Արամ Սարգսյանը**: Նա նշեց. «Գիտական նստաշրջանի հարգարժան՝ մասնակիցներ և հյուրեր: Թո՛ւյլ տվեք ջերմորեն ողջունել Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այս նստաշրջանն իր տեսակի մեջ եզակի է. մենք այսօր հավաքվել ենք՝ ի մի բերելու հայ խմբերգային արվեստի ականավոր ներկայացուցիչ, կենդանի լեգենդ Հովհաննես Չեքիջյանի անցած ստեղծագործական ուղին, հստակեցնելու նրա տեղն ու դերը երգչախմբային արվեստի զարգացման գործում: Ինձ համար, որպես Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահի, ուրախալի է, որ Հովհաննես Չեքիջյանն իր համերգային տևական ու բեղուն գործունեության ընթացքում հետևողականորեն անդրադարձել է հայ կոմպոզիտորների՝ ինչպես դասականների՝ Տիգրան Չուխաճյանի, Մակար Եկմայանի, Քրիստափոր Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Արմեն Տիգրանյանի, Արամ Խաչատրյանի, այնպես էլ ժամանակակիցների՝ Առնո Բաբաջանյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Գրիգոր Հախինյանի և այլոց ստեղծագործությունների կատարմանը: Կապելլայի հայտագրերում տեղ են գտել նաև սփյուռքահայ կոմպոզիտորների, այդ թվում՝ Բարսեղ Կանաչյանի, Ալան Հովհաննեսի, Ժան Ալմուխյանի, Համբարձում Պերպերյանի, Արա Պարթևյանի գործերը, որոնց մի մասը Հովհաննես Չեքիջյանը կատարել է Խորհրդրդային Միությունում առաջին անգամ: Եվ որ շատ կարևոր է, հիշալ

բոլոր դեպքերում փայլատակել է Չեքիջյանի՝ որպես տաղանդավոր խմբավարի և դիրիժորի բացառիկ ձիրքը, փայլատակել է խիստ ինքնատիպ ու անկրկնելի երանգներով: Վստահ եմ, որ մեզ սպասում են հետաքրքիր ու բովանդակալից զեկուցումներ. այդ են վկայում ծրագրում ընդգրկված թեմաները: Կրկին ողջունելով գիտական նստաշրջանի մասնակիցներին և հյուրերին՝ մաղթում եմ արգասաբեր աշխատանք ու գիտական բեղմնավոր գործունեություն»:

Ողջունելով գիտական նստաշրջանի մասնակիցներին՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆեսոր **Շահեն Շահինյանը** նշեց. «Մեծարգո՛ Մաեստրո, հարգարժան ներկաներ, ես ուղղակի խոսք չունեի այսօրվա համար, բայց լինելով նման հանդիպման ժամանակ՝ չէի կարող մի քանի խոսք չասել մեծ Մաեստրոյի մասին: Ուղղակի չեմ ուզում կրկնել՝ շատ լավ ասվեց արդեն ամեն ինչի մասին, և վստահ եմ, որ ներկաները շատ լավ ճանաչում են Մաեստրոյի գործունեությունը: Ուղղակի կուզենայի ավելացնել, որ Մաեստրո Չեքիջյանը հաճախ ներկայացվում է որպես խմբավար, բայց նա մոտ 70-80 նվագախմբերի հետ նաև ունեցել է համերգներ որպես սիմֆոնիկ դիրիժոր. դա հենց արտառոց երևույթ է, որովհետև մարդիկ զարգանում են կա՛մ սիմֆոնիկ ժանրով, կա՛մ երգչախմբային, բայց Մաեստրոն ունեցել է մեծ համերգներ նաև սիմֆոնիկ ժանրում: Նա ունի նաև մեծ մանկավարժական առաքելություն Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, և հենց նրա շնորհիվ է, որ այսօր մեր երաժշտական կյանքում շատ որակյալ երգչախմբեր կան, այսինքն՝ Չեքիջյանը այնպիսի հիմք է դրել, այնպիսի ուսանողներ է կրթել, որ մենք այսօր Հայաստանի Հանրապետությունում ունենք շատ տաղանդավոր խմբավարներ և բարձրորակ երգչախմբեր, և կուզենայի նշել, որ սեպտեմբերի 1-ից Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում ունենք Հովհաննես Չեքիջյա-

նի անվան կրթաթոշակ. մեր լավագույն խմբավար ուսանողը կստանա այդ կրթաթոշակը: Ծնորհավորում եմ, Մաեստրո՛»:

Լիազումար նիստում առաջինը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հ.Չեքիջյանի մասին գրված և 2009-ին լույս տեսած «Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան» գրքի հեղինակ **Աննա Ասարյանի** «Հովհաննես Չեքիջյան. խմբերգային արվեստի մարշալը» զեկուցումն էր, որտեղ բանախոսը ներկայացրեց Մաեստրոյի ստեղծագործական դիմանկարը, նրա վաստակը, նրա տեղն ու դերը հայ և խորհրդային երգչախմբային երաժշտության անդամստանում: Բանախոսը նկատեց, որ 2014-ը հոբելյանագարդ է Հ.Չեքիջյանի կյանքում. 2014-ին լրանում է նաև նրա ստեղծագործական գործունեության 70-ամյակը. առաջին անգամ նա երգչախումբ է ղեկավարել 1944-ին:

«50 տարի առաջ՝ 1964-ի նոյեմբերի 24-ից 29-ը, տեղի ունեցավ Հ.Չեքիջյանի դեբյուտը ԽՍՀՄ մայրաքաղաք Մոսկվայում: Մոսկովյան դեբյուտից անցած 50 տարիների ընթացքում Մոսկվայում Մաեստրոն ունեցել է 90 համերգ: Հենց Մոսկվայում տեղի ունեցան վոկալ-սիմֆոնիկ մի շարք ստեղծագործությունների, այդ թվում՝ Բեռլիոզի «Requiem»-ի, Գաբրիել Ֆորեի «Requiem»-ի, Գունոյի «Մահ և կյանք» օրատորիայի, Բեռլիոզի «Ռումեո և Ջուլիետ» դրամատիկական սիմֆոնիայի համամիութենական պրեմիերաները:

50 տարի առաջ՝ 1964-ի հոկտեմբերի 29-ին, 30-ին, 31-ին և նոյեմբերի 1-ին, Կապելլան Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ նվաճեց Լենինգրադը: 1964-ին սկիզբ առած բարեկամությունը Լենինգրադի ունկնդրի հետ շարունակվեց հետագայում. հաջորդեցին համամիութենական մի շարք պրեմիերաներ: Մաեստրո Չեքիջյանի ղեկավարությամբ երգչախումբը 97 համերգ է ունեցել Լենինգրադում:

50 տարի առաջ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ Կապելլան մեծ հաջողությամբ հանդես եկավ Մերձբալթյան հանրապետությունների քաղաքներում՝ Տալլինում, Տարտուում, Նարվայում, Վիլնյուում, Կաունասում, Ռիգայում, Ռուսաստանի քաղաքներում՝ Կալինինգրադում, Չերնյախովսկում, Սվետլոգորսկում, Կիսլովոդսկում, Պյատիգորսկում, Եսենտուկիում, ինչպես նաև Բաքվում:

40 տարի առաջ՝ 1974-ին, տեղի ունեցան Կապելլայի արտասահմանյան առաջին հյուրախաղերը, և Կապելլան համերգներով հանդես եկավ Լիբանանում (փետրվարի 2-17-ը) և Ֆրանսիայում (սեպտեմբերի 6-16-ը):

30 տարի առաջ՝ 1984-ին, լույս տեսավ Մաեստրոյի մասին անդրանիկ մենագրությունը՝ Անժելա Հովհաննիսյանի «Հովհաննես Չեքիջյան» գիրքը, որին հաջորդեցին նրան նվիրված Սուսաննա Դավթյանի «Հովհաննես Չեքիջյան» գիրքը (2000), Ֆելիքս Բախչինյանի «Մաեստրոն» գրքույկը (2007), Աննա Ասատրյանի «Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան» գիրքը (2009) և Սերգեյ Առաքելյանի «Հովհաննես Չեքիջյան» պատկերագիրքը (2014):

Այսօր Հ.Չեքիջյանի ղեկավարած երգչախումբը միակն է համաշխարհային երգչախմբային արվեստում, որը բեմում երգում է առանց նոտաների, դրանցից չի օգտվում անգամ խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարման ժամանակ՝ ղեկավարվելով «բեմ բարձրացողը նոտաներն իր սրտում ու մտքում պետք է ունենա և ոչ թե ձեռքին» չեքիջյանական նշանաբանով»:

Ի.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու **Աննա Աղամյանի** զեկուցումը նվիրված էր Հ.Չեքիջյանի և ՀՀ ԳԱ ակադեմիայի, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի միջև համագործակցությանը, որի առաջին վերջին ակորդը Մաեստրոյի ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ հիմնի պրեմիերան էր. «2013 թվականին ՀՀ ԳԱԱ 70-ամյակի կապակ-

ցությամբ Արվեստի ինստիտուտը առաջարկություն ներկայացրեց հոբելյանական միջոցառումների անցկացման շրջանակում Ակադեմիային նվիրել իր պատմության մեջ առաջին հիմնը: Աննա Ասատրյանի խնդրանքով կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, այժմ՝ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, համագործակցելով տեքստի հեղինակի՝ Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Կարո Վարդանյանի հետ կարճ ժամանակում ստեղծեց ՀՀ ԳԱԱ հիմնը՝ սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի համար նախատեսված վառ և տպավորիչ վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունը: Եվ կրկին պատրաստական Մաեստրոն Արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանի և Աննա Ասատրյանի խնդրանքով ձեռնամուխ եղավ հիմնի կատարման իրականացմանը: Հիմնի պրեմիերան տեղի ունեցավ 2013 թվականի հոկտեմբերի 15-ին Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին նվիրված հոբելյանական հանդեսի ժամանակ: Ունկնդիրների ջերմ և հիացական ընդունելությանն արժանացած հիմնը կատարեցին Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը և Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ հուշամեդալի ասպետ, ՀՀ ԳԱԱ գիտական խորհրդի անդամ, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Լիառույս ենք, որ այս գեղեցիկ և արդյունավետ համագործակցությունը դեռ երկարատև ճանապարհ կունենա՝ մեզ նվիրելով նորանոր և յուրօրինակ նախաձեռնություններ ու միջոցառումներ»:

Նստաշրջանի լիազումար նիստը եզրափակեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Սարգսիդրա Ռուխկ-**

**յանը:** Նա ներկայացրեց «Խմբերգը որպես հայ մշակույթի զարգացման գործոն. Հովհաննես Չեքիջյանի գործունեության և ստեղծագործության օրինակով» զեկուցումը: Բանախոսը եզրակացրեց, որ «В явлении под именем Оганес Чекиджян сошлось очень многое. Хоровая капелла стала своего рода Альма-матер для армянского хорового искусства. Попутно с разрастающейся славой Государственной капеллы Армении рождались хоры, многие из которых сформировались в яркие и самостоятельные коллективы, уже имеющие свои собственные традиции, свой стиль исполнения. Это Государственный камерный хор «Овер», руководителем которого является Сона Ованнисян, Государственный камерный хор Армении, работающий под управлением Роберта Млкеяна, Государственный детский хор, которым много лет руководит Тигран Экекян, Ереванский камерный хор под управлением Арутюяна Топикяна, а также прекрасная страница хорового искусства, которую открыла Сарина Автандилян с организацией и деятельностью хора «Спехани». И для всех для них Государственная капелла Армении под управлением Оганеса Чекиджяна представляла всегда и представляет сейчас мощный форпост армянского хорового искусства, его защищающий и, одновременно, ставящий перед ним самые высокие требования и большие творческие задачи».

Լիագումար նիստի ավարտից հետո գիտական նստաշրջանի մասնակիցները մեկնեցին Արզական՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տուն, որտեղ գումարվեցին նստաշրջանի երկու նիստերը:

Առաջին նիստը տեղի ունեցավ նույն օրը՝ սեպտեմբերի 26-ին:

Հետաքրքիր և մինչ օրս չարձարձված խնդրի լուսաբանման էր նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Լիլիթ Երնջակյանի** «Հովհաննես Չեքիջյանը և Սփյուռքի երաժշտարվեստը» զեկուցումը: Ամբողջացնելով «պլյսեյի»

ինքնություն կրող Մաեստրոյի ստեղծագործական-կատարողական ներդրումը հայրենիք-սփյուռք մերձեցման ոլորտում՝ ի նպաստ հայ գաղթօջախների հայապահպան ջանքերի և ազգային ոգու միասնականության, Լ.Երնջակյանն ընդգծեց, որ «թեև Մաեստրոյի սփյուռքահայ ընտրյալները մեծաթիվ չեն, սակայն իրենց արվեստի ազգային և վերազգային նկարագրերով, միջազգային ճանաչման առումով ներկայանալի ու ինքնատիպ են»: Բնութագրելով Ակադեմիական երգչախմբի երկացանկում ընդգրկված սփյուռքահայ երաժիշտ-երգահաններին՝ Ա.Այտնյանին, Ա.Պարթևյանին, Է.Մանասին (որոնց հեղինակած Պատարագների առաջին մեկնաբաններից է եղել Հ.Չեքիջյանը), Բ.Կանաչյանին, Գ.Ալեմշահին, Ժ.Ալմուլյանին, Լ.Երնջակյանը նշեց, որ նրանք ժամանակակից երաժշտության բարդ համայնապատկերում իրենց խոսքն ասած հեղինակներ էր: Այս դիտակետից առանձնապես կարևորվեց ամերիկահայ անվանի կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը, որի «արվեստին առնչելու հնարավորությունը դեռևս 1965թ. Երևանում, Մոսկվայում և այլուր ստեղծվել է Չեքիջյանի նախաձեռնությամբ»: Մասնավորապես, զեկուցողն առանձնացրեց Ալան Հովհաննեսի «Մագինիֆիկատի» և «Սուրբ Հեղինե լեռը» սիմֆոնիայի չեքիջյանական մեկնաբանությունները, որ Մաեստրոն հնչեցրել է աշխարհի տարբեր բեմերից: Ավարտելով իր խոսքը՝ Լ.Երնջակյանն ասաց. «Չեքիջյանի անսպառ ջանքերը՝ ուղղված հայրենիքի և սփյուռքի մեր հայրենակիցներին միաբան և համախմբված տեսնելու, կարելի է համարել Ե.Չաբենցի կտակ-պատգամն իրականացնելու գործուն միջոցներից մեկը»:

Ի.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ **Յուրի Յուզբաշյանը** «Խմբերգային և կատարողական արվեստի չեքիջյանական մեկնաբանության մասին» զեկուցման մեջ կատարողական արվեստը դիտեց որպես մարդու գեղարվեստական ստեղծագործական գործունեության տե-



սակ: Բանախոսի կողմից տրվեցին ստեղծագործությունների կատարողական սկզբունքների հիմնավոր վերլուծություններ:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Նեկի Ավետիսյանը** «Հովհաննես Չեքիջյանի գեղագիտական հայացքները» զեկուցման մեջ նկատեց, որ «...հանճարեղ խմբավարը, ում Աստծո կողմից պարգևված է դիրիժորական շնորհը, նոր էջ բացեց 20-21-րդ դդ. համաշխարհային երաժշտության մեջ: Մասետրոյի ներդրումը մշակույթի զարգացման ասպարեզում հսկայական է: Նա հանդես եկավ ոչ միայն երգչախմբի դիրիժոր, որտեղ կապելլան հանդես էր գալիս սիմֆոնիկ նվագախմբի հետ: Նա հրաշալի մեկնաբան է, հմուտ երաժիշտ, որ իր գեղագիտության շնորհիվ ձևավորում է ոչ միայն իր անձնական աշխարհը, այլև բոլոր ստեղծագործությունները, որը նա մեկնաբանել է կյանքի ընթացքում՝ յուրաքանչյուրի համար գտնելով կոմպոզիցիոն էության առանձնահատկությունները: Նրա անձնական գեղագիտությունն ազդում և կառավարում է կատարողական արվեստը»:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու, արվեստաբան **Մարգարիտա Քամայանը** «Հովհաննես Չեքիջյանը և հայ կերպարվեստագետները» զեկուցման մեջ առաջին անգամ մասնագիտական քննության ենթարկեց նկարիչներ Ռուդոլֆ Խաչատրյանի, Արամ Սարիբեկյանի, ռեժիսոր, ծաղրանկարիչ Վարդան Աճեմյանի և քանդակագործներ Լևոն Թոքմաջյանի ու Էդուարդ Շախիկյանի՝ մեծանուն խմբավար Հովհաննես Չեքիջյանի վառ անհատականությունը հավերժացնող ստեղծագործությունները: Ներկայացվեցին նաև Մասետրոյի տաղանդով հիացած անվանի կերպարվեստագետներ Երվանդ Քոչարի, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Հակոբյանի, Գրիգոր Խանջյանի բարձր գնահատանքի խոսքերը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր և երգեհոնահար **Հովհաննես Մանուկյանը** բացահայտեց քչերին հայտնի Հովհաննես Չեքիջյան կոմպոզիտորին, անդրադարձավ նրա վոկալ-սիմֆոնիկ հետևյալ ստեղծագործություններին՝ Վահան Տերյանի քնարական բանաստեղծությունների հիման վրա երկու մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար գրված «Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմին և Սիլվա Կապուտիկյանի խոսքերով գրված «Ազատության դղանջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմին, որը կոմպոզիտորը նվիրել է Ա.Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ **Նաիրա Մադոյանը** ներկայացրեց Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության մեջ միակ երաժիշտ ակադեմիկոսի՝ Արամ Խաչատրյանի առնչությունները: Ժամանակագրական առումով դրանք այնքան էլ տևական չէին (Մասետրոն հայրենիքում հաստատվեց 1961-ին, իսկ դրանից 17 տարի անց՝ 1978թ. մայիսի 1-ին, կյանքից հեռացավ Արամ Խաչատրյանը), սակայն խորն էին ու բազմանշանակ: Բանախոսն անդրադարձավ Խաչատրյանի հեռագրին ու նամակին՝ ուղղված Հ.Չեքիջյանին, բացահայտեց այն դերը, որն ունեցավ Ա.Խաչատրյանի «Ձոն ցնծության» ստեղծագործությունը Մասետրոյի համերգային կյանքում, և զեկուցումն ավարտեց կոմպոզիտորի՝ Մասետրոյին տված գնահատականով. «Հիացած եմ Հովհաննես Չեքիջյանի տաղանդով և եռանդով: Անսխալական են հատկապես դասական ստեղծագործությունների նրա մեկնաբանությունները: Նրանք ավարտուն են, իրենն են: Արվեստի կատարյալ տոն հիշեցնող երգչախմբի յուրաքանչյուր ելույթը լսելիս ես հսկայական հրճվանք եմ ապրում, զարմանում չեքիջյանական իմպրովիզացիաներով: Մոսկվայում ու նաև ամենուր կա այն կարծիքը, որ Չեքիջյանի

կապելյան Խորհրդային Միության լավագույն խմբերից մեկն է: Ինձ երջանկացնում է երգային այդ հզոր օրգանիզմի հաղթարշավը աշխարհի ամենահեղինակավոր բեմերում»:

ՀՀ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դաշնակահարուհի **Լիլիթ Արսենյանը** ներկայացրեց «Հովհաննես Չեքիջյանը և Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը» զեկուցումը: 1982-ին Հովհաննես Չեքիջյանը համատեղությամբ նշանակվեց Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրեկտոր՝ պաշտոնավարելով մինչև 1987-ը և ծավալելով իր արդյունաշատ գործունեությունը օպերային երաժշտության բնագավառում ևս: Բանախոսն անդրադարձավ թատրոնի խաղացանկի հարստացմանը, այդ թվում՝ Ալ.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի նոր բեմադրությանը, Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի կեսդարյա հարուստ պատմությունը ներկայացնող՝ Կ.Մարկոսյանի «Ալ.Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն» գրքին, որը լույս տեսավ 1984-ին ևն: Խմբավար և սիմֆոնիկ դիրիժոր Հ.Չեքիջյանը հանդես է գալիս որպես օպերային դիրիժոր ևս: 1984-ի ապրիլի 27-ին և 28-ին իրականացվում է Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերայի չորրորդ բեմադրությունը, որի դիրիժորը Հ.Չեքիջյանն էր:

Օրերս հրատարակված «Հովհաննես Չեքիջյան» գրքի հեղինակ, Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի թանգարանի վարիչ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Սերգեյ Առաքելյանը** «Հովհաննես Չեքիջյանը մեծերի գնահատմամբ» զեկուցման մեջ հանգամանալից ներկայացրեց հայ մեծահամբավ խմբավար, դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի հզոր արվեստի

մասին տարբեր ժամանակահատվածներում, տարբեր երկրներում աշխարհի մեծանուն արվեստագետների՝ Արամ Խաչատրյանի, Մարտիրոս Սարյանի, Վիկտոր Համբարձումյանի, Գոհար Գասպարյանի, Սիլվա Կապուտիկյանի, Պարույր Սևակի, Մարիետա Շահինյանի, Օհան Դուրյանի, Վահրամ Փափագյանի, ինչպես նաև օտար արվեստագետների՝ Դմիտրի Շոստակովիչի, Եվգենի Մրավինսկու, Քշիշտոֆ Պենդերեցկու, Գուստավ Էռնեստսքսի և այլոց կարծիքները, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի մասին նրանց տված գնահատականները:

Նստաշրջանի երկրորդ նիստը գումարվեց սեպտեմբերի 27-ին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող **Արուսյակ Պեպրոսյանի** զեկուցումը նվիրված էր վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունների չեքիջյանական մեկնաբանություններին: Բանախոսն առանձնապես կարևորեց Մատենոյի պրոֆեսիոնալ վարպետությունը տարբեր դարաշրջանների մեծակտավ գլուխգործոցների ոճական բազմազանության ամբողջացման, տարբեր «դպրոցներին» հատուկ առանձնահատկությունների բացահայտման հարցում: Նշվեց նաև, որ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ աշխարհի լավագույն համերգային դահլիճներում հանդես է եկել ազգային, եվրոպական, դասական և սովետական հեղինակների շուրջ 40 վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններով տեղի ճանաչված նվագախմբերի հետ, հանրահայտ մենակատարների մասնակցությամբ, իսկ ազդագրերին հաճախ գրված է եղել՝ «կատարվում է առաջին անգամ»: Իր զեկուցման մեջ Ա.Պետրոսյանը փաստացի նյութի հիման վրա հաստատեց, որ «Հայաստանի պետական երգչախումբը՝ կապելյան, և նրա ղեկավարը խմբերգային արվեստը հասցրել են մեծագույն բարձունքի և դրանով իսկ արժանացել միջազգային ճանաչման»:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, արվեստագիտության թեկնածու **Վալենտին Թովմասյանը** «Դիրիժոր չեն դառնում, դիրիժոր ծնվում են» զեկուցման մեջ արծարծեց դիրիժորական ուրույն գաղտնիքները խմբերգային արվեստի յուրահատկությունների, նրա հուզումնային մանրամասնություններն ու առնչությունները հայկական խմբերգային արվեստի հետ: Տիգրան Չուխաճյան, Մակար Եկմայան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Թաթուլ Ալթունյան, Արամ Տեր-Հովհաննիսյան, Հովհաննես Չեքիջյան. ահա այն հիմնասյունները, որոնք էլ խմբերգային երգարվեստի հիմքը դրեցին, որն այսօր զարգացման գերագույն մակարդակի է հասցրել ու միջազգային ասպարեզ հանել Հովհաննես Չեքիջյանը:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի տեղակալ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Աննա Հարությունյանը** «Հովհաննես Չեքիջյանը և Ֆրանսիան» զեկուցման մեջ առաջին անգամ համակողմանի ներկայացրեց Հովհաննես Չեքիջյանի կատարողական կյանքում ֆրանսիական երաժշտության մեծ դերը: Բանախոսի գնահատմամբ՝ Ֆրանսիայի և Մաեստրոյի առնչությունները երկու բնույթի են:

Ֆրանսիական կոմպոզիտորների վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունները Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ:

Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հյուրախաղերը Ֆրանսիայում:

Բանախոսն անդրադարձավ հայկական Կապելլայի երկացանկում իրենց հաստատուն տեղն ունեցող ֆրանսիացի կոմպոզիտորների ստեղծագործություններին, որոնց մի մասը Խորհրդային Միությունում առաջին անգամ կատարվել է հենց Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ: «Ավելին՝ «ո՞ր կոմպոզիտորն է Ձեզ առավել հոգեհարազատ» հարցին Մաեստրոն պատասխանել է՝ «Առաջինը Կոմիտասն է, երկրորդը՝ Բեռ-

լիոզը»: Սիրելի կոմպոզիտորի ստեղծագործություններից Կապելլայի երկացանկում ներկայացված են «Requiem»-ը, «Ռոմեո և Ջուլիետը» և «Te Deum»-ը: Չեքիջյանն անդրադարձել է նաև Գաբրիել Ֆորեի «Requiem»-ին և Շառլ Գունոյի «Մահ և կյանք» օրատորիային»:

Չեկուցման մեջ ներկայացվեցին նաև Կապելլայի տարեգրության կարևոր էջը կազմող հյուրախաղերը Ֆրանսիայում: Կապելլան առաջին անգամ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ Ֆրանսիայում հյուրախաղերով հանդես եկավ 1974-ին, այնուհետև՝ 1986-ին և 1995-ին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ, խմբավար **Էմմա Առաքելյանը** ներկայացրեց «Հովհաննես Չեքիջյանը կոմիտասյան խմբերգերի մեկնաբան» զեկուցումը, որտեղ կարևորեց այն հանգամանքը, որ Մաեստրոյի գերագույն նպատակներից մեկը Կոմիտասի խմբերգերի կատարման միջոցով հայ երգի տարածումն է, ինչը նա իրականացնում է տարիների ու տասնամյակների ընթացքում աշխարհի տարբեր քաղաքներում: Կոմիտասյան խմբերգերը նրա համերգների անբաժան ուղեկիցն են: Կոմիտասյան խմբերգերը Մաեստրոյի կատարմամբ հնչել են աշխարհի տարբեր ծայրերում:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ **Սոնա Մակարյանի** «Հովհաննես Չեքիջյանի երևանյան դեբյուտը» զեկուցումը նվիրված էր հայրենիքում անդրանիկ համերգին, որը տեղի ունեցավ 1961թ. նոյեմբերի 27-ին Երևանում, և որի ընթացքում Հ.Չեքիջյանը հանդես եկավ և՛ որպես խմբավար (համերգի առաջին բաժնում հնչեցին Կարա-Մուրզայի «Ալազյազ», «Գացեք, տեսեք» խմբերգերը, Կոմիտասի «Գութանի երգը», «Ինչու Բինգյոլը մտար», «Երկրագործի երգը» «Կալի երգը» և հարսանեկան երգեր՝ «Փեսին արդուզարդը», «Մաղթանք», «Փեսին գովքը», «Կատակերգ», «Շուրջպար»: Համերգի առաջին բաժինն ավարտվեց Կարո Ջաքարյանի քնարական խմբերգերից մեկով, որը հնչեց ծրագրից դուրս, և՛ որպես սիմֆոնիկ դիրիժոր (Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը նրա ղեկավարությամբ

կատարեց Բեթհովենի Յոթերորդ սիմֆոնիան): Բանախոսն անդրադարձավ նաև համերգի վերաբերյալ մամուլի արձագանքներին:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ, Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղարվեստական մենեջեր **Սարգիս Բալթաբյանը** «Սերունդների խաչմերուկում. Մաեստրոն և Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը» զեկուցման մեջ առաջին անգամ ներկայացրեց նվագախմբի և Հովհաննես Չեքիջյանի (նաև երգչախմբի) հետ համագործակցության հիշարժան առիթները, երաժիշտների տպավորությունները: Բանախոսը նաև քննության առավ երգչախմբային արվեստին վերաբերող որոշ տեխնիկական և գեղարվեստական հարցեր, որոնցով առանձնանում է Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը, շարադրեց ՀՀ ԳԱԱ հիմնի ստեղծման պատմությունը, իսկ զեկուցումը եզրափակեց երգչախմբի և նվագախմբի համագործակցության առաջիկա նախագծերի ներկայացմամբ:

Վերջում իր շնորհակալական խոսքն ասաց Մաեստրո Հովհաննես Չեքիջյանը:

Վստահաբար կարող ենք ասել, որ գիտական նստաշրջանը ծառայեց իր նպատակին. համակողմանիորեն ներկայացվեցին Հովհաննես Չեքիջյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը:

### **Մերի ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող,  
արվեստագիտության թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ  
ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ ПО НАУКЕ  
ПРЕДСЕДАТЕЛЬ  
REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE  
STATE COMMITTEE OF SCIENCE  
CHAIRMAN

0028: ՀՀ, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22:  
0028, RA, Yerevan, Brat'ev Orbeli 22.  
22 Orbeli Brothers, Yerevan, RA, 0028.

Հեռ./ Թեղ./Tel. (374 10) 21 01 40 111  
Ֆաքս/Փաեք/Fax (374 10) 21 01 40 104  
URL: [www.scs.am](http://www.scs.am); e-mail: [info@scs.am](mailto:info@scs.am)

No ..... 26.09.2014

*Թանկագին պարոն Չեքիջյան*

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ ծննդյան 85-ամյակի կապակցությամբ:

Դիրիժորական և մանկավարժական Ձեր բազմամյա գործունեությունը մեծ նպաստ է բերել մեր խմբերգային արվեստի զարգացմանը: Ձեր ղեկավարությամբ մեծ վարպետությամբ կատարվել են դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները, հայկական ժողովրդական երգեր, օպերաներից հատվածներ, որոնք, հանդիսանալով համաշխարհային երաժշտության անկրկնելի գոհարներ, տասնյակ տարիներ ոգևորել և կրթել են սերունդներ:

Անուրանայի է ինքնատիպ գեղարվեստական մտածողությամբ, կատարողական վարպետությամբ և արտիստիզմով աչքի ընկնող երաժշտական կյանքի հմուտ կազմակերպչի և մանկավարժի Ձեր վաստակը: Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ հոշակավոր Կապելլան, եղել և մնում է մեր ժողովրդի կողմից ամենասիրված երաժշտական կոլեկտիվներից մեկը:

Այսօր էլ Դուք շարունակում եք ստեղծագործական եռանդուն գործունեությունը, ինչի արդյունքում, վստահ եմ, ծնվելու են նոր գլուխգործոցներ՝ ի շահ մեր մշակութային գանձարանի հարստացման:

Մեկ անգամ ևս շնորհավորելով ծննդյան տարելիցի կապակցությամբ՝ մաղթում եմ Ձեզ, սիրելի մասետրո, առողջություն, ստեղծագործական նորանոր բարձունքներ և ամենայն բարիք:

Սամվել Հարությունյան

**ԱՆՆԱ ԱՍՏՐՅԱՆ**

«Հարվեստի վաստակավոր գործիչ,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ»

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ.  
ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՐՇԱԼԸ**

Հոբելյանազարդ է 2014 թվականը Հովհաննես Չեքիջյանի համար: Այս տարի լրացավ Մատենոբյի ծննդյան 85-ամյակը:

2014-ին լրանում է նաև նրա ստեղծագործական գործունեության 70-ամյակը. Չեքիջյանը որ առաջին անգամ նա երգչախումբ է ղեկավարել 1944 թվականին: Եվ այսօր՝ 70 տարի անց, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղդամյանի դիպուկ գնահատմամբ նա խմբերգային արվեստի մեր մարշալն է:

Սակայն սրանով չեն սպառվում հոբելյանները:

Սրանից ճիշտ 50 տարի առաջ՝ 1964 թվականին, Հայաստանի գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում այդ օրը ոչ թե գիտական զեկուցումներ էին լսում, այլ թևածուր էին հարազատ հնչյունները կոմիտասյան երգերի և էլի ուրիշ հայ աշխարհիկ երգեր, Հենդելի, Մոցարտի, Բելլինիի երաժշտությունն էր տիրաբար հնչում: Ելույթ էր ունենում Հայաստանի պետական երգչախումբը: «Անմոռա՛ց ելույթ: Տաղանդաւոր դիրիժոր եւ խմբավար Յովհաննէս Չեքիջեանը մէկ անգամ ես հաստատեց, որտեղ երգչախումբն է, այնտեղ էլ Կոմիտասն է: Նա դարձեալ ցոյց տւեց իր վարպետութիւնը, որը եւ երգչախմբի վարպետութիւնն է, իր ոգեշունչ արւեստը, խմբերգային արւեստի գոհարներն իրենց պերճաշուք փայլով ներկայացնելու իր հմտութիւնը»<sup>1</sup>:

Ճիշտ կես դար առաջ էր՝ 1964 թվականի նոյեմբերի 24-ին, 25-ին, 26-ին, 27-ին, 28-ին և 29-ին, տեղի ունեցավ Հ.Չեքիջյանի դերյուրը Խորհրդային Միության մայրաքաղաք Մոսկվայում: Մոսկվայի սիմֆոնիկ նվագախմբի հետ Կապելլան կատարում է Մոցարտի «Requiem»-ը և Շուբերտի «Միրիամի հաղթերգը» կանտատը: Այդ ժամանակ երգչախումբը կազմված էր ընդամենը 54 արտիստներից: Համերգը բախտորոշ էր. հաջողության դեպքում կոլեկտիվի առջև կբացվեին երկրի գլխավոր համերգային դահլիճների դռները: Եվ Մոսկվան գնահատե՛ց Չեքիջյանի տաղանդը, իսկ Դ.Շոստակովիչն արձանագրեց. «...նա ազատ կարող է եվրոպական լավագույն դահլիճների զարդը լինել»:

«Աշխարհի քարտեզներին քիչ չեն, այսպես կոչված, երաժշտական քաղաքները, անգամ երկրները,- տարիներ անց կխոստովանի Մատենոբն,- Իտալիան, օրինակ, մեզ թվում է մի մեծ երաժշտանոց, իտալացին՝ բնածին երաժիշտ: Մեր մտապատկերներում երաժշտության հետ նույնացել են Միլանը, Վիեննան, Փարիզը, Լենինգրադը: Այսուհանդերձ, եթե Մոսկվան չի նույնանում երաժշտության հետ, ապա երաժշտական արվեստի դասական և մերօրյա արժեքների հաստատման ասպարեզում նրան միշտ էլ առաջնակարգ դեր է պատկանել: Ամենահամբավավոր երաժիշտն անգամ չի կարող չփնտրել մոսկովյան ծափերը: Լենինգրադյան ակադեմիական ունկնդրին այստեղ փոխարինում է «միջազգային ունկնդիրը»՝ բառիս ուղղակի իմաստով, և դժվար է գուշակել, թե ուր կհասնի համերգի արձագանքն այս շարժուն, ճամպուրակները կապած, միշտ ռելսերի վրա ունկնդրի միջոցով: Մոսկովյան բեմն այն պատվանդանն է, որտեղից տեսանելի ես դառնում աշխարհի բազմաթիվ ազգերի ու ցեղերի պատվիրակներին. այստեղ միշտ էլ կգտնվեն ունկնդիրներ, որոնց համար հայտնություն կլինեն Հայաստանը, հա՛յը, հայկական՝ն երգչախումբը, և շատ հնարավոր է, որ մեն-միակ այդ համերգն էլ մնա նրանց միակ հանդիպումը

<sup>1</sup> Հայրապետեան Դ., Որտեղ երգչախումբն է, այնտեղ՝ Կոմիտասը, «Լրաբեր», 5 մարտի, 1964:

հայկական մշակույթի հետ. չէ՞ որ նրանք միայն հյուր են այս քաղաքում: Վաղը կմեկնեն աշխարհի չորս կողմերը՝ հիշողության մեջ տանելով մինչ այդ անծանոթ ժողովրդի երգը: Ահա հենց այս իրողությամբ մոսկովյան համերգները գերաճում են իրենց գեղագիտական նշանակությունը և ստանում ինքնահաստատման վկայություն:

Ինձ համար դժվար է գերազնահատել մոսկովյան ելույթների նշանակությունը: Այստեղի համերգը բարոյական-քաղաքական խոշորագույն իրադարձություն է և ինչ առիթով էլ կայանա, միևնույն է, դու ժողովուրդ ես ներկայացնում, ուստի պատասխանատվությունն անչափելի մեծանում է: Իսկ երբ առանց նայելու էլ տեսնում ես, որ օթյակում նստած են Ա. Խաչատրյանը, Հ. Բաղրամյանը, Իրինա Արխիպովան, Իվան Կոզլովսկին, մոսկվայաբնակ ականավոր հայեր, որոնց այս սրահ է բերել հարազատ ժողովրդի հոգևոր վերածնունդը վերապրելու այնքան հասկանալի ցանկությունը, ուզո՛ւմ ես, անչա՛փ շատ ես ուզում դու էլ դառնալ այդ վերելքի հաստատողն ու վկան:

Որքան էլ բազմագույն ու բազմաշերտ է սրահը, միշտ էլ կարող ես համոզված լինել, որ այս սրահում է այն խստագույն դատավորը, որը կանաչ լույս է վառում կատարողի ճանապարհին: Եվ ինչպիսի պատեհությամբ էլ կայացած լինի մոսկովյան հանդիպումը, միևնույն է, քեզ այստեղ լսում ու դատում են միջազգային չափանիշով: Մոսկվան աշխարհին նայող պատուհան է, որից դուրս նայելու համար նախ պետք է համոզես հենց իրեն՝ Մոսկվային: Տասնյակ տարիների կենսափորձը համոզեց ինձ. կարող ես լիաձայն երգել, երբ Մոսկվան է լսում»<sup>2</sup>:

Մոսկովյան դեբյուտին Կապելլան ներկայացավ պրեմիերայով՝ Ռոսինիի «Stabat mater»-ով, որին մասնակցում էր աշխարհահռչակ բաս Եվգենի Նեստերենկոն: Հաջողությունն աննախադեպ էր. հանդի-

<sup>2</sup> Հովհաննիսյան Անժելա, Հովհաննես Չեքիջյան, Երևան, 1984, էջ 82-84:

սասրահը ծափահարում է հոտնկայս: Հ. Չեքիջյանը բեմ է հրավիրվում արդեն ութերորդ անգամ. համերգն ավարտելու նպատակով տնօրինությունը մարում է բեմի ու հանդիսասրահի ջահերը: Խավարի մեջ սրահը շարունակում է տեղալ ծափողջույնների հեղեղը: Սիմֆոնիկ նվագախումբը հեռանում է բեմից, բայց հանդիսատեսը քարացած է տեղում: Վառվում են լույսերը, և Կոմիտաս՝ «Գութաններգ», հետո՝ էլի Կոմիտաս: Հայրենիքում 1961 թվականի նոյեմբերի 27-ի դեբյուտին ներկայանալով կոմիտասյան խմբերգերի կատարումով՝ Հ. Չեքիջյանն այլևս իր ղեկավարած երգչախմբի հետ պիտի աշխարհին ծանոթացներ կոմիտասյան խմբերգերին՝ դառնալով դրանց անզուգական մեկնաբանն ու չգերազանցված թարգմանը: Եվ աշխարհը վերստին պիտի ընդուներ, որ «հայն ունի ինքնուրույն երաժշտություն», հիանար հինավուրց ժողովրդի չքնաղ երգերով: Մատենորոն հավատարիմ մնաց Կոմիտասին հյուրընկալած Պոլսի իր հայրական օջախի ավանդույթներին, իր ծնողների պատգամներին:

«Մենք հայ արվեստի կրողն ենք,- համոզված է Մատենորոն,- ուստի հիմնականում պիտի քարոզենք այն, հետո միայն ցույց տանք եվրոպական երաժշտության կատարման մեր ոճն ու տեխնիկան: Եվ գիտեք՝ ինչ է տեղի ունենում, երբ Վերդիի «Requiem»-ից կամ Բեթհովենի Իններորդ սիմֆոնիայից հետո ժողովրդի ծափերի տակ սկսում ենք երգել Կոմիտաս: Նա շողում ու փայլատակում է որպես իսկական աղամանդ: Այդ աղամանդով էլ սովորաբար փակում ենք մեր համերգները: Իմ նպատակը հայ արվեստին ծառայելն է, ֆանատիկ կերպով իմ ազգի երաժշտությունը բարձրարվեստ մատուցելը և դրանով իսկ մարդկանց սրտերը ջերմացնելը, դահլիճի համակրանքն ու սերը շահելը»<sup>3</sup>:

<sup>3</sup> Заслуженный коллектив государственная хоровая капелла Армении, Ереван, 1989, стр. 10.

...Կապելլայի մոսկովյան հաղթական ելույթից հետո նրա առջև այլևս բաց են Խորհրդային Միության հեղինակավոր համերգասրահների դռները: Երգչախմբի մեծ բեմերը ողջունում է Արամ Խաչատրյանը. «Սա բարձրագույն կուլտուրայի փայլուն երգչախումբ է: Կապելլան գլխավորում է մեծ երաժիշտն ու կոմպոզիտորը: Այն ամենում, ինչ նա անում է, զգացվում է նորարարը... Հայաստանի պետական երգչախումբը կարելի է հյուրախաղերի ուղարկել ցանկացած երկիր: Նա հպարտորեն կտանի սովետական կուլտուրայի դրոշմը»<sup>4</sup>: Արձագանքում են “Музыкальная жизнь” ամսագիրն ու “Советская культура” թերթը:

Հայաստանի պետական երգչախմբի ազդագրերն այսուհետ Մոսկվայի երաժշտական կյանքում իրենց կայուն տեղն ունեն. Կրեմլի համագումարների պալատում, Միությունների տան սյունազարդ դահլիճում, Մեծ թատրոնում նրան ունկնդրում են Հ.Բաղդամյանը, Ա.Միկոյանը, Ա.Խաչատրյանը, Պ.Լիսիցյանը, Տ.Պետրոսյանը, մոսկովյան բազմազգ մտավորականության ընտրանին, արտասահմանյան հյուրերը:

Մոսկովյան դեբյուտից անցած 50 տարիների ընթացքում Մոսկվայում Մաեստրոն ունեցել է 90 համերգ: Հենց Մոսկվայում տեղի ունեցան վոկալ-սիմֆոնիկ մի շարք ստեղծագործությունների, այդ թվում՝ Բեռլիոզի «Requiem»-ի, Գաբրիել Ֆորեի «Requiem»-ի, Գունյի «Մահ և կյանք» օրատորիայի, Բեռլիոզի «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկական սիմֆոնիայի համամիութենական պրեմիերաները:

Ճիշտ 50 տարի է մեզ բաժանում այն օրերից, երբ 1964 թվականի հոկտեմբերի 29-ին, 30-ին, 31-ին և նոյեմբերի 1-ին Կապելլան Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ նվաճեց Լենինգրադը: Հընթացս չորս համերգների կատարվում են Մոցարտի «Requiem»-ը, Շոպենի C-dur

<sup>4</sup> Նույն տեղում:

կանտատը, իսկ համերգներից երկուսում a cappella ծրագիր էր: Լենինգրադի Մ.Գլինկայի անվան ակադեմիական կապելլայի խմբավար Վ.Բարանովը նկատեց. «Մեծ գովեստի է արժանի երգչախմբի գեղարվեստական ղեկավար, տաղանդավոր երաժիշտ Հովհաննես Չեքիջյանը. նրա կամքը, պարտիտուրի անթերի իմացումը, հատու ժեստերը, խմբավարի նուրբ զգացողությունը թույլ տվին նպատակամետ կերպով վարելու ամբողջ համերգը, ստեղծելու լավ անսամբլ և հուզական լարում: Երգչախումբը լենինգրադցիներին գերեց՝ ծրագրից դուրս կատարելով նաև Կոմիտասի երկու խմբերգերը: Այստեղ իրենց ամբողջ ուժով դրսևորվեցին երգչախմբի՝ այդ սքանչելի անսամբլի վարպետությունը, վճիտ հնչեղությունը, ազգային երանգը»<sup>5</sup>:

1964-ին սկիզբ առած բարեկամությունը Լենինգրադի ունկնդրի հետ շարունակվեց հետագայում. հաջորդեցին համամիութենական մի շարք պրեմիերաներ: Մաեստրո Չեքիջյանի ղեկավարությամբ երգչախումբը 97 համերգ է ունեցել Լենինգրադում, ի մասնավորի՝ Լենֆիլհարմոնիայի Շոստակովիչի անվան մեծ համերգասրահում, որից 70-ից ավելին՝ Եվգենի Մրավինսկու ղեկավարած սիմֆոնիկ նվագախմբի ընկերակցությամբ՝ բոլորն էլ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ<sup>6</sup>:

50 տարի առաջ էր, որ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ Կապելլան մեծ հաջողությամբ հանդես եկավ Մերձբալթյան հանրապետությունների քաղաքներում՝ Տալլինում, Տարտուում, Նարվայում, Վիլնյուսում, Կաունասում, Ռիգայում, Ռուսաստանի քաղաքներում՝ Կալինինգրադում, Չերնյախովսկում, Սվետլոգորսկում, Կիսլովոդսկում, Պյատիգորսկում, Եսենտուկիում, ինչպես նաև Բաքվում:

<sup>5</sup> **Բարանով Վ.**, Կոմիտասի հայրենակիցները երգում են Լենինգրադում, «Գրական թերթ», 4 դեկտեմբերի, 1964:

<sup>6</sup> **Ասատրյան Աննա**, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 45:



Ճիշտ 40 տարի առաջ՝ 1974 թվականին, տեղի ունեցան Կապելլայի արտասահմանյան առաջին հյուրախաղերը: Կապելլան համերգներով հանդես եկավ Լիբանանում (փետրվարի 2-17-ը) և Ֆրանսիայում (սեպտեմբերի 6-16-ը): Բեյրութը չունեի սիմֆոնիկ նվագախումբ, ուստի երգչախումբը, զրկված խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններ կատարելու հնարավորությունից, բավարարվեց a cappella ծրագրով: Նախատեսված հինգի փոխարեն տրվեց տասներկու համերգ: Սփյուռքահայ մամուլը շտապում է արձագանքել «Կոմիտասը տեսանք», «Իսկական դիմագիծը մեր կարելություններու», «Կբացվին մոգության և կախարդանքի դռները» հոդվածներով: «Ազդակը» գրեց. «Լիբանանահայությունը ինքզինք գտավ հրաշքի համագոր երևույթի դիմաց, երբ հայ երգը կերգվեր համաշխարհային գլոբալիզացիաներուն՝ Պախերու, Հենդելներու, Վերդիներու, Ռոսսինիներու կողքին, միևնույն հայտագրով, բայց մանավանդ՝ կատարելության հասնող զորությամբ, միևնույն անխոցելի ներդաշնակությամբ, բարձրագույն արվեստի մը միևնույն չափանիշներով»: Կապելլայի համերգներին է անդրադառնում «Monday morning» շաբաթաթերթը. «Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի դիրիժոր Հովհաննես Չեքիջյանն աշակերտել է մեծ վարպետների: Եթե դրան էլ հավելենք նրա բնատուր տաղանդն ու մարդկային հրաշալի որակները, ինչպես նաև ինքնատիպությունն ու յուրօրինակությունը, ապա պարզ կդառնա, որ գործ ունենք երաժշտական խոշոր մեծության հետ: ...Հովհաննես Չեքիջյանն իր արվեստը դրսևորում է երգչախմբի հետ զարմանալիորեն ամբողջական կապի մեջ: ...Հովհաննես Չեքիջյանին, իրավամբ, կարելի է համարել մեր ժամանակի տաղանդավորագույն դիրիժորներից մեկը»: «...Անչափելի է Հովհաննես Չեքիջյանի դերը որպես կոմպոզիտորի, դիրիժորի և Հայաստանի երաժշտական կյանքի ոգեշնչողի: Այս հրաշալի մաեստրոյի ղեկավարած երգչախումբը հարստացրել է իր երկացանկը ավելի քան 700 երաժշտական ստեղծագործություններով.

դրանց թվում են ռեքվիեմներ, կանտատներ, օրատորիաներ, սիմֆոնիաներ»,- գրեց Բեյրութի «La revue du Liban»-ը: Իսկ արաբական «Սաֆա»-ն փաստեց. «Բոլորին է հայտնի մարդկային ծայնի մոգական իշխանությունը: Երգչախմբի ղեկավարը մեզ գերեց հրաշալի կատարմամբ: ...Հովհաննես Չեքիջյանի դիրիժորական ժեստերը շատ բազմազան են: Նա իր երգիչներից պահանջում է առավելագույնը, ինչը նրան տրվում է առանց նկատելի ջանքերի»:

1974 թվականի սեպտեմբերի 6-ից 16-ը տեղի ունեցան Կապելլայի առաջին հյուրախաղերը Ֆրանսիայում՝ Փարիզում ու Մարսելում: Մեր գիտական նստաշրջանում «Հովհաննես Չեքիջյանը և Ֆրանսիան» թեմայով ունենք առանձին զեկուցում, և կարծում եմ՝ այդ հյուրախաղերին մանրամասն կանդրադառնա արվեստագիտության թեկնածու, դոցենտ Աննա Հարությունյանը:

Ճիշտ 30 տարի առաջ՝ 1984-ին, լույս տեսավ Մաեստրոյի մասին անդրանիկ մենագրությունը՝ Անժելա Հովհաննիսյանի «Հովհաննես Չեքիջյան» գիրքը, որին հաջորդեցին նրան նվիրված Սուսաննա Դավթյանի «Հովհաննես Չեքիջյան» գիրքը (2000), Ֆելիքս Բախչինյանի «Մաեստրոն» գրքույկը (2007), իմ հեղինակած «Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան» գիրքը (2009) և Սերգեյ Առաքելյանի «Հովհաննես Չեքիջյան» պատկերագիրքը (2014):

Եվ վերջապես՝ հոբելյանների շարքն ուզում եմ եզրափակել ևս մեկ կարևոր հոբելյանով. ճիշտ 45 տարի առաջ՝ 1969 թվականին, հայկական Կապելլան դարձավ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ:

Իսկ ամեն ինչ սկսվեց ճիշտ 53 տարի առաջ՝ բախտորոշ 1961-ին, երբ Փարիզի «Ecole normale de Musique» կոնսերվատորիայի և Ստամբուլի կոնսերվատորիայի ասպիրանտուրայի շրջանավարտ, Թուրքիայի միակ պրոֆեսիոնալ երգչախմբի՝ Ստամբուլի պետական կապելլայի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, Ստամբուլի պետական օպերային թատրոնի երաժշտական ղեկավար ու

գլխավոր խմբավար, սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը եկավ Հայաստան և սեպտեմբերի 5-ին ստանձնեց Հայաստանի պետական երգչախմբի ղեկավարությունը:

Երևանյան դեբյուտից ընդամենը երկու օր առաջ «Սովետական Հայաստան» օրաթերթին տված հարցազրույցում Հ.Չեքիջյանն ասաց. «Կթվա՝ արվեստագետի լիարյուն կյանքով կապրեի, բայց սրանք պարտականություններ էին, սիրտը, հոգին պետք է մասնակցեն արվեստին, այդ հոգին այստեղ էր, իմ երազային լուսավոր հայրենիքում, որի երգերը կարելի էր միայն գաղտնի լսել ռադիոյով: Երգերը լսում էի, ծայնագրում, հետո պարտիտուրա կազմում ու բազմացնելով տալիս մեծաթիվ հայկական երգչախմբի անդամներին: Ու հնչում էր հայկական երգը...»<sup>7</sup>:

Իրականացավ տակավին երիտասարդ, տաղանդաշատ ու եռանդուն դիրիժորի նվիրական երազանքը՝ արվեստագետի նրա կենսական հավատամքը. «Արվեստը պետք է ապրի տանտիրոջ պես, լինի իր օջախի, ծխի տերը, արմատներով իջնի հողի մեջ, սաղարթով ապրի իր երկնքում: Անհայրենիք արվեստ չկա և չի կարող լինել»:

Հ.Չեքիջյանը եկավ հայրենիք՝ ծառայելու հարազատ ժողովրդին: Իսկապես՝ Մաեստրոյի ապրած կյանքը շատ ուսանելի է և օրինակելի: Վերջին շրջանում մեզանում շատ են խոսում արտագաղթի մասին ու դա բացատրում երկրում առկա սոցիալ-տնտեսական դժվարություններով: Սակայն հայրենիքը յուրաքանչյուրիս համար մեկն է, և Հ.Չեքիջյանը 1961թ. գալով Երևան դժվար թե պատկերացներ, թե իրեն ինչ է սպասում այստեղ, բայց եկավ, որովհետև ուզում էր ու պետք է իր արվեստով ծառայեր ի՛ր ժողովրդին, ի՛ր հայրենիքին, Երևանում և հանրապետության շրջաններում յուրաքանչյուր համերգից հետո վայելեր ի՛ր հարազատ ժողովրդի ծափահարությունների բերկրանքը,

<sup>7</sup> «Նա իր լուսավոր հայրենիքում է», «Սովետական Հայաստան», 25 նոյեմբերի, 1961:

իսկ հյուրախաղերի ժամանակ հպարտորեն ներկայացնել ի՛ր հայրենիքը՝ Սովետական Միությունը, Հայաստանը, իր քաղաքը՝ Երևանը, որի պատվավոր քաղաքացին է նաև Մաեստրոն:

Այսօր էլ խիստ արդիական են հեռավոր 1962 թվականին Հ.Չեքիջյանի արտահայտած հետևյալ մտքերը. «Իմ անկեղծ ցանկությունս, իմ սրտագին մաղթանքս է, որ արտասահմանի մեր բոլոր տաղանդաւոր արուեստագէտները գան խմբուիլ հայրենի երկրին մէջ՝ ի շահ իրենց ստեղծագործական վերելքին եւ ի փառս մեր ժողովուրդին: Որովհետեւ հայրենի երկրին մէջ միայն հայ արուեստագէտը ունի ծաղկման ամենալայն հնարաւորութիւնները: Միայն հայրենի երկրիդ մէջ, հայրենի ժողովուրդիդ ծոցին մէջ ներշնչումդ կրնայ ըլլալ անմիջական եւ հարազատ, որովհետեւ ամէն օր շուրջդ կը տեսնես հայրենիքդ եւ ժողովուրդդ, կը լեցուիս անոնցմով, վերացական ապրումներդ այդպէսով կը դառնան շոշափելի բաներ, որոնք աւելի եւս կ'իմաստաւորեն զգացումներդ եւ մտածումներդ»<sup>8</sup>:

Դժվար է գուշակել, թե ինչպես կդասավորվեր Հ.Չեքիջյանի ստեղծագործական կյանքը, եթե նա չգար Հայաստան: Սակայն իր հայրենիքում հայ կատարողական արվեստի պատմության նոր էջը գրեց սեփական ձեռագրով՝ ստեղծելով չեքիջյանական ինքնատիպ ու անկրկնելի ձեռագիրը. չէ՞ որ Կապելլայի կատարումներն անվրեպ ճանաչվում են առաջին իսկ տակտերից: Իր խմբավարական արվեստում Հ.Չեքիջյանը հետևում է Կոմիտասի օրինակին՝ սահմանափակ միջոցներով հասնելով առավելագույն արտահայտչականության: Եվ այդ արվեստին նա տիրապետում է կատարելապես:

...Հայրենիքում Հ.Չեքիջյանի գործունեությունը նշանավորեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի տարեգրության

<sup>8</sup> Տե՛ս **Դարեան Արմեն**, Հայրենիքին մէջ. Յովհաննէս Չեքիջեանի հետ, Յառաջ-գրական, հուլիս, 1962, էջ 6-7:

Ոսկեդարը, երբ հայկական Կապելլան հասավ Խորհրդային Միության լավագույն երգչախմբերի մակարդակին՝ որոշ առումներով գերազանցելով նրանց: Տարիներ անց Արամ Խաչատրյանն իրավացիորեն պիտի փաստեր, որ Հ.Չեքիջյանը համաշխարհային ընդգրկման դիրիժոր է, ով ազգայինը վեր է ածել համազգայինի ու իր արվեստը դարձրել համամարդկային:

Ճշմարիտ է ասված՝ դիրիժորի բարդագույն արվեստը հնարավոր չէ սովորել. դիրիժոր չէ՛ն դառնում, դիրիժոր ծնվում են: Անտարակույս, դիրիժորի փայտիկը ձեռքին ծնվեց Հ.Չեքիջյանը Ստամբուլում 1929-ի հունվարի 23-ին, Կոմիտասի երգչախմբի կրտսեր անդամ Հարություն Չեքիջյանի հարկի տակ: Աստվածատուր տաղանդով օժտված պատանին ստանում է փայլուն մասնագիտական կրթություն, Փարիզում աշակերտում Փարիզի օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր Ժան Ֆուրնեին: Եվ Ֆուրնեի արժանավոր սանը պիտի՝ արձանագրեր աննախընթաց հաջողություններ, քանզի բացառիկ տաղանդի ու մասնագիտական հիմնավոր գիտելիքների հետ մեկտեղ նա աչքի էր ընկնում նախանձելի աշխատասիրությամբ: 1961-ի նոյեմբերի 27-ից՝ հայրենիքում Մատենոյի դեբյուտից, անցան 53 արգասաբեր ու բեղմնավոր տարիներ: Հայաստանի պետական երգչախումբը հզորացավ ու աշխարհին ներկայացավ հայ և համաշխարհային խմբերգային երաժշտության անգին գոհարների բարձրարժեք կատարումներով:

Հ.Չեքիջյանի ղեկավարած երգչախումբը միակն է համաշխարհային երգչախմբային արվեստում, որը բեմում երգում է առանց նոտաների, դրանցից չի օգտվում անգամ խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարման ժամանակ՝ ղեկավարվելով «բեմ բարձրացողը նոտաներն իր սրտում ու մտքում պետք է ունենա և ոչ թե ձեռքին» չեքիջյանական նշանաբանով:

Կատարողական բարձր արվեստի և ստեղծագործական ծանրակշիռ նվաճումների համար Հայաստանի պետական երգչախումբը

հիմնադրումից ընդամենը երեսուներեք տարի անց՝ 1969-ին, արժանացել է «Ակադեմիական» բարձր, սակավադեպ շնորհվող կոչմանը, իսկ 1975-ին դարձել Հայաստանի վաստակավոր կոլեկտիվ: Իսկ բոլորովին վերջերս մեր վաստակաշատ կոլեկտիվին շնորհվեց Ազգային երգչախմբի կարգավիճակ:

Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ Կապելլան հյուրախաղերով՝ 864 համերգներով հանդես է եկել Հայաստանի սահմաններից դուրս՝ աշխարհի 184 քաղաքներում՝ նախկին Խորհրդային Միության հանրապետություններում, Լիբանանում, Ֆրանսիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Սիրիայում, Իսպանիայում, Շվեյցարիայում, Թուրքիայում, Արգենտինայում, Ավստրալիայում:

Երգչախմբի հարուստ երկացանկում են Բախի, Հենդելի, Մոցարտի, Բեթհովենի, Շոպենի, Բելինիի, Ռոսինիի, Վերդիի, Վագների, Մենդելսոնի, Բրամսի, Բելլինոզի, Գունդի, Ֆորեի, Սմետանայի, Գերշվինի, Գլինկայի, Բորոդինի, Մուսորգսկու, Չայկովսկու, Տանենի, հայ դասական կոմպոզիտորների՝ Կոմիտասի, Եկմալյանի, Կարա-Մուրզայի, Կանաչյանի, Չուխաճյանի, Տիգրանյանի, Սպենդիարյանի, ինչպես նաև ժամանակակից հեղինակների՝ Շոտակովիչի, Խաչատրյանի, Խրեննիկովի, Սվիրիդովի, Կաբալևսկու, Շչեդրինի, Բաբաջանյանի, Հարությունյանի, Ալան Հովհաննեսի, Միրզոյանի, Հովհաննիսյանի, Հախինյանի և էլի շատ-շատերի ավելի քան 700, այդ թվում՝ խոշոր կտավի շուրջ 40 ստեղծագործությունները (դրանցից 15-ը կատարվել են Խորհրդային Միությունում առաջին անգամ). դրանք ներկայացնելով բնագրով՝ Կապելլան երգում է աշխարհի 27 լեզուներով:

Կապելլան համերգներով հանդես է եկել աշխարհի 67 առաջնակարգ նվագախմբերի, այդ թվում՝ ԽՍՀՄ պետական ակադեմիական սիմֆոնիկ, ԽՍՀՄ Մեծ թատրոնի սիմֆոնիկ, Մոսկվայի պետա-

կան ֆիլիարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ, Լենինգրադի ֆիլիարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ, Բուդապեշտի ֆիլիարմոնիայի սիմֆոնիկ, Վրոցլավի ֆիլիարմոնիայի սիմֆոնիկ, Մարսելի օպերայի սիմֆոնիկ նվագախմբերի հետ:

Երգչախմբի համերգներին հիացական հողվածներով արձագանքել, գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր, խմբերգային արվեստի ականավոր վարպետ, «խմբերգային փայտիկի հրաշագործ», «երաժշտության մոգ» Հ.Չեքիջյանի գործունեությունն ըստ արժանվույն գնահատել են աշխարհի բազմաթիվ հեղինակավոր թերթեր ու հանդեսներ: Դրանցում տպագրված հողվածների թիվը գերազանցել է 1120-ի բնագիծը:

Եվ այդ ամենը՝ շնորհիվ Հ.Չեքիջյանի, շնորհիվ Կապելլայի արտիստների:

Հ.Չեքիջյանի ստեղծագործական դիմանկարն ամբողջացնելու համար խմբավարի ու դիրիժորի բեղմնավոր գործունեությանը պետք է հավելենք նաև արդյունաշատ գործունեությունը Երևանի Ալ.Սպենդիարյանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, որի գեղարվեստական ղեկավարը և դիրեկտորն էր 1982-1987 թվականներին:

Քչերին է հայտնի, որ Հ.Չեքիջյանը նաև կոմպոզիտոր է, ում գրչին են պատկանում Սիլվա Կապուտիկյանի խոսքերով գրված «Ազատության դողանջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը (1963)՝ նվիրված Ա.Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին և «Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը (1975)՝ գրված Վահան Տերյանի քնարական բանաստեղծությունների հիման վրա երկու մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար, որը հաջողությամբ հնչել է ոչ միայն Երևանում, այլև Լենինգրադում, Մոսկվայում, Փարիզում:

Իր կատարողական, համերգային, ստեղծագործական, կազմակերպական, մանկավարժական գործունեությանը զուգահեռ Հ.Չեքիջ-

յանը զբաղվել է ակտիվ հասարակական գործունեությամբ. ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատ (1979-1984), Հայկական ԽՍՀ Իններորդ, Տասներորդ և Տասնմեկերորդ գումարումների Գերագույն խորհրդի դեպուտատ (1975-1990):

Հայրենիքը բարձր է գնահատել Մաեստրոյի վաստակը. պրոֆեսոր Հ.Չեքիջյանին շնորհվել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի (1967), ԽՍՀՄ ժողովրդական արտիստի (1978), Երևանի պատվավոր քաղաքացու (2001) կոչումներ: Նա արժանացել է ԽՍՀՄ (1975) և ՀԽՍՀ (1979) պետական մրցանակների, ֆրանսիական Charles Gros ակադեմիայի «Գրան Պրի» մրցանակին, Մոնտրոյի միջազգային փառատոնի «Հանդիսատեսի համակրանք» մրցանակին, Հայկական միջազգային «Կարոտ» փառատոնի մեծ մրցանակին, պարգևատրվել է «Աշխատանքային Կարմիր դրոշի», «Ժողովուրդների բարեկամության», «Մեսրոպ Մաշտոց», «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ», «Ադամանդակուռ Ոսկե խաչ», «Ադամանդակուռ Արարատ», Պատվո շքանշանով ու էլի շատ ու շատ շքանշաններով ու մեդալներով:

Ձեկուցումս ուզում եմ ավարտել մարդկության ապագայով խորապես մտահոգ և իսկական հումանիստ Հ.Չեքիջյանի հետևյալ խոսքով. «Մեր ժողովուրդը, որ ամենից շատ է տառապել ազգերի աններդաշնակությունից, չի կարող չերազել մարդկային ցեղերի միջև հաշտության, ներդաշնակության մասին: Ես էլ ականա երազում եմ այն օրը, երբ միաձուլվի համերգում կիյուսվեն մարդկային ծայները, կինչեն համերաշխ, և մարդկության երգը կողողի բոլոր պատները: Սակայն որքան էլ քաջ երազող, հասկանում եմ, որ այդ համերգից մեզ մեծ ժամանակ է բաժանում, և այն ունկնդրելու «երջանիկ տոմսերը» կտակում եմ սերունդներին»<sup>9</sup>:

<sup>9</sup> Առաքելյան Սերգեյ, Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2014, էջ 597:

**ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ**

*արվեստագիտության թեկնածու,  
Խ. Արուսյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ**

Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի առնչությունների մասին զեկուցումն ուզում եմ սկսել ակադեմիայի երկրորդ պրեզիդենտ, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի հետևյալ խոսքերով. «Հովհաննես Չեքիջյանը հայ երաժշտության երկնակամարում փայլատակող նորահայտ աստղ է: Նա եկավ, որպեսզի աշխարհին լսելի դարձնի մեր Կոմիտասի իրական երգը՝ հռչակելով և՛ իրեն, և՛ իր ժողովրդին»<sup>1</sup>:

Հովհաննես Չեքիջյան անհատի և երաժշտի մասին կարծես թե ամեն ինչ ասված է. անհաշվելի քանակությամբ են շուրջ կեսդարյա ժամանակագրություն ունեցող հոդվածները, մենագրությունները, մամուլի անդրադարձները. թվում է՝ այլևս ոչինչ հնարավոր չէ ավելացնել այն ամենին, ինչն արդեն ժամանակի փորձության և արժևորման միջով է անցել: Այն բազմաբեղուն, հայրենանվեր և արվեստանվեր գործունեությունը, որ ցայսօր իրականացնում է այս անհատնում տաղանդի տեր արվեստագետը, հարկավ, արժանի է ժամանակի ամենաբարձր գնահատանքին և հիացումին:

Տարիներ ու տասնամյակներ շարունակ Հովհաննես Չեքիջյանի գործունեությունը գտնվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի մասնագետների տեսադաշտում: Սրանից ուղիղ կես դար առաջ՝ 1964-ին,

<sup>1</sup> Հովհաննես Չեքիջյանի անձնական արխիվ:

Լևոն Հախվերդյանը գրեց «Մի զարմանալի «Անուշ»»<sup>2</sup> հոդվածը մարտի 31-ին տեղի ունեցած «Անուշ» օպերայի համերգային կատարման մասին, որը ղեկավարել էր հայրենիքում ընդամենը երեք տարի առաջ հաստատված Մաեստրոն:

1967-ին Հ. Չեքիջյանին շնորհվում է Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում: Այդ կապակցությամբ Արվեստի ինստիտուտի դիրեկտոր Ռուբեն Զարյանն ինստիտուտի գիտաշխատողների անունից շնորհավորական ուղերձ է հղում Մաեստրոյին, որտեղ մասնավորապես ասված էր. «Սիրելի՛ արտիստ: Արվեստի ասպարեզի շատ գործիչներ վերջին շրջանում արժանացան պատվավոր կոչումների: Ամեն մարդ իր կոչման տերն է, իր կոչման արդարացնողը, և այդ կոչումն այն ժամանակ է հնչում ըստ արժանվույն, երբ արդարացման և ապացույցի կարիք չի զգում: Դուք հանրապետության ժողովրդական արտիստ եք առանց վերապահության և տարակուսանքի, քանի որ այդ համարումն ու վաստակն ունեք վաղուց ի վեր՝ Ձեր գործով, հայ երաժշտությունը պանծացնողիդ ձիրքով, Ձեր զարմանալի արտիստականությամբ: Ուրեմն թո՛ւյլ տվեք Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի անունից շնորհավորել Ձեզ այդ բարձր կոչմանն արժանանալու համար և նոր հաջողություններ ցանկանալ Ձեր արվեստը ժողովրդին արժանացնելու Ձեր նվիրական գործում»<sup>3</sup>:

Տարբեր թվականներին միմյանց հաջորդել են Արվեստի ինստիտուտի երաժշտագետների անդրադարձները, այդ թվում՝ Անահիտ Գրիգորյանի «Արվեստը ծառայում է ժողովրդին»<sup>4</sup> և «Энергия таланта.

<sup>2</sup> Հախվերդյան Լ., Մի զարմանալի «Անուշ», «Գրական թերթ», 3 ապրիլի, 1964:

<sup>3</sup> Հ. Չեքիջյանի անձնական արխիվ:

<sup>4</sup> Գրիգորյան Ա., Արվեստը ծառայում է ժողովրդին, «Պղնձի համար», 29 հոկտեմբերի, 1970:

На соискание Государственной премии СССР»<sup>5</sup>, Մարգարիտա Ռուֆսկյանի «Концерты дружбы»<sup>6</sup>, «Варпет»<sup>7</sup> և «Նվիրվում է երգչախմբային արվեստին»<sup>8</sup>, Մարգարիտ Տեր-Սիմոնյանի «Вдохновенный мастер. На соискание Государственной премии СССР»<sup>9</sup> և «Посвящается хоровому искусству»<sup>10</sup>, Գևորգ Գյոդակյանի «Лауреаты Государственной премии. Все краски хора...»<sup>11</sup>, Նիկողոս Թահմիզյանի «Հայաստանի Պետական Երգչախումբն ու Նրա Քառորդ-դարեայ Գեղարուեստական Ղեկավարը՝ Յովհաննէս Չեքիջեան»<sup>12</sup> և «В русле вековых традиций»<sup>13</sup>, Աննա Ասատրյանի «Հայ խմբերգային արվեստը և Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը»<sup>14</sup>, «Ամենայն Հայոց մաէսթրոն՝ Յովհաննէս Չեքիճեան. Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հիմնադրման 70-ամյակի առթիւ»<sup>15</sup>, «Հայաստանի պետական

<sup>5</sup> Григорян А., Энергия таланта. На соискание Государственной премии СССР, «Советская культура», 3 сентября, 1974.

<sup>6</sup> Рухкян М., Концерты дружбы, «Коммунист», 31 мая, 1974.

<sup>7</sup> Рухкян М., Варпет, «Музыкальная академия», 2005, N1, стр. 154.

<sup>8</sup> Рухкян М., Посвящается хоровому искусству, «Эфир», 24.12-30-12, 20 декабря, 2007.

<sup>9</sup> Тер-Симонян М., Вдохновенный мастер. На соискание Государственной премии СССР, «Коммунист», 6 октября, 1974.

<sup>10</sup> Տեր-Սիմոնյան Մ., Երգչախմբային արվեստի վարպետը, «Սովետական Հայաստան», 16 նոյեմբերի, 1975:

<sup>11</sup> Геодакян Г., Лауреаты Государственной премии. Все краски хора..., «Коммунист», 18 ноября, 1975.

<sup>12</sup> Թահմիզեան Ն., Հայաստանի Պետական Երգչախումբն ու Նրա Քառորդ-դարեայ Գեղարուեստական Ղեկավարը՝ Յովհաննէս Չեքիջեան, «Asbarez», English Edition, August 1, 1987.

<sup>13</sup> Тагмизян Н., В русле вековых традиций, «Комсомолец», 26 января, 1989.

<sup>14</sup> Ասատրյան Ա., Հայ խմբերգային արվեստը և Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը, «Ազգ», 2 հունիսի, 2007:

<sup>15</sup> Ասատրյան Ա., Ամենայն Հայոց մաէսթրոն՝ Յովհաննէս Չեքիճեան. Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հիմնադրման 70-ամյակի առթիւ, «Կամար», գրականութեան եւ գեղարուեստի անկախ պարբերաթերթ, Պէյրուօ, 4, 2007, էջ 95-99:

ակադեմիական երգչախմբի լեհինգրադյան հյուրախաղերը»<sup>16</sup> հողվածները և բազմաթիվ այլ օրինակներ:

Իրապես, հայ ժողովրդի տաղանդավոր զավակի՝ մեծատաղանդ Մաեստրոյի լայնահուն, հավաքական էությունը շարունակում է հետաքրքրել հետազոտողներին՝ անկախ տարիքից, մինչ օրս ծնունդ տալով նորանոր ուսումնասիրությունների:

Պատահական չէ, որ արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուֆսկյանն իր հողվածներից մեկում գրում է. «Հովհաննէս Չեքիջեան... Մեկն այն անհատներից, որոնց անվանում են հրաշալի և տարողունակ մի բառով՝ Վարպետ: Պրոֆեսիոնալ վարպետություն՝ իր հերթին, բայց Վարպետը ֆունդամենտալ հասկացություն է, ներառող և՛ վարպետի աշխատանքի ծավալը, և՛ այն արձագանքը, որ ստանում է նրա գործունեությունը: Վարպետ գեղարվեստական երևույթը առանց իրեն շրջապատող հսկայական մթնոլորտի չի լինում: Բոլորը նրան ճանաչում են, բոլորը հարգում են, նա ունի հետևողներ-աշակերտներ և երկրպագուներ, նա որոշակի պահին դառնում է իր ազգի մշակույթի խորհրդանիշը, և այդ պատճառով Վարպետը մշտապես պետք է լինի աշխատանքի, շարժման մեջ, նա պետք է լավատես լինի, նրան վայել չէ կանգ առնել և հանգստանալ: Վարպետը դատապարտված է հաջողության»<sup>17</sup>:

2007-ից Հովհաննէս Չեքիջեանի և ՀՀ ԳԱԱ միջև համագործակցությունը է՛լ ավելի սերտացավ, և պատահական չէ, որ Կապելլայի 70-ամյա անցած ուղու մասին գիրքը վստահվեց Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանին. «Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ»

<sup>16</sup> Ասատրյան Ա., Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի լեհինգրադյան հյուրախաղերը, Մշակույթների երկխոսություն, Հայ-ռուսական մշակութային կապեր (Պատմություն և արդիականություն), միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2008, էջ 87-91:

<sup>17</sup> Рухкян М., Варпет, «Музыкальная академия», 2005, N1, стр. 154.

գիրքը<sup>18</sup> պետական պատվերի շրջանակներում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս տեսավ 2007-ի դեկտեմբերին: Մենագրության մեջ արխիվային վավերագրերի, համապատասխան գրականության, հայաստանյան, սփյուռքահայ, խորհրդային և արտասահմանյան մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա առաջին անգամ լուսաբանվել են վաստակավոր կոլեկտիվի ստեղծման նախադրյալները, կայացումն ու անցած ստեղծագործական 70-ամյա փառապանծ ուղին, բացահայտվել են Կապելլայի համերգային գործունեության վառ էջերը: Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ Հ.Չեքիջյանի ծննդյան օրը՝ 2007 թվականի դեկտեմբերի 23-ին, Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում և ուղեկցվեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի փառահեղ համերգով:

Իսկ մինչ այդ՝ 2007-ի մայիսի 16-ին, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հիմնադրման 70-ամյակին նվիրված կառավարական հրեյանական հանձնաժողովի կողմից հաստատված հրեյանական միջոցառումների շարքի երկրորդ միջոցառումը՝ Կապելլայի պատմությանը նվիրված անդրանիկ գիտաժողովը, որ կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը: ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը Կապելլան անգերազանցելի բարձունքների հասցնելու և համաշխարհային ճանաչման արժանացնելու, մեծն Կոմիտասի գործը շարունակելով՝ հայ դասական խմբերգային երաժշտությունը ամբողջ աշխարհում պրոպագանդելու համար մատուրո Հ. Չեքիջյանին հանձնեց ՀՀ ԳԱԱ բարձրագույն պարգևը՝ «ՀՀ ԳԱԱ հուշամեդալը (N 35)», որին արվեստի բնագավառի գործիչներից ՀՀ ԳԱԱ գոյության տարիների ընթացքում արժանացել են ընդամենը երկուսը՝ ԻՍՀՄ ժողովրդական արտիստներ, կոմպոզիտորներ Ալեք-

<sup>18</sup> Ասատրյան Ա., Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ, Երևան, 2007:

սանդր Հարությունյանը և Էդվարդ Միրզոյանը: Հոբեյանական միջոցառման ավարտին ՀՀ ԳԱԱ նախագահության կամարների ներքո առաջին անգամ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ հնչեց Մ.Եկմալյանի «Ով, Հայոց աշխարհ» խմբերգը<sup>19</sup>:

2008-ից Մատուրոն ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է<sup>20</sup>:

2008-ի նոյեմբերի 28-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված հրեյանական հանդիսավոր նիստի ավարտին՝ բազմաթիվ շնորհավորական ուղերձներից և ողջույնի խոսքերից հետո, Ելույթ ունեցավ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը Մատուրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Համերգը բացառիկ էր. ինստիտուտի հիսնամյա պատմության մեջ առաջին անգամ Կապելլան մի ամբողջ համերգային ծրագիր նվիրեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հոբեյար գիտնականներին<sup>21</sup>:

2009 թվականի հունվարի 30-ին Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի է ունենում վաստակաշատ Մատուրոյի 80-ամյակին նվիրված միջոցառումը, որի ընթացքում հոբեյարին ողջունում է ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը և նրան է հանձնում ՀՀ ԳԱԱ նախագահության շնորհավորական ուղերձը, որտեղ մասնավորապես նշված էր. «Թուրքիայում դիրիժորական փայլուն ապագայի հեռանկարը թողած՝ 1961-ին Դուք տեղափոխվեցիք Երևան: Երևանում հաստատվելուն պես Ձեր կյանքն անխզելիորեն կապվեց Հայաստանի պետական երգչախմբի հետ, ինչն էլ նշանավորեց Կա-

<sup>19</sup> Ասատրյան Ա., Ամենայն հայոց մատուրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 107-109:

<sup>20</sup> Ասատրյան Ա., ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ - 50, Երևան, 2010, էջ 178:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 13:

պելլայի տարեգրության Ոսկեդարը, երբ հայկական Կապելլան հասավ ԽՍՀՄ լավագույն ակադեմիական երգչախմբերի մակարդակին՝ որոշ առումներով գերազանցելով նրանց, ու ձեռք բերեց միջազգային ճանաչում և համաշխարհային հռչակ: Իր ավելի քան 70-ամյա արդյունաշատ ղեկավարությամբ էլ գրեց իր տարեգրության փառավոր էջերը՝ աշխարհին ներկայացնելով հայ և համաշխարհային խմբերգային երաժշտության փայլուն կատարումները: Ձեր բարձրակարգ պրոֆեսիոնալիզմի, բացառիկ աշխատասիրության, խստագույն պահանջկոտության, գործին ու հայրենիքին անմնացորդ նվիրումի շնորհիվ Դուք ապահովեցիք Կապելլայի սրընթաց վերելքը. Կապելլան դարձավ ու մնաց հայ խմբերգային երաժշտության չգերազանցված գագաթը, հայրենական երաժշտարվեստի փառքերից մեկը: Եվ արդեն քանի-քանի սերունդների համար Հովհաննես Չեքիջյան և Կապելլա հասկացությունները նույնացել են. անհնար է պատկերացնել մեկն առանց մյուսի, և արդեն ժամանակն է, որ Կապելլան այսուհետև կրի Ձեր անունը»<sup>22</sup>:

Այդ նույն 2009-ին լույս է տեսնում Արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Ադայանի «Քաջագի մշտավառ կանթեղը» աշխատությունը՝ նվիրված ամերիկահայ անվանի գեղանկարիչ Քաջագունի Քեչեճյանին: Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ 2009 թվականի հոկտեմբերի 25-ին Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, որը կրկին եզրափակվեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի ելույթով՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Երգչախումբը հանդես եկավ կոմիտասյան խմբերգերի փայլուն կատարմամբ<sup>23</sup>:

Մաեստրոյի ծննդյան 80-ամյա հոբելյանի կապակցությամբ նախատեսված՝ Հովհաննես Չեքիջյանի կյանքի և ստեղծագործական

ուղու մասին պատմող գրքի ստեղծումը վստահվում է Աննա Ասատրյանին<sup>24</sup>. Գիրքը լույս է տեսնում 2009-ին: Գրքում հեղինակն առանձնակի հմտությամբ է շարադրում տաղանդաշատ արվեստագետի կյանքի և ստեղծագործական գործունեության բոլոր հիշարժան դրվագները. ընթերցողն ակամայից մասնակից է դառնում այն բազմաթիվ և նշանակալի իրադարձություններին, որոնցով այնքան հարուստ են նշանավոր արվեստագետների կենսագրությունները: Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ 2010 թվականի հունիսին Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում և ուղեկցվեց Կապելլայի համերգով:

Մաեստրոն մշտապես պատրաստակամ է թե՛ իր ներկայությամբ, թե՛ երգչախմբի ելույթներով աջակցել և մասնակցել ՀՀ ԳԱԱ-ի միջոցառումներին: Չի անտեսում նաև երիտասարդ գիտնականներին և նրանց նախաձեռնությունները: Դրա վառ ապացույցն է 2012-ի դեկտեմբերի 12-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում կայացած երիտասարդ գիտնականների ջանքերով կազմակերպված Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությանը նվիրված համերգը, որն իր ներկայությամբ պատվեց հարգելի Մաեստրոն: Համերգի ընթացքում Հայաստանում առաջին անգամ գիտական աշխատանքով զբաղվող երգիչների և դաշնակահարների կատարմամբ ներկայացվեցին էջեր Տ. Չուխաճյանի կամերային ստեղծագործություններից՝ մեներգեր ու դաշնամուրային պիեսներ: Համերգը կազմակերպել և վարում էր տողերիս հեղինակը<sup>25</sup>:

2013-ին ՀՀ ԳԱԱ 70-ամյակի կապակցությամբ արվեստի ինս-

<sup>24</sup> Ասատրյան Ա., Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009:

<sup>25</sup> Համերգի մասին տե՛ս Ասատրյան Ա., Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործության վերածնունդը, «Պատմաբանասիրական հանդես», 2012, N 3 (191), էջ 264-266: Նույնի՝ Համերգ «Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությունը», Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջան՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին (19-21 հոկտեմբերի, 2012), Նստաշրջանի նյութեր, Երևան, 2013, էջ 15-18:

<sup>22</sup> Ասատրյան Ա., Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, էջ 14-15:

<sup>23</sup> Ասատրյան Ա., ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ - 50, էջ 178-179:



տիտուտը առաջարկություն ներկայացրեց հոբեյանական միջոցառումների անցկացման շրջանակում ակադեմիային նվիրել իր պատմության մեջ առաջին հիմնը: Աննա Ասատրյանի խնդրանքով կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, այժմ՝ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, համագործակցելով տեքստի հեղինակ, Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Կարո Վարդանյանի հետ, կարճ ժամանակում ստեղծեց ՀՀ ԳԱԱ հիմնը՝ սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի համար նախատեսված վառ և տպավորիչ վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունը:

Եվ կրկին պատրաստական Մատթոռն Արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանի և Աննա Ասատրյանի խնդրանքով ձեռնամուխ եղավ հիմնի կատարման իրականացմանը: Հիմնի պրեմիերան տեղի ունեցավ 2013-ի հոկտեմբերի 15-ին՝ Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին նվիրված հոբեյանական հանդեսի ժամանակ: Ունկնդիրների ջերմ և հիացական ընդունելությանն արժանացած հիմնը կատարեցին Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը և Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ հուշամեդալի ասպետ, ՀՀ ԳԱԱ գիտական խորհրդի անդամ, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ<sup>26</sup>:

Լիահույս ենք, որ այս գեղեցիկ և արդյունավետ համագործակցությունը դեռ երկարատև ճանապարհ կունենա՝ մեզ նվիրելով նորանոր և յուրօրինակ նախաձեռնություններ ու միջոցառումներ:

<sup>26</sup> Տե՛ս **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ հիմնը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, Երևան, 2014, էջ 353-354:

**МАРГАРИТА РУХКЯН**

*Заслуженный деятель искусства РА,  
доктор искусствоведения,  
Институт искусств НАН РА*

**ОГАНЕС ЧЕКИДЖЯН КАК ТОРЖЕСТВО КЛАССИЧЕСКОЙ ХОРОВОЙ  
ТРАДИЦИИ**

Трудно переоценить деятельность Оганеса Чекиджяна, вот уже 50 с лишним лет являющегося художественным руководителем и дирижером Армянской Государственной капеллы Армении. Его талант и его призвание по стечению счастливых обстоятельств своевременно оказались на службе армянского искусства. То обстоятельство, что молодой талантливый музыкант, уже состоявшийся, занимающий должность руководителя Стамбульской хоровой капеллы, и к тому же – художественный руководитель Стамбульского оперного театра оказался в числе других, жаждущих продолжить дело первопроходцев армянского хорового искусства, было не случайным. К этому вела армянская история, история развития армянской культуры и армянской музыки.

Армянские первопроходцы в развитии новой профессиональной музыки Армении были все оснащены хорошим классическим образованием.

В начале XX века Макар Екмалян завершает курс образования при Петербургской консерватории, Комитас заканчивает учение в Германии и приезжает в Эчмиадзин. За это короткое время своего пребывания в Европе Комитас успеваеет покорить организованными им хорами и своими хоровыми обработками народных песен самого статусного европейского слушателя в Германии, в Швейцарии, во Франции, в том числе композитора Клода Дебюсси и писателя Ромена Роллана. Уже появились сподвижники Комитаса, активные пропагандисты хорового

искусства, организующие хоры в армянских поселениях, даже глухих деревнях, самый активный из них – выдающийся деятель армянской музыки Христофор Кара-Мурза.

В 1907 году из Тифлиса в Петербург для учения в консерватории отправляется молодой Арам Тер-Ованесян, впоследствии руководитель Хоровой капеллы Армении. В 40 – 50-ые годы XX века будущий и нынешний руководитель Государственной капеллы Армении Оганес Чекиджян набирается знаний в Париже, заканчивает аспирантуру Стамбульской консерватории.

До сих пор, знакомясь историей музыки древней и средневековой Армении, приходится удивляться скорости того процесса, который соединил армянскую музыкальную культуру с европейской. Для этого нужна была фантастическая убежденность и воля тех, кто посчитал это обязательным. И характерно, что эту миссию единения с традициями европейской классики, а значит – с мировой музыкальной культурой, первой взяла на себя хоровая музыка.

И в этом тоже была определенная закономерность. Искусство для Армении с середины XIX века было не просто искусством, но средством защиты своей идентичности. Оно должно было нести в себе энергию самозащиты и выражаться самым динамичным образом. Искусство хора было создано для этого. Это прекрасно понимал Комитас и его сподвижники. Кроме того, искусство хора обещало глубинное и проникновенное прочтение Священного писания на основе созданных на протяжении многих веков духовных монодий. Так появились *Литургия* Макара Екмаляна и *Литургия* Комитаса, выражая главное составляющее армянского менталитета.

Организация хорового искусства, вначале в виде импровизационных хоров в армянских поселениях, а потом – в рождении Хоро-

вой капеллы Армении, заложила фундамент новой армянской профессиональной музыки, а по существу – новой музыкальной культуры.

Комитасом в его хорах были сформулированы главные функциональные составляющие национальной гармонии. Для этого перехода из монодического пения в область многоголосия требовался гений. И сегодня наш слух каждую армянскую монодию уже плавно перекладывает в это комитасовское гармоническое русло. Конечно, широкие знания мировой музыкальной культуры, наконец, течение времени, приносящее новые музыкальные идеи, расширяло границы функциональных гармонических связей. Но кварто-квintовый принцип образования гармонической основы, звукоряды с перемежающимися тониками, образующими тайную многослойность, способную расшифроваться в виде имитаций или полифонических линий, альтерации, обогащающие гармонию, легко гармонизируют армянскую монодию в самобытную гармоническую вертикаль.

Кроме того, хоровое искусство легко проецировалось в разные музыкальные жанры. В этом отношении хоровое искусство везде представляло фундаментальной основой профессиональной музыкальной культуры – и в Германии, и во Франции, и в России, везде. И везде хор влиял и развивал инструментальную музыку и, в частности, оркестр.

Я сегодня вижу огромную роль хорового искусства в развитии армянского симфонизма. Но чтобы хор не только вдохновлял, но и дарил творческие идеи, воспитывал вкус, расширял русло композиторского творчества, нужны были великие музыканты-исполнители, творцы-дирижеры и хормейстеры, какими был Арам Тер-Ованесян и каким стал Оганес Чекиджян.

Так, хоровая традиция стала самой фундаментальной традицией в армянской музыке. Конечно, и потому, что хор для Армении значил

очень многое уже и в социально-политической сфере. Хор для Армении имел силу объединяющую нацию, консолидирующую ее. Хор и участие в хоре давало осознавать народу то единение, которое он не чувствовал ни в чем другом, разве что в войне. Хор поистине воплощал в себе силу сопротивления. В спонтанной организации хора, в импровизационной манере работы с хором возникало ни с чем не сравнимое национальное единение на уровне глубинного, генетического художественного сознания. Мы даже не можем представить себе, чем был хор для простых крестьян, знающих только инструментальные наигрыши и народные песни, для крестьян, которых неутомимый Кара-Мурза в свое время объединял в певческие бригады.

Созданная в 1936 году Хоровая капелла Армении стала неким посланием армянскому народу, которое вовсе не развлекало народ, а воспитывало его в новых мировых координатах. Сегодня мне кажется, что в развитии симфонизма в Армении главную роль сыграло не создание симфонического оркестра, а хоровая капелла, в репертуаре которой были хоры Комитаса – то самое, что формировало национальный слух, так же, как искусство Баха формировало немецкий слух.

Хор, руководимый Оганесом Чекиджяном с 1961 года, несомненно должен был взрастить новое поколение симфонистов. К этому времени уже были созданы симфонии Аро Степаняна, *Первая симфония* Григора Егиазаряна, *Первая симфония* Эдгара Оганесяна, *Первая симфония* Дживана Тер-Татевосяна, в 1962 году прозвучала *Первая симфония* Эдварда Мирзояна для камерного оркестра и литавр. Это было время взрыва композиторских сил, щедрой отдачи талантов. Работал Филармонический оркестр, переживал свой расцвет Театр оперы и балета. Но рядом возвышалась Государственная хоровая капелла Армении, которая держала верный камертон армянского музыкального слуха и слога.

Так, параллельно со все возрастающей славой армянской капеллы в 1972 году появляются *Вторая симфония* Авета Тертеряна для хора и оркестра и *Третья симфония* Ваграма Бабаяна, созданная по мотивам поэмы Аветика Исаакяна «Абул Ала Маари» для симфонического оркестра и смешанного хора. В 1978 году Ерванд Еркян пишется *Вторую симфонию «Айк и Белл»* для большого симфонического оркестра, хора и чтеца, а в 1984-ом – *Третью симфонию* для большого симфонического оркестра, детского голоса дисканта и большого смешанного хора. В 1960-70-ые годы создается большое количество кантат и ораторий для хора и оркестра, или только для хора, из под пера Эдгара Оганесяна рождаются великолепные хоровые обработки народных песен, которые он предполагал сложить в своеобразную хоровую симфонию, прекрасно работает для хора Ерванд Еркян, создавая высокохудожественные обработки народных песен. Написаны десятки и сотни больших массовых песен для хора, монументальных вокально-симфонических произведений.

Хоровые жанры в 1960 – 80-ые годы занимают в армянской музыке первые позиции. Отголоски этой традиции отдаются и в трудное для композиторов современное время. Несколько лет тому назад молодой композитор Ваче Шарафян создал впечатляющую *Литургию* для смешанного хора и камерного оркестра, прозвучавшую с большим успехом под управлением Эдуарда Топчяна. К хору, как к тонкому и мощному инструменту, обращается во многих своих сочинениях талантливый Вардан Аджемян, у которого даже есть *Концерт для фортепиано, хора и оркестра*. В этом постоянстве хорового участия в творчестве армянских композиторов отражены огромная роль существования Государственной хоровой капеллы и ее всегда высочайший исполнительский уровень, достигнутый под руководством Оганеса Чекиджяна.

Характерно, что богатые концертные программы Государственной хоровой капеллы Армении почти всегда – и дома, и на гастролях – завершаются хорами Комитаса. Это не просто поклон основоположнику. Это тон камертона, постоянно присутствующий в работе хора и хормейстера. Тон, координирующий исполнение самых разных сочинений и даже европейской классики.

При внимательном вслушивании и сравнении звучания известных классических хоровых произведений в исполнении разных дирижеров и Оганеса Чекиджяна легко заметить явное отличие его трактовок. Они всегда более драматичны, более величественны, монументальны. В этом слышится стиль величественных комитасовских хоров и обработок такого рода, как «Цирани цар», «Гутанерг», «Сареривров гнац», «Антуни», «Алагяз». Оганес Чекиджян через Комитаса угадал матрицу армянского музыкального менталитета и пронзил этим пониманием все свои исполнения великих сочинений европейских классиков.

Так соприкоснулись в его исполнительском искусстве стили и времена, сформировав совершенно отличительный, необычный, величественно-драматичный его стиль, покоряющий самого требовательного мирового слушателя.

Достаточно привести слова великого Евгения Мравинского после концерта Оганеса Чекиджяна в Ленинградской филармонии, который состоялся 5 марта 1969 года: «Слушая в Большом зале Ленинградской филармонии «Реквием» Берлиоза в исполнении Государственной капеллы Армении и нашего симфонического оркестра под управлением дирижера Оганеса Чекиджяна, я столкнулся с таким интерпретатором, который заставил меня забыть о партитуре и своем профессиональном отношении к музыке. Я невольно стал обычным, вос-

торженным слушателем и был счастлив, что испытал такую радость»<sup>1</sup>.

В явлении под именем Оганес Чекиджян сошлось очень многое. Хоровая капелла стала своего рода Альма-матер для армянского хорового искусства. Попутно с разрастающейся славой Государственной капеллы Армении рождались хоры, многие из которых сформировались в яркие и самостоятельные коллективы, уже имеющие свои собственные традиции, свой стиль исполнения. Это Государственный камерный хор «Овер», руководителем которого является Сона Ованнисян, Государственный камерный хор Армении, работающий под управлением Роберта Млкеяна, это - Государственный детский хор, которым много лет руководит Тигран Экикян, Ереванский Камерный хор под управлением Арутюна Топикяна, а также прекрасная страница хорового искусства, которую открыла Сарина Автандилян с организацией и деятельностью хора «Спехани». И для всех для них Государственная капелла Армении под управлением Оганеса Чекиджяна представляла всегда и представляет сейчас мощный форпост армянского хорового искусства, его защищающий и, одновременно, ставящий перед ним самые высокие требования и большие творческие задачи.

---

<sup>1</sup> Заслуженный коллектив Государственная хоровая капелла Армении, Ереван, 1989, стр. 11.

**ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ**

*«Արվեստի վաստակավոր գործիչ,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
«ԳԱԱ արվեստի ինստիտուտ»*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ ԵՎ ՍՓՅՈՒՔԻ  
ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏԸ**

Հովհաննես Չեքիջյանի բազմաձև վերաբերմունքն ու տաղանդաշատ կերպարը լուսաբանող թեմաների և խնդիրների շարքում (որ լայնորեն ընդգրկված են մեր հորեյանական գիտական նստաշրջանի ծրագրում) ինձ հուզել է մի հարց, որի էությունն ու նշանակությունը ցանկանում եմ կարևորել:

Դա Չեքիջյան և սփյուռքահայ երաժշտարվեստ փոխհարաբերության հարցն է, որ բնականոն ծառանում է լայն մտահորիզոնի ու բարձր ճաշակի տեր, կատարողական-մասնագիտական, կազմակերպչական վիթխարի ներուժ ունեցող արվեստագետի գեղարվեստական նախասիրություններն ու նախապատվությունները քննելիս: Այնպես որ, չանդրադառնալով Մասետրոյի կենսագրությանն ու պրոֆեսիոնալ կրթությանը վերաբերող հանգամանքներին, հայ խմբերգային երգեցողության նշանակությանը Սփյուռքում՝ իբրև ազգապահպանման և ազգային ոգու միասնականության հզոր խթանի, կփորձեն ներկայացնել մի ոլորտ, որ հստակեցնում է խմբավար-դիրիժորի արվեստագիտական-քաղաքացիական դիրքորոշումը:

Հ. Չեքիջյանի երաժշտական աշխարհը լայնատարած է, իսկ նրա ոճական մեկնություններն ու գեղարվեստական ընթերցումները՝ անվրեպ ու ինքնատիպ:

Սովորաբար երկու նախապատիվ ոլորտներ են առանձնացվում Մասետրոյի մշակած և կատարելապես հղկված երկացանկում՝ կոմի-

տայան խմբերգային ժառանգությունն ու արևմտաեվրոպական դասական ավանդույթը, մասնավորապես մեծ կտավի կանտատ-օրատորիալ ժանրերը, ռեքվիեմները (Վերդի, Բեռլիոզ, Մոցարտ, Ֆորե և այլն): Եվ այսուհանդերձ, Չեքիջյանի բազմամյա ղեկավարության ընթացքում Հայաստանի ակադեմիական երգչախմբի բազմալեզու և հսկայածավալ երկացանկում իր տեղն է գտել նաև սփյուռքահայ երաժշտությունը:

Սփյուռքը՝ որպես Հայրենիքի գոյությամբ լիցքավորվող մարմին, մշակութային մակարդակում էապես կայանում է հայրենական արվեստից ստացած ազդակներով, նրա հետ ունեցած կենարար ու կենսատու կապերով: Յուրաքանչյուր օժտված արվեստագետ ստեղծագործական թե կատարողական ասպարեզներում հայ ժողովրդի տարագիր հատվածի սերը, կարոտն ու հպարտությունն առ Հայրենիք պահպանում է յուրովի՝ տպավորիչ ու անմոռաց գործերով, վառ պահելով ավանդական մյուսուսի՝ «Երկիր Նաիրիի» կամ հայկական աշխարհի կորուսյալ ու իրական հատվածների անմար խորհուրդը:

Հովհաննես Չեքիջյանի գործն ու հավատամքը այդ խորհրդի ընկալման անօրինակ դրսևորումներից է: Հարուստ մշակութային ավանդույթներ ունեցող Կոստանդնուպոլիսը, ավելի ստույգ հայկական Պոլիսը, անջնջելի ոգեղեն դրոշմ է դրել այդտեղ մեծացած և կրթված արվեստագետների կեցվածքի ու հոգեկերտվածքի վրա: Այդտեղից հեռացել ու տարագրվել են բազում երաժիշտներ՝ իրենց հետ տանելով ազգային արվեստի դարավոր ավանդույթները, հաստատվել ու բեղմնավորվել են տարբեր մշակութային կենտրոններում, գաղթօջախներում և Հայաստանում՝ մշտապես փայփայելով կորցրած հայրենի բնօրրանը դարձյալ տեսնելու (գուցե նաև ունենալու) երազանքը:

«Պոլսեցի» ինքնություն կրող և բեմական հմայիչ ու իշխող կեցվածք ունեցող մասետրո Չեքիջյանի՝ Ակադեմիական երգչախմբի բազմամյա ղեկավարի համերգային այցն իր ծննդավայր Պոլիս մշա-

կութային ու հոգևոր վերելքի աննախադեպ բռնկում էր առաջացրել «պոլսահայերի տոհմիկ ապրումների տարեգրության մեջ» կարդում ենք «Մարմարայում» (1997, մայիս 8):

Եթե Մաեստրոն հայ երգչախմբային արվեստի դեսպանն է արտասահմանում, ապա այդ պատվավոր մշակութային առաքելությանը զուգահեռ նրա անձն ու գործը մշտապես առիթ են տվել տարբեր առյուծակներում, մամուլում, հաղորդումների ու հանդիպումների ժամանակ բարձրացնել հայոց պատմությանը, նրա քաղաքական-մշակութային անցյալին ու ներկային առնչվող հարցեր՝ լրացնելով դիտավորյալ կամ ակամա անթեղված խնդիրներ՝ խթանելով ճանաչողական տեղեկատվությունը: Անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն հրապարակումների մի պատկանելի շարք Մաեստրոյի կենսագրականն ու դիրիժորական գործունեությունը, նրա կախարդական փայտիկն ու շրջագայությունների լայն աշխարհագրությունը ներկայացնելուց բացի ամբողջացնում և ամփոփում է Կոմիտասի ստեղծագործությանն ու հայ երգարվեստի ինքնատիպ ակունքներին, Արամ Խաչատրյանին ու ազգային կոմպոզիտորական դպրոցին վերաբերող տեղեկություններ: միով բանիվ՝ Մաեստրոյի անձով միջնորդավորված հայ մշակույթի նվաճումներն են փաստված օտարալեզու գրախոսական-արձագանքներում:

Բազմաթիվ հեղինակներ են անդրադարձել Չեքիջյանի դիրիժորական վարպետության առանձնահատուկ հատկանիշներին, նրա պոռթկուն շարժումներին, ռիթմի ու դինամիկայի համամասնական զարգացման ներգործուն ուժին: Իսկ կախարդական փայտիկին վերաբերող արտահայտությունները թևածում են հողվածից հողված՝ «Մաեստրոն ճիպոտը ի ձեռին կը ծնի» («Ժամանակ», 18.9.1995), «Դիրիժորը ծնվում է փայտիկը ձեռքին» («Ազգ», 2002, 18 հունվարի)... Այո՛, կախարդական փայտիկը կամ ճիպոտը, որ դիրիժորի մասնագիտական ինքնության խորհրդանիշն է, մեր օրերում մասամբ կորցրել է

իր նախկին խորհուրդը և, ասես, ասպարեզը թողել խոսուն ձեռքերին ու ժեստերի լեզվին: Չեքիջյանը փայտիկը կիրառում է սիմֆոնիկ նվագախումբը ղեկավարելիս, իսկ երգչախմբի խաղը վստահում է իր արտահայտիչ ձեռքերին ու դիմախաղին: Արվեստագիտական դիրքորոշում է սա, թե՛ ոլորտների սկզբունքային տարանջատում ու խորքային էության ընդգծում, միևնույնն է, թե՛ մեկ, թե՛ մյուս ոլորտներում Չեքիջյանի արտահայտչական-տեխնիկական զինանոցը կատարյալ է, կատարողական երկացանկի գեղարվեստական-գեղագիտական ընթերցումը՝ վառ ու համոզիչ:

Անկասկած խստապահանջ դիրիժորի մասնագիտական ճաշակն ու գեղարվեստական կողմնորոշումները վճռորոշ դեր են խաղացել սփյուռքահայ երաժիշտների ընտրության հարցում: Թեև նրանք մեծաթիվ չեն ակադեմիական երգչախմբի ներշնչող երկացանկում, սակայն իրենց արվեստի ազգային և վերազգային նկարագրերով, ստեղծագործական սկզբունքների ու գեղարվեստական բովանդակության, ինչպես նաև միջազգային ճանաչման ու հնչեղության առումով ներկայանալի են ու հետաքրքրական:

Մաեստրոյի ընտրյալները թե՛ հայ երաժշտարվեստի ավանդապահ ջատագովներն են և թե՛ ժամանակակից երաժշտության բարդ ու բազմաձև համայնապատկերում իրենց ինքնատիպ խոսքն ասած հեղինակներ:

Իրեն հատուկ լայն վրձնահարվածներով, դինամիկ կոնտրաստներով, նրբերանգներով, կառուցվածքային-հուզական գազաթնակետերի հստակ ցուցադրումով են առանձնանում վոկալ-սիմֆոնիկ խոշոր կտավի ստեղծագործությունների մեկնաբանությունները, որ Չեքիջյանի երաժշտական տարերքներից են: Ահա այդ աշխարհիկ ու հոգևոր կանտատների, մեսսաների, օրատորիաների, ռեքվիեմների կողքին Չեքիջյանը հնչեցրել է նաև Այտընյանի «Պատարագը»՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված, պատարագի գրական տեքստով գրված

Արա Պարթևյանի մեսսա-օրատորիան մեներգիչների և երգչախմբի համար, սիմֆոնիկ նվագակցությամբ, Էդգար Մանասի բազմաձայն «Պատարագը»՝ հայ եկեղեցական եղանակների հիման վրա, որի առաջին մեկնաբանը Պոլսում և այլուր եղել է մատուրո Չեքիջյանը:

Մխիթարյան միաբանության արքահայր, լեզվաբան-հայագետ Արսեն արք. Այտընյանի հեղինակած «Պատարագի» կատարումը 70-ական թվականներին, Մատուրոյի հավաստմամբ, համարձակ արարք է եղել: Նրա տեսադաշտից դուրս չեն մնացել նաև ազգային ոգու և մշակույթի պահպան այլ նվիրյալների ստեղծագործությունները. Կոմիտասի արժանավոր աշակերտ Բարսեղ Կանաչյանը, Գուրգեն Ալեմշահը, որոնք սփյուռքահայ իրականության մեջ ստեղծագործող արվեստագետի ճակատագրի և առաքելության հստակ գիտակցումով զգալի նպաստ են բերել թե՛ ազգային արվեստի զարգացմանը, թե՛ Արևելք-Արևմուտք մշակութային կապերի ամրապնդմանը: Մասնավորապես, Բարսեղ Կանաչյանը սփյուռքահայ երաժշտի չափանմուշ օրինակ է իր ունիվերսալ երաժշտահասարակական գործունեությամբ՝ երգահան, խմբավար, ջութակահար, դաշնակահար, արևելյան ֆոլկլորի խոր գիտակ, արաբական ու քրդական երգերի բարձրարժեք մշակումների հեղինակ, որի «Օրոր»-ը՝ հայ երաժշտարվեստի խորհրդանշական մեղեդիներից մեկը, բազմիցս հնչել է Մատուրո Չեքիջյանի ղեկավարությամբ: Մեծ է նաև արգենտինահայ կոմպոզիտոր, խմբերգային արվեստի հմուտ վարպետ Ժան Ալմուխյանի ներդրումը, որի ստեղծագործությունները Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ հնչել են թե՛ Չեքիջյանի և թե՛ հեղինակի ղեկավարությամբ 2012 թ. նրա 80-ամյա հոբելյանին և 55 տարվա երաժշտական գործունեությանը նվիրված մեծարման երեկոյի ժամանակ:

Եվ վերջապես, ազգային երաժշտության սահմանները հատող և առավելապես միջազգային երաժշտական հանրությանն իր երկատված՝ հայ-շոտլանդական երաժշտական ինքնությամբ ապշեցրած ամե-

րիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի արվեստին առնչվելու հնարավորությունը Երևանում, Լենինգրադում, Մոսկվայում և արտասահմանում պարտ է Չեքիջյանի նախաձեռնությանը: Իր նախնիների հայրենիքում պակաս ծանոթ, սակայն Նահանգներում և համայն Արևելքին հայտնի կոմպոզիտորի՝ Ալան Հովհաննեսի (Հովհաննես Հարությունի Չաքմաքչյանի) և նրա անվանակից Հովհաննես Հարությունի Չեքիջյանի ստեղծագործական-կատարողական ուղիները խաչվել են Երևանում 1965 թ.: Մշակութային փոխանակման պետական ծրագրի շրջանակներում Ալան Հովհաննեսը համերգային շրջագայություն էր ձեռնարկել Խորհրդային Միության մշակութային կենտրոններում՝ համերգներով հանդես գալու նպատակ ունենալով այցելել նաև Վրաստան և Հայաստան:

60-70-ական թվականները կոմպոզիտորի ամենաբեղմնավոր տարիներն են եղել, և այս շրջանում գրված երկերը՝ Լուսաձագը, Հայկական Ռապսոդիան, «Խորհրդավոր լեռը» սիմֆոնիան, ամենից հաճախ կատարվողներից են: Ընդհանրապես, լեռնային թեմատիկան կարևոր տեղ է զբաղեցնում միստիկ կոմպոզիտորի երաժշտական համայնապատկերում. Արարատ լեռը, Հավայան կղզիների լեռները, Ճապոնական լեռնաշղթան, Ցուրտ լեռը և բազմաթիվ այլ լեռներ իրենց մարմնավորումն են ստացել կոմպոզիտորի երկարածիգ մեղեդիական գծերում, պոլիֆոնիկ հյուսվածքները մեջընդմիջող ad libitum դրվագներում: Թերևս մատուրո Չեքիջյանին Հովհաննեսի մեղեդիների խորհրդավոր էությունն է գրավել, երբ հնչեցրել է «Սուրբ Հեղինե լեռը» սիմֆոնիան, որ կոմպոզիտորի հոգևոր էության և լեռների նկատմամբ ունեցած պաշտամունքային բնույթ կրող ակնածանքի լավագույն արտահայտություններից է: Երաժշտական ոճի ու ձևի խոր զգացողությամբ օժտված դիրիժորն իր ներքին լսողությամբ և պարտիտուրի ճշգրիտ ընթերցմամբ հաղորդել է ենթատեքստի խորքային իմաստն ու հասել բարձրարվեստ մեկնաբանության:



2006 թ. Ալան Հովհաննեսի 95-ամյակին նվիրված համերգի ծրագրում ընդգրկված են եղել նաև Կոնցերտը 2 դաշնամուրի համար և «Մագնիֆիկատը»:

Մարիամ Աստվածածնի փառաբանական երգն առ Աստված (Magnificat anima mea Dominum), սկսած 15-րդ դարից, հարյուրավոր կոմպոզիտորների է ներշնչել՝ Մոնտեվերդի, Բախ, Վիվալդի, Մոցարտ, Մենդելսոն և ուրիշներ: 20-րդ դարում կանտատ-օրատորիալ հատկանիշներով բնութագրվող այս ժանրը զարթոնք է ապրել ժամանակի դեմքը ներկայացնող մեծերի՝ Պենդերեցկու, Պյարտի, Հովհաննեսի և շատ ու շատ հեղինակների ստեղծագործություններում: Ալան Հովհաննեսի «Մագնիֆիկատը» հայ կոմպոզիտորական արվեստում ժանրի թերևս առաջին նմուշներից է՝ գրված 1958 թ., իսկ դրա եզրափակիչ մասը՝ “Gloria”-ն, Մաեստրոն հնչեցրել է աշխարհի տարբեր համերգասրահներում և, ըստ ամենայնի, մեծապես կարևորված է նրա նախասիրած ոլորտներից մեկի՝ հոգևոր բնույթի վոկալ-սիմֆոնիկ երկերի շրջանակում:

20-րդ դարի ամենահայտնի փիլիսոփա-կոմպոզիտորի համբավ վայելող Ալան Հովհաննեսի երկերը հնչել են նաև այլ դիրիժորների՝ Արամ Ղարաբեկյանի, Մերուժան Սիմոնյանի ղեկավարությամբ, ով հիմնադիրն էր «Ալան Հովհաննես» անունը կրող կամերային նվագախմբի: Սակայն սփյուռքահայ արվեստագետի անօրինակ ինքնությունն ու գեղարվեստական աշխարհը Խորհրդային Միության բազմազգ լսարանին ներկայացնելու աներկբա առաջնությունը պատկանում է բոլորիս սիրելի Հովհաննես Չեքիջյանին:

Ե՛վ գիտակցաբար, և՛ ինքնաբուխ իր գործելակերպով մաեստրո Չեքիջյանն ապացուցում է, որ արվեստի վեհացնող ուժն այն փնտրված լծակներից է, որով իրագործելի են հայ ժողովրդի միասնությունն ու համախմբումը Հայրենիքում: Հենց այս առումով է նա մոտենում հայ գաղթօջախներում ստեղծագործող մեր օժտված երաժիշտ-երգահան-

ներին, նրանց երկերը կատարելով՝ ի լուր թե՛ Հայրենիքի, թե՛ Սփյուռքի և թե՛ համայն աշխարհի արվեստագետների: Սա արվեստագիտական պարտքի դրսևորման բարձր վկայություններից է:

Մաեստրո Չեքիջյանի անսպառ քանքերը՝ ուղղված արվեստի միջոցով Հայրենիքի և Սփյուռքի մեր հայրենակիցներին միաբան, համախումբ ու միասնական տեսնելու համազգային նվիրական երազանքին, կարելի է համարել Եղիշե Չարենցի կտակ-պատգամն իրականացնելու գործուն միջոցներից մեկը:

**ՅՈՒՐԻ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ**

*«Վաստակավոր մանկավարժ,  
մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Խ.Արուսյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան»*

**ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՉԵՔԻՋՅԱՆԱԿԱՆ  
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Մեծ է Հովհաննես Չեքիջյանի ավանդը հայկական երգչախմբային արվեստի զարգացման բնագավառում: Բավական է ծանոթանալ Մաեստրոյի կյանքի տարեգրությանը, որպեսզի պարզ դառնա, թե որտեղից է գալիս Մաեստրո Չեքիջյանի սերը հայկական երաժշտության, մասնավորապես Կոմիտասի և Եկմայանի երաժշտության հանդեպ:

Հովհաննես Չեքիջյանն այսօրվա իր ձեռքբերումները կապում է իր ծնողների հետ, ովքեր ամեն կիրակի իրեն տանում էին Եկեղեցի և մասնակիցը դարձնում հայոց պատարագի արարողությանը: Մաեստրոն հիշում է, որ իր հայրը՝ Հարություն Չեքիջյանը, երգել է Կոմիտասի ղեկավարած երգչախմբում՝ լինելով երգչախմբի ամենակրտսեր անդամներից մեկը: «Հայրս ընկերների հետ հաճախ էին հավաքվում մեր տանը և երգում Կոմիտասի երգերը»: Այդ «ընտանեկան կատարումները առաջին ծայներն էին, որ արթնացրին իմ լսողությունը»: Այդ ժամանակ Չեքիջյանը հինգ տարեկան էր, նրա ականջներում Կոմիտասի երգն էր: Տան նվիրական զրույցները հյուսվում էին այդ անվան շուրջ և երգի հետ ներթափանցում փոքրիկ Հովհաննեսի ներաշխարհը: Այսօր էլ Հովհաննես Չեքիջյանը խոստովանում է, որ իր «մեծագույն սերը Կոմիտասն է, սակայն արժվին հասկանալու համար պետք է հասկանալ երկինքը: Կոմիտասի իրական մեծությունը երևում է միայն համամարդկային մեծությունների կողքին: Բոլոր մեծերի ասելիքը նույնն է, եղանակն է տարբեր, բոլորն էլ ձգտում են սատար լինել մարդուն նրա դժվարին ճանապարհին, արթուն պահել խիղճը,

նրան մաքրել ու ողողել լույսով»<sup>1</sup>:

Ահա թե ինչպիսի մթնոլորտում են ձևավորվել ու զարգացել մեր ժամանակների մեծ խմբավար-դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի երաժշտական ընդունակությունները, որոնք ապագայում դարձան նրա երաժշտակատարողական վարպետության հիմքը:

Երաժշտակատարողական արվեստը մարդու գեղարվեստական գործունեության տեսակներից է: Որպես այդպիսին այդ արվեստի մարդիկ լինում են նրբազգաց, նրբաճաշակ, ստեղծագործ, մեկնաբան, հնչող երաժշտության և ունկնդրի միջնորդ:

Ահա այսպիսի բարդ միջանցիկ կապերում Մաեստրո Հովհաննես Չեքիջյանը, շնորհիվ իր անհատականության և կատարողական վարպետության, կարողացել է միաձուլել կատարողների և ունկնդրի զգացմունքներն ու մտորումները, ավելի հզորացնել հնչող երաժշտության հուզական ներգործությունը և ավելի գործուն երկխոսության մեջ մտնել ունկնդրի հետ:

Այն հարցին, թե որն է դիրիժորի առաքելությունը, Մաեստրոն պատասխանել է. «Դիրիժորը հիմնականում մեկնաբան է: Դիրիժորը իր աչքի առջև ունի պարտիտուրը և պետք է, ինչքան հնարավոր է, հասկանա, թե տվյալ կոմպոզիտորը ինչ է ցանկացել ասել, արտահայտել, թե ինչ ապրումներ, էմոցիաներ է ունեցել տվյալ հեղինակը»<sup>2</sup>:

Դիրիժորի ստեղծագործական երևակայությունից ու ստեղծագործական մեկնաբանությունից է կախված ունկնդրի վերաբերմունքը հնչող երաժշտության նկատմամբ: Որքան ժամանակակից ու նորարարական է դիրիժորի մեկնաբանությունը, այնքան երաժշտական ստեղծագործությունը դառնում է հետաքրքիր ու կերպարային:

Հովհաննես Չեքիջյանը գտնում է, որ դիրիժորը պետք է կարո-

<sup>1</sup> Ասատրյան Աննա, Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ, Երևան, «Ամրոց գրուպ», 2007, էջ 37:

<sup>2</sup> Առաքելյան Սերգեյ, Հովհաննես Չեքիջյան, Երևան, «Լուսակն», 2014, էջ 507:

ղանա շունչ և ոգի դնել, կենդանացնել և հնչեցնել բանաստեղծի և կոմպոզիտորի ստեղծագործությունը, ապա ներկայացնել ունկնդրին: Դիրիժորի նման մոտեցման շնորհիվ երաժշտական ստեղծագործության ընկալումը, ըմբռնումը դառնում են ավելի ակտիվ ու ներգործուն: Պատահական չէ, որ Մաեստրո Չեքիջյանը երաժշտական ստեղծագործության մեկնաբանությունը և կատարումը համարում է ստեղծագործական գործընթաց: Քանի որ դիրիժորի երաժշտական մտքերը, հույզերն ու զգացմունքները անընդմեջ գտնվում են շարժման մեջ, անընդհատ կատարելագործվում ու փոփոխվում են: Նույն գործընթացը կատարվում է նաև երաժշտությունը հնչեցնողների (կատարողների) հետ: Ահա թե ինչու միևնույն երաժշտական ստեղծագործությունը տարբեր ժամանակներում կատարելիս հնչում է տարբեր, յուրովի: Որ ժամանակաշրջանում էլ ստեղծված լինի երաժշտությունը՝ ժողովրդական, թե դասական կոմպոզիտորների, պետք է բավարարի այսօրվա պահանջները: Այլապես այն կդադարի արվեստ լինելուց: - ասում է Մաեստրո Չեքիջյանը:

Այո՛, Հովհաննես Չեքիջյանի յուրաքանչյուր համերգ երաժշտական արվեստի յուրօրինակ տոն է՝ հնչյունային իր հրավառությամբ, հուզական իր ներգործությամբ, ազգայինի զգացմամբ ու գիտակցմամբ: Ամեն անգամ հայ երգի չեքիջյանական կատարումները նորից ու նորից հավաստում են հայ ժողովրդի գեղարվեստական մտածելակերպի ինքնատիպությունը, ինքնուրույնությունն ու հավերժությունը:

Մաեստրո Չեքիջյանը Կոմիտասի պես մեծ նշանակություն է տալիս խմբերգի խոսքի և հնչյունի ազգակցական կապին, այն, որ խոսքի և մեղեդու համար ռիթմը և հնչերանգը (ինտոնացիան) ունեն համարժեք նշանակություն: Այդ երկու արտահայտչամիջոցների բարեկանության շնորհիվ երաժշտությունը դառնում է ավելի ներգործուն և տպավորիչ: Խմբերգի բառի ռիթմական շեշտի և մեղեդու հնչերանգի միջև փոխադարձ կապի նման մոտեցումը հնարավոր է դարձնում ազ-

գային հնչերանգով իմաստավորված երաժշտագեղարվեստական կերպարի ստեղծումը: Ինչպես նշում է երաժշտագետ Յիցիլիա Բրուտյանը. «ազգային այդ երանգը ներքին, հոգևոր զգացում է, ինչ-որ մի տեղ պայմանավորված մեկնաբանի ազգային պատկանելությամբ»<sup>3</sup>:

Յուրօրինակ են չեքիջյանական երգեցողության հնչյունավորման երանգը, որակը, որոնք ոչ միայն բավարարում են երգեցողության կատարողական պահանջները՝ հնչերանգի մաքուր արտաբերումը, բառերի հստակ առոգանությունը, հնչյունների և բառերի իմաստային կապերի բացահայտումը և արտահայտիչ կատարումը, այլև նպաստում են երաժշտական կերպարի բազմակողմ ձևավորմանը, ազգայական ներգործության ուժեղացմանը, ունկնդրի հուզական և իմաստավորված ընկալմանը:

Մաեստրո Չեքիջյանը յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում պոլիֆոնիկ հյուսվածքով բազմաձայն խմբերգի մեկնաբանմանը: Յուրաքանչյուր ձայնախմբի մեղեդու ինքնուրույնության ընդգծումը և ձայների փոխանցման ընթացքը նա տեսնում է ներդաշնակ, իմաստավորված երաժշտական կերպար ստեղծելու մեջ:

Խմբերգերի չեքիջյանական մեկնաբանություններում յուրաքանչյուր երաժշտական արտահայտչամիջոց ունի իր տրամաբանական զարգացման ընթացքը, դրամատուրգիան՝ կապված խմբերգի բովանդակության, ձևի, կառուցվածքի, բազմաձայն կերտվածքի, ինչպես նաև դիրիժոր-մեկնաբանի անհատականության՝ երաժշտական մտածելակերպի, խառնվածքի, գեղարվեստագեղագիտական ճաշակի, աշխարհայացքի և կատարողական վարպետության հետ: Դիրիժոր-խմբավարի այդ հատկանիշների և ստեղծագործական մտքի շնորհիվ է կոմպոզիտորի ստեղծագործությունը վերածնվում ու հնչում, ապա արժևորվում ունկնդրի կողմից: Մաեստրո Չեքիջյանի երաժշտակա-

<sup>3</sup> Բրուտյան Յ., Կոմիտասի ստեղծագործության մեկնաբանման խորհուրդը, Երևան, 1974, էջ 5:

տարողական վարպետության հիմքում մարդկային հոգու և զգացմունքների արտահայտությունն է, որն ունկնդրին հաղորդում է հուզազգայական հզոր լիցք և նրա մեջ առաջացնում իմաստավորված երաժշտալսողական պատկերացումներ: Այդ պատկերացումներն ունկնդրի լսողության մեջ պատկերվում են շնորհիվ երաժշտական ստեղծագործության արտահայտչական և նկարագրական ընդհանրացված կերպարների, որոնք կոմպոզիտորի մտահղացման և կատարողի մեկնաբանման արդյունքն են:

Հովհաննես Չեքիջյանի երաժշտակատարողական գործունեության ասպարեզում մեծ դերակատարում ունեն «երգող ձեռքերի», մատների, իրանի, գլխի, դեմքի արտահայտիչ շարժումները, որոնք բխում են երաժշտությունից՝ շաղախվելով դիրիժորի ներաշխարհի նրբերանգներին, անհատականությանը, իմաստավորում են հնչող երաժշտությունը և արտահայտվում շարժումներով: Այդ շարժումները փոխանցվում են ոչ միայն երգչախմբի երգիչներին, այլ նաև ունկնդրին, նրանց մեջ առաջացնում որոշակի հույզեր, ապրումներ ու զգացմունքներ: Երգչախմբի ղեկավարման ընթացքում դիրիժոր Չեքիջյանը ճկուն, սլացիկ շարժումներով ցուցադրում է ստեղծագործության ոչ միայն տեմպի, չափի, տակտի մասերի՝ զարկերի ընթացքը, ռիթմը, մեղեդու շարժման ուղղությունը, այլև այն բոլոր երաժշտական արտահայտչամիջոցները, որոնց միջոցով ստեղծվում է գեղարվեստական կերպարը, որն իր մեջ միավորում է թե՛ կոմպոզիտորի և թե՛ դիրիժոր-մեկնաբանի մտորումները, հույզերն ու զգացմունքները:

Ահա թե ինչպես է Մաեստրոն մեկնաբանում դիրիժորի ձեռքերի դերը և նշանակությունը: Երաժշտության արտահայտչականությունը. «...որոշում են ոչ թե ձեռքերը, այլ ուղեղն ու սիրտը, ձեռքերը վերջին հաշվով կատարում են սրտի և մտքի հրամանը»<sup>4</sup>:

Հովհաննես Չեքիջյանը երաժշտության իր մեկնաբանություններում և՛ ավանդապահ է, և՛ նորարար: Շարունակելով մեծն Կոմիտասի խմբերգերի կատարողական պատգամները, այնուամենայնիվ, իր մեկնաբանություններում հանդես է գալիս «նորարար», մասնավորապես կոմիտասյան խմբերգերի կատարման ժամանակ: Նման մոտեցումն արդարացված է, քանի որ դիրիժորը երկխոսության մեջ է մտնում անցյալի և ներկա ժամանակների հեղինակների հետ, կապ ստեղծում տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված երաժշտական ստեղծագործությունների և արդի ժամանակաշրջանի գեղարվեստագեղագիտական կատարողական պահանջների միջև:

Հովհաննես Չեքիջյանը, քաջատեղյակ լինելով համաշխարհային դասական երաժշտության զարգացման միտումներին ու կատարողական տեխնիկայի նրբերանգներին, հայկական երաժշտությունը հնչեցնում է համամարդկային երաժշտության արժեքներին համահունչ: Պատահական չէ, որ Մաեստրո Չեքիջյանի ղեկավարությամբ Հայաստանի ակադեմիական երգչախումբը դուրս է եկել ազգայինի շրջանակներից և միջազգային ճանաչման արժանացել՝ խմբերգային հնչողության ազգային երանգը պահպանելու և զարգացնելու շնորհիվ:

Մաեստրո Չեքիջյանի գործունեության բովանդակությունը միշտ եղել է երաժշտության միջոցով մարդկանց երջանկացնել ու նրանց կյանքը դարձնել ներդաշնակ ու գեղեցիկ: Նրա կատարողական արվեստը սահման չի ճանաչում: Այն հոգեհարազատ է ոչ միայն հային, այլև ողջ մարդկությանը:

«Շատ բարձր եմ գնահատում Հովհաննես Չեքիջյանի կատարողական աշխատանքը: Նա համաշխարհային ընդգրկման դիրիժոր է, խմբերգային արվեստը հասցրել է համամարդկային հնչողության»: Այսպես է բնութագրել մեր Մաեստրոյին մեծն Արամ Խաչատրյանը<sup>5</sup>:

<sup>4</sup> Առաքելյան Սերգեյ, Հովհաննես Չեքիջյան, «Լուսակն», Երևան, 2014, էջ 513:

<sup>5</sup> Ասատրյան Աննա, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, «Ամրոց գրուպ», 2005, էջ 4:

**НЕЛЛИ АВETИCЯН**

*Заслуженный деятель культуры РА,  
кандидат искусствоведения,*

*Ереванская государственная консерватория имени Комитаса*

**ЭСТЕТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ ОГАНЕСА ЧЕКИДЖЯНА**

Выдающийся хормейстер, дирижер «от Бога» Оганес Чекиджян сыграл знаменательную, заметную роль в развитии хорового искусства XX-XXI веков, вывел на мировую арену Государственную академическую капеллу Армении. Под неизменно восторженные аплодисменты слушателей-зрителей разных стран и континентов, великий Маэстро создал империю хорового искусства высочайшего класса, свой необыкновенно интересный художественный почерк, индивидуальный «чекиджяновский» стиль, исполнительскую манеру хорового звучания, которая исключительно своеобразна и узнаваема на слух. В обширной прессе о концертах капеллы неоднократно отмечалось, что все голоса в хоре находятся в едином, совершенно слитном ансамбле, постановка фраз глубоко продумана, каждая деталь тщательно отшлифована. Безупречная интонация, отточенная нюансировка, высокохудожественное исполнение сложнейших произведений снискали Госкапелле Армении широкую признательность слушателей. Коллективу по плечу все формы и жанры хорового искусства. Было отмечено также, что замечательный дирижер, маэстро Чекиджян имеет необыкновенно выразительные, «поющие руки».

Крупнейшие дирижеры XX века высоко оценивали творческие достижения маэстро Чекиджяна, среди них: Евгений Мравинский, Геннадий Рождественский, Густав Эрнесакс, композитор и дирижер Кшиштоф Пендерецкий и другие. Проникновенны и точны слова выдающегося дирижера Натана Рахлина, которые прозвучали после ты-

сячного концерта маэстро в 1974 году: «Настоящее, глубокое мастерство, которое приходит на основе академической точности и выраженной возвышенности, всегда индивидуально, и поэтому искусство капеллы, руководимой Оганесом Чекиджяном, настолько своеобразно, что спутать с чем-то другим в этой области невозможно. Широкий диапазон мышления и талант, умноженный на сокровища народного мелоса, основное содержание мастерства Оганеса Чекиджяна»<sup>1</sup>.

Обозревая пройденный путь большого художника, невозможно обойти тот факт, что Оганес Чекиджян, кроме городов своей Родины – Армении, гастролировал в разных городах многих стран, руководил 67-ью симфоническими оркестрами, которые выступали с его капеллой. В программах концертов, за дирижерским пультом которых стоял маэстро Чекиджян, в общей сложности участвовали 246 солистов, среди которых много музыкантов мирового масштаба, знаменитостей с мировым именем: Гоар Гаспарян, Гегам Григорян, Елена Образцова, Барсег Туманян, Любовь Казарновская, Евгений Нестеренко, Зураб Соткилава, Аракс Давтян, Асмик Папян и многие другие. Он продирижировал тысячами концертов, создал обширный репертуар из произведений разных эпох и стилей, среди которых эталонными можно считать произведения И.С.Баха, Моцарта, Бетховена, Шуберта, Екмаляна, Комитаса. Естественно, что в процессе работы, многочасовых репетиций дирижер вырабатывает свой собственный подход к интерпретации каждого из произведений, добивается адекватного звучания, вкладывая художественный смысл, заложенный в самом произведении, выявляя концепцию данного сочинения. Эстетические убеждения и взгляды на собственное творчество, прозрение и отторжение отжившего являются важной стороной внутренней интеллек-

<sup>1</sup> Высказывание Натана Рахлина о Чекиджяне после концерта в Киеве 24 октября 1974 года.

туальной работы, самоотверженной самооценки, постоянного поиска художественных средств и безошибочного выбора. Поэтому беседа с великим мастером о музыке, о его творчестве дала возможность частично приоткрыть дверь в таинственный и загадочный мир хорового искусства. По признанию маэстро, впервые он встал за дирижерский пульт в 14-летнем возрасте и с тех пор не расстаётся с дирижерской палочкой. В дальнейшем он, будучи дирижером, которому подвластно звучание симфонического оркестра, выбрал хор. По мнению О.Чекиджяна: *«Хоровое звучание, теплота человеческого голоса, возможность проникнуть в мир этих эмоций и красок – это мир, который каждый дирижер сам выбирает для себя, создает свой почерк, свое акустическое поле звучания».*

В интересной беседе с маэстро, мы касались вопросов связанных с его отношением к музыкальному стилю, средствам художественной выразительности, особенностям личности дирижера, благодаря которым и формируется этот индивидуальный стиль. В интерпретации Чекиджяна он проявляется очень ярко, красочно, необыкновенно выразительно. По его мнению: *«Все связано с исполняемым сочинением и зависит от того, что это за произведение. Понимание композиционных особенностей созданной музыки влияет на интерпретацию. Я считаю, что как она создана композитором, так она и должна звучать. Если я исполняю драматичные или величественные произведения, которые несут в себе повышенную экспрессию и эмоциональность, то обязательно продумываю степень звучности, накопления и разрядки звуковой массы, которая позволяет выявить смысл музыки. Музыка требует большой силы звучания, вместе с тем, это не значит, что хор должен кричать. Всегда надо оставаться в зоне вокала, пения, певческого интонирования. В моем репертуаре есть такие произведения, которые необыкновенно нежны*

*и эстетически тонки, что позволяет найти для них адекватные звуковые краски, создать ощущения проникновенности, прозрачности, выразительной нежности. Произведение не может быть бесцветным или одноцветным, когда имеется богатая палитра красок, но их выбор должен не противоречить, а соответствовать художественному замыслу композитора. Дирижер, который исполняет партитуру, имеет перед собой только ноты. Для каждого дирижера, который хочет исполнить данное произведение, ноты не меняются, они те же самые. Однако, каждый из них по-своему интерпретирует произведение, подчеркивая в нем то, что он считает для себя наиболее важным, выявляя концепцию, смысл и дух, вкладывая душу в звучащий мир музыки. Например, в симфониях Бетховена, которые на протяжении времени исполнялись разными оркестрами, интерпретировались разными дирижерами, партитуры остаются те же, однако музыка, которую они исполняют, звучит по-новому. Это доступно лишь большим музыкантам, людям с широким, аналитическим взглядом на жизнь, вместе с тем, с волевым началом, четкой, продуманной организацией звукового пространства.*

*Каждый дирижер воспринимает произведение по-своему, через свои «собственные очки». На протяжении времени часто исполняемые произведения в интерпретационном смысле развиваются, обрастают новыми версиями, формируют осознание преемственности. Если бы не было Тосканини не было бы Караяна, если бы не было Екмяляна, не было бы Комитаса. Сегодняшние требования к дирижеру изменились, и это надо понимать и принимать во внимание, поскольку современный слушатель резко отличается от предыдущего тем, что современные технические достижения, средства коммуникации дают ему возможность, сидя дома, смотреть и*

*слушать то, что происходит в разных концах земного шара, в разных концертных залах, в исполнении разных дирижеров. Это обязывает современного дирижера быть в курсе наиболее выдающихся музыкальных событий, искать новые средства выразительности, пересматривать и улучшать звучание своего коллектива, своих певцов капеллы. Улучшать интерпретацию значит более точно строить форму произведения, чтобы лучше выявить замысел композитора, постараться раскрыть душу исполняемого произведения».*

Это аналитическое восприятие современного мира, постоянный самоконтроль, желание улучшить уже найденные средства выразительности стали основой для создания музыки, всегда отвечающей эстетическим потребностям современного человека. Слова признательности за доставленное переживание и наслаждение можно найти в разных статьях от Хабаровска и Камчатки до Риги, Вильнюса и Львова, от Рима и Парижа до Нью-Йорка, где маэстро со своей капеллой гастролировал по разным городам СССР, Европы, США. Среди публикаций в прессе можно выделить статьи выявляющие особенности эстетики Оганеса Чекиджяна: «В руках опытного, талантливого маэстро оркестр стал послушным инструментом, чутко реагирующим на малейший жест. Вдумчивый интерпретатор Оганес Чекиджян глубоко проникся образами произведения. Обладая высокой дирижерской техникой, он пользуется ею экономно, не прибегая к красивым, броским жестам. Влияние его на коллектив посредством своего дирижерского обаяния огромно. Отсюда и большой творческий эффект исполнителей»<sup>2</sup>. Капелла со своим неизменным художественным руководителем и дирижером гастролировала во многих городах 35-ти стран,

<sup>2</sup> Вольхин П. «Тихоокеанская звезда», Хабаровск, 4 октября 1981 года.

исполняя как духовную музыку, так и светскую профессиональную, не оставляя равнодушным слушателей, которые выражали свое отношение к хору и в устных высказываниях, и в «Книге отзывов»: «Гости из Армении покорили сердца слушателей своим профессиональным мастерством и высокой хоровой культурой. Пение этого талантливого коллектива создает впечатление звучания органа – такой стойкости и богатства достигает его палитра звучания»<sup>3</sup>; неоднократно отмечается «исключительная слаженность, богатство красок, четкость дикции»; в профессиональных оценках выражена следующая мысль: «Прежде всего хочется сравнить хор с неким мощным по звучанию и широким по диапазону музыкальным инструментом. Четко подчиняясь дирижеру, инструмент этот звучит интонационно чисто, привлекает тонкостью дыхания, выразительной фразировкой. Технических трудностей, а их немало в классических произведениях, словно бы не существует для капеллы. Любое сочинение предстает перед слушателями законченным, кажется, что только так, в этих ритмах, с этими интонациями и тембровой окраской оно и может быть исполнено». Об интерпретационных особенностях его эстетических позиций прекрасно выражено следующими словами: «Оганес Чекиджян – чуткий, всегда собранный, энергичный, вдохновенный в своем творчестве, одаренный музыкант и дирижер. Звучание хора под его руководством неизменно ярко, эмоционально, жизненно, красочно. Его дирижерская рука, как смычок Паганини, создает творчески оправданные краски хорового звучания при ясности замысла и тонкой передаче оттенков в исполняемом произведении, что заставляет просто преклоняться перед его талантом»<sup>4</sup>. Эти слова написали хормейстер К.Касторская и композитор А.Соболев из Ленинграда (ныне Санкт-Петербург). «Книга отзы-

<sup>3</sup> Առաքելյան Ս., Հովհաննես Չեքիճյան, Երևան, 2014, էջ:

<sup>4</sup> Там же.

вов» стала нескончаемым потоком искреннего восхищения и высокой оценки творчества маэстро.

Оганес Чекиджян является дирижером «широкого профиля», которому подвластны все художественные направления, стили и жанры музыки. Он с успехом дирижирует произведениями, созданными в разное время: Средневековье, Ренессанс, Барокко, Классицизм, Романтизм, музыка XX и XXI веков. На мой вопрос, имеются ли в его творчестве какие-либо предпочтения относительно времени написания, художественного направления, композиторской школы, личности композитора или конкретного произведения, О.Чекиджян ответил следующим образом: *«Любая хорошая профессиональная музыка, в первую очередь – музыка, которую я выбрал для исполнения, она в какой-то степени становится моей, и я должен постараться проникнуть в замысел композитора. В интерпретационном плане очень важно строить правильную форму, которая уже заложена в произведении, и с этой точки зрения важно не ошибиться и стремиться к совершенству для того, чтобы выявить душу данного произведения, которое исполняешь. Вместе с тем, «совершенства» не существует, просто надо стремиться к постоянному улучшению звучания, уточнению стилистики, интонации как в акустическом плане, так и в стилистическом».*

По этому поводу стоит вспомнить строки статьи композитора В.Пасхалова, в которой автор выражает свое восприятие интерпретации Чекиджяном концертной программы, услышанной в Москве: «...Пламенная фантазия и творческая воля Чекиджяна, помноженные на огромную эрудированность и культуру, способствуют созданию настоящих исполнительских шедевров. Жест Чекиджяна очень конкретен: молниеносно очерчивает он в пространстве нужный ему в данное мгновение штрих – прочнейшие психологические нити связы-

вают его как с певцами, так и со слушателями»<sup>5</sup>. Эту мысль как бы продолжает выдающийся певец XX века И.Козловский: «Бетховенскую симфонию, также впервые здесь прозвучавшую, «Мессу» И.С.Баха и «Те Деум» Берлиоза О.Чекиджян преподнес в безупречном исполнении, с большим пафосом и глубиной. Не всякий дирижер осмелился бы подобной программой выступить перед москвичами. И к чести Чекиджяна надо сказать, что он выдержал здесь большой экзамен. Коллективы и блестящие солисты слились вместе с дирижером. Государственная капелла Армении, как всегда, была потрясающа. Я испытывал на этих вечерах непередаваемые минуты наслаждения»<sup>6</sup>. Этот высочайший исполнительский уровень, которого достиг Оганес Чекиджян уже в 1970-е годы, принес свои плоды и в оценке его творчества Арамом Хачатуряном. В одном из писем, обращенных к Чекиджяну, он пишет: «Ты очень большой музыкант и обладатель огромного таланта... Беспощадно требуй высокого художественного уровня и смело избавляйся от посредственностей. Постарайся записывать свой репертуар на пленку и пластинку в Москве, в Ереване и за границей...»<sup>7</sup>. Этому совету маэстро следует по сей день, точно определяя высокий уровень исполнительских интерпретаций, записывая пластинки, а теперь уже аудио- и видеодиски (CD, DVD). Отзывы об исполнительском мастерстве капеллы многократно выражались в прессе и специализированных профессиональных публикациях, в которых говорится о том, что интерес к этому самобытному очагу музыкальной культуры не угасает. Из года в год, от концерта к концерту растет восхищение уникальным звучанием коллектива, силой его эстетического воздействия на слушателя. На концерты капеллы всегда

<sup>5</sup> Там же.

<sup>6</sup> Там же.

<sup>7</sup> Арам Хачатурян, Письма, Ереван, 1983, стр. 150-151.



идешь как на праздник, с ожиданием радостных художественных откровений, соприкосновений с прекрасным миром музыки.

О.Чекиджян, наверное, был первым, кто отважился в советской стране исполнять жанры духовной церковной музыки: «Мессу» И.С.Баха, «Реквием» Моцарта, «Реквием» Верди, «Немецкий реквием» Брамса, «Те Деум» Берлиоза, «Патараг» Екмаляна, Комитаса и сочинения других авторов. Это грандиозная монументальная музыка, которая подвластна не каждому дирижеру, требует невероятной самоотдачи, внутреннего напряжения, уверенности, силы и многих качеств, без которых невозможно близко подойти к этому выдающемуся проявлению человеческого духа и еще чего-то очень важного... На мой вопрос, есть ли у него какие-либо особые предпочтения, он ответил: *«Каждое из исполняемых произведений – огромный мир, который до конца невозможно объять. Когда соприкоснешься с партитурой, изучаешь, вникаешь в то, что написано, в мельчайшие подробности, осознаешь, что необходимо понять замысел автора, выявить и строить драматургию музыки, в каждом случае – свою, индивидуальную. Вместе с тем, есть нечто, что неподвластно человеческому сознанию, что находится вне исполняемого сочинения, находится над сиюминутным отношением или звучанием. Это – божественное присутствие, которое чувствуется, которое ощущаешь. Композиторы, которые создавали эту музыку, несомненно, были глубоко верующими людьми, и эти сочинения озарены присутствием Господа. Поэтому они так прекрасны и проникновенны, в них есть трагическое начало, но нет сентиментальной слезливости.*

*С программой духовной музыки я имел концерт в Париже, в соборе Парижской богородицы (Нотр-Дам). У нас была репетиция, в процессе которой надо было определить, что я делаю, как звучит*

*хор, как все должно происходить. Почти до конца репетиции невозможно было понять, как это будет. И вдруг, в самом конце, на меня снизошло понимание того, каким образом эту музыку надо исполнять, что самое важное, как расставить акценты и т.д. Концерт прошел блестяще...».*

Кроме обширной классической программы, на концертах Чекиджяна звучит также и современная музыка. Я помню филигранное исполнение хором а capella произведения Кшиштофа Пендерецкого «Stabat mater» в Ереване, в дни Третьего фестиваля, посвященного этому выдающемуся, всемирно известному композитору. Это сочинение написано в авангардный период творчества Пендерецкого, в нем использована сложная современная композиторская полилинейная техника. Музыкальная мысль распределена между тремя хорами, которые должны были стоять в разных концах зала, и звучание должно было объединяться стереофонически. Кроме того, здесь использовано акустически сложное сплетение полифонических голосов, микрохроматические сдвиги и наложения разных голосов. На вопрос о том, как ему удалось создать иллюзию трехмерного звучания четырехголосных хоров, при том, что все стояли на одной сцене, маэстро ответил: *«Зал нашей филармонии не имеет возможности пространственного распределения хоров, поэтому мы всех поставили вместе, на одной сцене. Звучание капеллы очень понравилось автору этого произведения. После концерта Кшиштоф Пендерецкий высказался следующим образом: «Не думал, что созданное мною произведение «Stabat mater» будет исполнено настолько глубоко, так мастерски, так искусно. Удивляюсь, что хор спел наизусть. Я счастлив, что удостоился такого великолепного исполнения моего произведения».*

Что касается сложных современных сочинений, организованных новыми средствами музыкального мышления, с использованием ала-

торики, свободной метрики, гармонических жестких и вибрирующих кластеров, состоящих из четвертьтоновых наложений 12-ти голосов трех четырехголосных хоров, как в произведении Пендерецкого, и других сложностей интонирования, казалось, что академическая капелла, воспитанная в других эстетических критериях, не сможет войти в эту новую эстетику звучания. «Конечно, «Stabat mater» акустически очень сложное для точного интонирования произведение 60-х годов XX века. Если там использованы интервалы, между которыми расстояние меньше полутона, то в певческом исполнении они должны звучать точно, чтобы получилась именно та краска, та эмоция, которую вложил в произведение композитор. Думаю, что нам это удалось», – говорит маэстро.

Чекиджян является одним из самых компетентных знатоков творчества великого классика, гения армянской музыки Комитаса. На протяжении всего творческого пути маэстро многократно исполнял все хоровые произведения Комитаса, вызывая восторг и бурю эмоциональной отдачи слушателей. Во всех концах земного шара, где бы ни выступала Государственная академическая капелла Армении, звучала музыка Комитаса – или в контексте концертной программы, или как отдельная программа, или как исполнение на «бис». Известный армянский музыковед А.Шавердян называл крупные произведения Комитаса «хоровыми симфониями». К ним относятся «Գրգիսի երգ», «Հոլի օրի երգ», «Չալի երգ», также заслуживают внимания великолепные хоровые обработки лирических песен «Լուսինի կը փրկի», «Անձրևն եկավ», «Եղնիկ», «Աննն, եթա՛մ իմ յարը», «Արևը կաշի՛ն յուր» и другие. Эти потрясающие по красоте произведения звучат в исполнении капеллы особенно выразительно, тепло, с естественной национальной окраской. Чекиджян прекрасно владеет секретами звучания армянской национальной музыки. По этому поводу

маэстро говорит: «*Есть много примеров исполнения Комитаса разными хорами во многих странах, и мы с удовольствием принимаем то, что они любят музыку Комитаса, озвучивают, поют его произведения. Зачастую очень качественно и интонационно чисто поют ноты, которые там написаны, однако, чтобы получилось истинно национальное звучание, необходимо хорошо знать ладовую основу армянской музыки, все секреты гармонического наклона ладов, все понижения и повышения звуков, как Вы сказали – микрохроматики. Это связано с народным интонированием, с обертоновыми наклонами звуков. Думаю, что именно эти особенности национального интонирования и придают определенное качество звучанию произведений Комитаса в исполнении капеллы.*»

Определения Чекиджяна точны и поэтичны: «Комитас – это эпос нашей песни, а народная музыка – хлеб нашей песни». Конечно, под «хлебом» маэстро подразумевает основу, на которой зиждятся все последующие достижения армянской профессиональной музыки. Он исполнял все лучшие хоровые произведения армянских композиторов, создал целый художественный пласт в мировой музыкальной культуре. И каждый концерт имеет свой программный репертуар, свою драматургию построения данного выступления. Есть еще выступления на «бис», которые сопровождают все концерты капеллы под управлением маэстро. На мой вопрос, есть ли определенная программа из произведений исполняемых на «бис», Чекиджян ответил: «*Начало и завершение концерта – это разные вещи, разные состояния. То, что может быть спето на «бис», после программы, заранее не планируется. Общее напряжение, которое возникает после исполнения объявленной обязательной концертной программы, несомненно, способствует невероятно острой активности восприятия артистов капеллы. Я смотрю в зал, где мы выступаем, на слушателей, перед*

*которыми мы выступаем... После чего называю хорю произведение или несколько друг за другом идущих «бисовых» номеров, и мы поем. Иногда исполняем произведения, которые долгое время не репетировали, но поем на «бис», и получается даже лучше, чем с многократными репетициями».*

Значит, хор с полуслова, с полувзгляда понимает маэстро, сразу выступает с многоголосной музыкой. Это похоже на мистику, на загадочный феномен, который трудно объяснить... *«Мистических, загадочных моментов на наших концертах много, так как в процессе исполнения возникает некая божественная аура, ощущение невероятной близости с поющими артистами, с залом, со слушателями. Возникает общность, легкость, какое-то комплексное восприятие всего: пространства зала, его конфигурации и акустики, цвета кресел, общей цветовой гаммы сидящих в зале людей, дыхания зала и еще многих других факторов. Это и есть концертное состояние. Мы с радостью поем для своих слушателей».*

Эстетика Оганеса Чекиджяна формирует его отношение к жизни, к искусству. Гуманизм его творческой позиции, полная самоотдача в музыкальном искусстве, хоровом исполнительстве, создали ему славу Великого Маэстро, блестящего, выдающегося дирижера-исполнителя, композитора, профессора Ереванской государственной консерватории имени Комитаса, который делится со студенческой молодежью секретами хорового дирижирования. Поздравляю с юбилеем, желаю долгой молодости и активной творческой деятельности, дорогой Маэстро.

**ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ**  
 արվեստագիտության թեկնածու,  
 ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ  
 ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ**

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր, Երևանի պատվավոր քաղաքացի, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանը (ծնվ. 1929) համաժողովրդական ճանաչում, մեծ հոչակ և սեր վայելող արվեստագետ է:

Բազմաթիվ և բազմապիսի պարգևները՝ հուշամեդալները, մրցանակները, պատվոգրերը, Չեքիջյանի մեծության լուռ վկաներն են: Իսմբերգային արվեստի ականավոր վարպետի գործը մնայուն է. այն դրոշմվել է միլիոնավոր ունկնդիրների սրտերում և վավերացվել ծայնագրություններում և տեսագրություններում: Միևնույն ժամանակ Մաեստրոյի վառ անհատականությունը, ստեղծագործական դիմանկարը արվեստում հավերժացրել են հայ կերպարվեստագետները՝ նկարիչներ Ռուդոլֆ Խաչատրյանը, Արամ Սարիբեկյանը, ռեժիսոր, ծաղրանկարիչ Վարդան Աճեմյանը և քանդակագործներ Լևոն Թոքմաջյանն ու Էդուարդ Շախիկյանը:

ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ, տաղանդաշատ գեղանկարիչ, գրաֆիկ **Ռուդոլֆ Խաչատրյանի** հեղինակած դիմանկարների հարուստ պատկերաշարում իր արժանի տեղն է գրավում Մաեստրո Չեքիջյանի նկարը (1977):

«Գծի պոետը» (Մ. Լազարև)<sup>1</sup> հավատարիմ է մնացել իր վառ տա-

ղանդին. փոքրադիր այս գծանկարը գրաֆիկական արվեստի ինքնուրույն, ավարտուն ստեղծագործություն է, գեղարվեստական արտահայտչականությամբ օժտված, խորապես բովանդակային դիմանկար:

Բաց և մուգ երանգների, զուսպ և լակոնիկ, ընդհանրացված գծերի դաշնավորությամբ լևկասի ճյունաճերմակ ֆոնից երևան է գալիս մեծ արվեստագետի, մտավորականի կերպարը:

Հրաժարվելով խարակտերային դիրիժորական ժեստից և այլ մանրամասներից՝ նկարիչը կենտրոնացել է Մաեստրոյի դեմքի վրա: Կոմպոզիցիայի անկյունագծային ռիթմը՝ գլխի դիրքը, լույսի ու ստվերի կտրուկ կոնտրաստային հակադրումը, ինչպես նաև Մաեստրոյի մտասույզ-հայեցողական հայացքն արտահայտում են նրա ներքին հույզը, լարված հոգևոր աշխատանքը: Միևնույն ժամանակ ճերմակ լևկասի լուսափայլությունն ասես շրջապատում է դիմանկարը՝ նրան հաղորդելով խորհրդավորություն: Արվեստաբան Արարատ Աղասյանը գրում է. «Հետևելով ռուս սրբանկարիչների օրինակին՝ Ռ. Խաչատրյանն աշխատում է նաև կավճե հատուկ գրունտով (լևկաս) պատված տախտակի վրա...», ինչը «ոչ միայն շեշտում ու էլ ավելի հատու է դարձնում գծանկարի նրբագեղ, ազնիվ, պարզ մաքրությունը, այլև հոգևոր մի այլ խորությամբ, արտաժամանակ մի նոր չափումով և խորհրդավոր, սրբազնական նշանակությամբ օժտում մարդկանց դեմքերն ու առարկաները»<sup>2</sup>:

Այսպիսով, սպիտակափառ, լուսափայլ լևկասը, մանրամասների բացակայությունը կերպարն օժտել են վերժամանակային հնչեղությամբ: Լուռ, զուսպ, ներամբողջական մարդ-անհատ. ահա այսպիսին է խաչատրյանական Չեքիջյանը:

Կոմպոզիցիոն մտահղացմամբ, գլխի դիրքով, կիսախուփ աչքերի ցած նայող հայացքով, հոգեբանական բնութագրմամբ և ընդհա-

<sup>1</sup> **Лазарев Михаил.** Рудольф Хачатрян. Рисунок. Москва, Изобразительное искусство, 1986 (без пагинации).

<sup>2</sup> **Աղասյան Արարատ,** Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, էջ 186:

նոր տրամադրությամբ Իսախանյանի հեղինակած դիմանկարին մոտ է անվանի քանդակագործ Լևոն Թոքմաջյանի կերտած դիմաքանդակը: Մաեստրոն լուռության, խոկումի, մտահայեցողության մեջ է: Մինչև նույն ժամանակ քարը կերպարին կշիռ, ուժ և մոնումենտալություն է հաղորդել՝ նոր երանգներ ավելացնելով խաչատրյանական մեկնաբանման մեջ: Դրան են նպաստել նաև պլաստիկական լայն ընդհանրացումները, ավելորդ, կերպարը ծանրաբեռնող մանրամասների բացակայությունը: Գրանիտի անհարթ և անողորկ ֆակտուրան նախասկզբնական ստեղծարար ուժի և Մաեստրոյի անհանգիստ բնավորության պլաստիկ թարգմանն է: «Ես ծնված եմ դժվար գործի համար: Ես անհանգիստ մարդ եմ», «Կուզենայի նավապետ լինել, ալիքների հետ մաքառել», ասում է Չեքիջյանը: «... Մաեստրոն 52 տարի շարունակ կարողացավ հաղթահարել ժամանակի կարծրատիպերը, դժվարին բոլոր արգելքները և աշխարհին պարզել, ըստ Սիլվա Կապուտիլյանի, «Հայաստանի մոնումենտալ պատկերը ներկայացնող երգչախումբ»...»,– նկատել է կապելլայի մենակատար, Հայաստանի ժողովրդական արտիստ Ալբերտ Իսախանյանը<sup>3</sup>: Հենց այդպիսին է թոքմաջյանական Չեքիջյանը՝ հսկայական ներուժով տոգորված «մոնոլիտ» անհատ:

Եթե Ռուդոլֆ Իսախանյանը ծանոթացել էր Մաեստրոյի հետ իր եղբոր՝ Ալբերտ Իսախանյանի միջոցով, ապա Թոքմաջյանն ինքն է երկար տարիներ երգել Չեքիջյանի ղեկավարած երգչախմբում: Անվանի քանդակագործն այսօր էլ երախտագիտությամբ է հիշում իր ուսուցչին. «...Մաեստրո Չեքիջյանն ինձ սովորեցրեց այն, ինչը ես չսովորեցի քանդակագործի իմ 11 ուսումնառության տարիներին: Այն է՝ ամեն ինչում լսելի և շոշափելի դարձնել երաժշտությունը, քարը տաշել այնքան, մինչև նրա միջից դուրս ժայթքի երգը, մեղեդին... Շնորհակալ

<sup>3</sup> Իսախանյան Ալբերտ, Մաեստրոյի ծննդյան 85-ամյակին ընդառաջ // «Ազգ», 19 նոյեմբերի, 2013:

եմ իմ սիրելի Մաեստրո. դու միշտ ինձ հետ ես, իմ մտքերի, իմ ամենաուրախ և ամենատխուր պահերին: Դու անմահ ես...»<sup>4</sup>:

Պետական ակադեմիական երգչախմբում ցայսօր երգում է անվանի քանդակագործ, ՀՀ վաստակավոր նկարիչ Էդուարդ Շախիլյանը, որի կյանքում նույնպես երաժշտությունն ու քանդակագործությունը միահյուսված են ու անբաժան:

Իր ժամանակակիցների՝ Շառլ Ազնավուրի, Արամ Իսախանյանի, Կոմիտասի անվան լարային քառյակի, Վարդգես Պետրոսյանի և այլոց դիմաքանդակների շարքում առանձնակի տեղ է գրավում Մաեստրո Չեքիջյանի՝ Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում պահվող բրոնզաձուլ քանդակը:

Կոմպոզիցիոն դինամիկ լուծմամբ, լուսաստվերի թրթռուն խաղով ու ցուլանքներով աշխուժացած, շնչավորված այս բրոնզաձուլ քանդակը բացահայտում է Մաեստրոյի հուզական ներաշխարհը: Քանդակագործին հաջողվել է հիշողությամբ վերարտադրել անվանի դիրիժորի արտիստիկ, հանդիսավոր և միաժամանակ խորհրդավոր կեցվածքը, ժեստը, նայվածքը:

«Կա մի պահ, մի արարչական, կախարդված պահ կա, - հիշում է քանդակագործը, - երբ մարում են խմբերգի վերջին հնչյունները, ու դահլիճում քար լուռություն է տիրում... Մենք՝ երգիչներս, արձանացած ենք շարքում, Մաեստրոն՝ աչքերը փակ, զմայլանքը դեմքին, ձեռքերը ճախրանքի ակնթարթում սեպված... Իսկ դյուրված հանդիսատեսը զգացմունքների բոլոր նյարդերով դեռ երաժշտության հիպնոսի մեջ է: Ու հանկարծ... հանկարծ դահլիճը սթափվում է, ու մեկից թնդում են ծափերը, վերածվում ծափողույնների... ամեն անգամ, երբ վրա է հասնում այդ ակնթարթը, ես ակնդետ նայում եմ Մաեստրոյի արձանացած, արտիստիկ կեցվածքին ու մտովի «վերնագրում» եմ նրան՝

<sup>4</sup> Տե՛ս Առաքելյան Սերգեյ, Հովհաննես Չեքիջյան, Երևան, «Լուսակն», 2014, էջ 214:

Հմայված լուռության ասպետ...»<sup>5</sup>:

Ասես այդ ակնթարթն է բրոնզում հավերժացրել Շախիկյանը: Եվ ուրեմն՝ հպանցիկ, գրեթե իմպրեսիոնիստական տպավորություններով ներշնչված այս քանդակը միավորում է վաղանցիկը և մշտնջենականը: Մտքին է գալիս Մաեստրոյի քառատողը.

«Տիեզերքի անծայրության հետ համեմատած՝ մի փոշու հատիկ էլ չենք:

Աստղերի համեմատությամբ իմ կյանքն ի՞նչ է՝ ակնթարթ:

Այդ ակնթարթում էլ պիտի աշխատել մի լուցկի վառել,

Եվ հավատալ այդ ակնթարթի հավերժությանը»<sup>6</sup>:

Շախիկյանը բրոնզի մեջ դրոշմել է նաև Մաեստրոյի արտիստիկ և պլաստիկ ձեռքերը՝ դիրիժորի «կախարդական փայտիկով» (Պ. Սևակ)՝ ձգտելով որսալ դրանցում թաքնված առեղծվածը: «Չեքիջյանի ձեռքերն էլ են երգում, - նկատել է ռեժիսոր, մշակութաբան Լաերտ Մովսիսյանը, - ...Այդ ձեռքերը սեր են արարում մեզ համար: Դրա համար էլ «Ստաբաթ Մատերը» ողբից վերածվում է արարումի»<sup>7</sup>:

Աշխարհահռչակ դիրիժորի, խմբավարի խարակտերային ժեստը, ուշադիր, ակնապիշ նայվածքը մաքսիմալ արտահայտչականության է հասցրել անվանի ռեժիսոր, դերասան, ծաղրանկարիչ Վարդան Աճեմյանն իր ընկերական շարժում: Ինչպես իր մատիտանկար-շարժերի հարուստ պատկերաշարի մյուս հերոսների՝ Լևոն Հախվերդյանի, Հրաչյա Ներսիսյանի, Մետաքսյա Սիմոնյանի, Տաթևիկ Սազանդարյանի և այլոց պարագայում, այս անգամ ևս Աճեմյանի սուր դիտողականությունը երևան է հանել բնորդի «դիմագիծը»՝ թատերական դիրքի, դինամիկ ոճի միջոցով շեշտելով Մաեստրոյի արտիստիզմը,

<sup>5</sup> **Շախիկյան Էդուարդ**, Հմայված լուռության ասպետը // «Օրինաց երկիր», 30 հունվարի, 2004:

<sup>6</sup> **Առաքելյան Սերգեյ**, Հովհաննես Չեքիջյան..., էջ 3:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 51-52:

ստեղծագործական պոռթկումը համերգի պահին, որպես «թռչող մարդ, որ անձից արտաբերվող սոսկալի ուժով պայքարում է ութսուն ոտխներու դեմ»<sup>8</sup>: Անվանի ռեժիսորի մեկնաբանմամբ. «Ես հենց այսպիսին եմ տեսել Հովհաննես Չեքիջյանին՝ միշտ թռչչի մեջ, շարունակ որոնող, մշտապես ոգեշնչված, անվերջ բարձրացող...»<sup>9</sup>:

«Դարաշրջանի երաժշտության մեծագույն ֆենոմենի» («Le Soir»)<sup>10</sup> Հովհաննես Չեքիջյանի կերպարի և գործունեության հանդեպ իրենց հիացմունքն են արտահայտել նրա համերգներին հաճախած անվանի հայ նկարիչները: «...Չեքիջյանը պարզապես Աստծո պարզ է և միայն նրա հայրենակիցը լինելու համար արժե հայ ծնվել: Ինձ համար նույնացան Դավթի Թուր Կեճակին ու Չեքիջյանի մոզական փայտիկը...», - ասել է Երվանդ Քոչարը<sup>11</sup>: Մարտիրոս Սարյանը նույնպես շատ բարձր է գնահատել Մաեստրոյի ստեղծագործությունը. «Ժողովրդի դառը ճակատագրից ծնված Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Եկամայանի երգերը Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ ու ղեկավարությամբ հնչում են այնքան վեհ և այնպիսի խոնարհ իմաստնությամբ, որ լցվում-լիանում են այրող ու մաքուր բոցով... Բախտավոր ու հպարտ ենք մեր Չեքիջյանով»<sup>12</sup>: «Վեհանուն Չեքիջյանի» (Գր. Խանջյան) ազգանվեր գործունեության առեղծվածը, ըստ Գրիգոր Խանջյանի, «երգ Արարելու-Ստեղծելու մեջ է, իր մեջ հողի օրհնությունը կրող կոմիտասյան մեղեդուն նոր շունչ ու իմաստ տալու և բեմի վրա ժանյակների շարան հիշեցնող իր արտիստներից միջնադարյան որմնակար հյուսելու մեջ»<sup>13</sup>: Հակոբ Հակոբյանը մեծ սիրով, ուրախությամբ ու

<sup>8</sup> **Ասատրյան Աննա**, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, «Ամրոց Գրուպ», 2009, էջ 68:

<sup>9</sup> **Առաքելյան Սերգեյ**, Հովհաննես Չեքիջյան..., էջ 94:

<sup>10</sup> **Ասատրյան Աննա**, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան..., էջ 67:

<sup>11</sup> **Առաքելյան Սերգեյ**, Հովհաննես Չեքիջյան..., էջ 18:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 97:

հուզումով էր լսում Չեքիջյանի երգչախմբի կատարումները, քանի որ այն, ինչ հայկական է, ասել է նկարիչը. «հուզիչ է ինձ համար ու հարազատ, իսկ Չեքիջյանը հայերենի ու հայկականի մեծ դեմք է: Անհատականություն»<sup>14</sup>:

Մասետրոյի կերպարը շարունակում է հարուցել կերպարվեստագետների հետաքրքրությունը և հիացմունքը: Եվ պատահական չէ, որ 2001-ին Սանկտ Պետերբուրգից Երևան ժամանած հայազգի նկարիչ Արամ Սարիբեկյանն առաջարկեց վրձնել անվանի խմբավարի դիմանկարը: Սանկտ Պետերբուրգի բնակիչ, ազգությամբ հայ նկարիչ՝ իր ժամանակակիցների՝ մեծամասամբ ռուս և հայ քաղաքական, հասարակական, մշակութային անվանի գործիչների դիմանկարների պատկերաշարը հասնում է 500-ի: Հայաստանում Սարիբեկյանը ցուցահանդես է կազմակերպել 2001-ին, որը նվիրել է քրիստոնեության ընդունման 1700-ամյակին: 2002-ին ցուցահանդեսի բոլոր դիմանկարները նվիրվել են հասցեատերերին: Հենց այս ծրագրի շրջանակներում է պետերբուրգցի նկարիչը դիմել Չեքիջյանին և նրա դիմանկարն ավարտելուց հետո՝ որպես հարգանքի տուրք և ընծա մատուցել այն Մասետրոյին:

Հավարտ խոսքիս՝ ցանկանում եմ մաղթել «խմբերգային արվեստի մարշալին»<sup>15</sup>, «հայ երգի նավապետին»<sup>16</sup>, հոգեհարուստ հայորդուն երկար տարիների ստեղծագործական կյանք՝ մեր դարին այնքան անհրաժեշտ հոգևոր հացը՝ սերը, հավատը և խաղաղությունը, տարածելու, հայ ազգային երգարվեստը բարձր մակարդակի վրա պահելու, ինչպես նաև կերպարվեստագետների համար ներշնչանքի աղբյուր ծառայելու համար:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> **Ասատրյան Աննա**, Ամենայն հայոց մասետրոն. Հովհաննես Չեքիջյան..., էջ 7:

<sup>16</sup> **Առաքելյան Սերգեյ**, Հովհաննես Չեքիջյան..., էջ 287:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

արվեստագիտության թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ՝ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ**

Հովհաննես Չեքիջյանի գործունեության երեք կարևոր բնագավառներից է ստեղծագործությունը<sup>1</sup>:

Չեքիջյան կոմպոզիտորի ժառանգությունը ներառում է վոկալ-սիմֆոնիկ հետևյալ ստեղծագործությունները.

- 1.«Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը՝ գրված Վահան Տերյանի քնարական բանաստեղծությունների հիման վրա երկու մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար:
2. «Ազատության ղողանջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը՝ գրված Սիլվա Կապուտիկյանի խոսքերով: Կոմպոզիտորն այն նվիրել է Ա. Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին:

Չեքիջյանի ժառանգության գողտրիկ էջերից է «Մեկիկ-մեկիկ» a cappella ստեղծագործությունը, որը բազմիցս հնչել է Երևանում, Լեւինգրադում և շատ ու շատ այլ քաղաքներում:

Չեքիջյան խմբավարն իր ստեղծագործության մեջ, բնականաբար, մեծ տեղ է հատկացրել երգչախմբին, ինչը երգչախմբի համար կատարած փոխադրումների հիմք է դարձել: Դրանց թվում են Անտոնին Դվորժակի Հինգերորդ սիմֆոնիայից մի մասը, հատված Էդվարդ Գրիգի «Պեր Գյունտ» սյուիտից, Շառլ Ազնավուրի «Մեռնել՝ սիրելով», Ալեքսեյ Հեքիմյանի «Հայաստան», Ալեքսանդրա Պախմուտովայի «Հրաժեշտ Մոսկվային» երգերը, հնդկական ժողովրդական երգը և Նորվեգական պարը:

Մեր զեկուցման մեջ մենք կանդրադառնանք Չեքիջյանի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններին՝ «Ազատության ղողանջներ» և «Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմներին:

1963 թվականի նոյեմբերի 17-ին Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի ունեցավ Արամ Խաչատրյանի մեծարման երեկոն: «Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը և պետական երգչախումբը կատարեցին դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի՝ Ս.Կապուտիկյանի խոսքերով գրված նոր ստեղծագործությունը, որը նվիրված էր Ա.Խաչատրյանին», - կարդում ենք «Սովետական Հայաստան» օրաթերթի նոյեմբերի 19-ի համարում<sup>2</sup>: Խոսքը Հովհաննես Չեքիջյանի «Ազատության ղողանջներ» ստեղծագործության մասին է, որն ունի մեկ այլ անվանում ևս՝ «Ձոն Արամ Խաչատրյանին»: Մեր անձնական զրույցում ավելի քան հիսուն տարվա վաղեմության իրադարձության մասին Մատեստրոն հիշեց հետևյալը. «Պետք է տոնվեր ճանաչված կոմպոզիտոր և մեր ազգի պարծանք Արամ Խաչատրյանի ծննդյան 60-ամյա հոբելյանը: Այդ առիթով առանց կողմնակի խորհրդի ինքս շատ ցանկացա գրել ստեղծագործություն Սիլվա Կապուտիկյանի խոսքերով: Ստեղծագործության առաջին պրեմիերան մեծ ընդունելություն ունեցավ: Արամ Խաչատրյանն էլ շատ ուրախացավ և շատ հավանեց: Դիրիժորն էլ ես էի»<sup>3</sup>:

Իսկ ստեղծագործական պրոցեսին հեղինակի մոտեցումը, իր իսկ խոսքերով, դրսևորվել է այսպես. «Ես որ մի բան ուզում եմ ստեղծել, միանգամից չի լինում: Դրա մասին օրեր ու գիշերներ մտածում-մտածում եմ, մինչև գալիս է այն պահը, երբ գաղափարը լիովին հասունանում է, որից հետո սկսում եմ գրել: Կարծում եմ, շատերի մոտ է այդպես: Ստեղծագործությունը ավարտելուց հետո, երբ բավական

<sup>1</sup> Տե՛ս **Ասատրյան Աննա**, Ամենայն հայոց մատեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 114:

<sup>2</sup> Կոմիտասի և Սպենդիարյանի տրադիցիաների շարունակողը, «Սովետական Հայաստան», 19 նոյեմբերի, 1963:

<sup>3</sup> Հովհաննես Չեքիջյանի հետ անձնական զրույցից:



ժամանակ է անցնում, կիսամոռացած վիճակում նորից անդրադառնում եմ նրան: Տպավորությունը, այդ պահը որ գալիս է, նրա ազդեցության տակ արդեն ստեղծագործում եմ: Ես կարծում եմ, որ բոլոր ստեղծագործողների ճանապարհը նույնն է՝ լինի քանդակագործ, գրող, թե կոմպոզիտոր»<sup>4</sup>:

Այս ստեղծագործությունը բաղկացած է երկու մասից: Ստեղծագործության խոսքերը հետևյալն են:

*Դու՛ սրահար ժողովրդի  
Ցավից ծնված արու որդի.  
Ով եկել է մեր դեմ սրով՝  
Դու հաղթեցիր սրապարով:*

*Ով մեր լացն էր լսել միայն,  
Մեր ծիծաղը տարար նրան.  
Ու շառաչեց քեզնով կրկին  
Հայոց երգը թուր կայծակին:*

*Արամ՝ որդի Արամա տան,  
Դու շեփորն ես մեր հարության,  
Քեզ՝ երկար կյանք, հույզ ու ավիդ,  
Գողթան երգի մեծ շառավիղ:*

Ամբողջական ստեղծագործության ոգին ունի շատ լայն մտքի շառավիղ, որը պարունակում է հանդիսավոր հիմն, սեր, հույզեր, լիրիկական պոեզիայի տարրեր և հեղինակի մեծագույն հարգանքը Արամ

<sup>4</sup> Հովհաննես Չեքիջյանի հետ անձնական զրույցից:

Խաչատրյան անձնավորության-մտավորականի հանդեպ, իր ունեցած սերը:

Մյուս վոկալ-սիմֆոնիկ պոեմը, որին անդրադառնալու ենք, կոչվում է «Գարնանային անուրջներ»: Ստեղծագործությունը, ըստ էության, հեղինակի հարգանքի տուրքն է Վահան Տերյանի հանճարի առջև: Բանն այն է, որ Վ.Տերյանը Մաեստրոյի ամենասիրելի բանաստեղծն է<sup>5</sup>:

«Գարնանային անուրջներն» ստեղծվել է 1975-ին: Պրեմիերան տեղի է ունեցել 1977 թվականի հունվարի 10-ին և 11-ին Լենինգրադի ֆիլհարմոնիայի Դ.Շոստակովիչի անվան մեծ համերգասրահում համերգի ընթացքում՝ ի շարս Այտընյանի «Պատարագի», Արամ Խաչատրյանի «Ձոն ցնծության» և Բեռլիոզի «Te Deum»-ի: Մենակատարներն էին Աննա Նշանյանը և Գեղամ Գրիգորյանը: Երգեհոնի նվագամասը կատարեց Կարլեն Թոփչյանը<sup>6</sup>: «Համերգի երկրորդ պրեմիերան Հովհաննես Չեքիջյանի «Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմն էր՝ ծոնված սիրուն, զարթոնքին, մարդկային ուրախություններին: Կոմպոզիտորի ապրումներն ու հոգեկան խռովքը հնչում էին երգչախմբի, սիմֆոնիկ նվագախմբի և մենակատարների միաձույլ ձայնով՝ ամբողջանալով կենսահաստատ ու ցնծագին վերջերգում: Մեներգով հանդես եկան երգիչ Գեղամ Գրիգորյանը և ՀՍՍՀ վաստակավոր արտիստուհի Աննա Նշանյանը»<sup>7</sup>:

Լենինգրադի ֆիլհարմոնիայի գեղարվեստական ղեկավար Վիտալի Ֆոմինը նկատեց. “Здесь, в Ленинграде мы впервые услышали и талантливое сочинение самого Оганеса Чекиджяна – вокально-симфоническую поэму “Весенние грезы”. Исполнители – заслуженная

<sup>5</sup> Ասատրյան Աննա, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, էջ 115:

<sup>6</sup> Տե՛ս համերգի ծրագիրը, Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

<sup>7</sup> Վարդանյան Ռուբեն, Պրեմիերաներ՝ Լենինգրադում, «Սովետական Հայաստան», 1 փետրվարի, 1977:

артистка Армянской ССР Анна Ншанян и солист Ереванского оперного театра Гегам Григорян с большим успехом были приняты взыскательными ленинградскими слушателями”<sup>8</sup>.

Լենինգրադում «Գարնանային անուրջները» հնչում է Կապելլայի՝ 1982 թվականի հյուրախաղերի ժամանակ՝ ապրիլի 15-ին և 16-ին<sup>9</sup>: Այս անգամ մենակատարն էր ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Յիսանա Թաթիշվիլին: Թբիլիսիի Ջ.Փալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մեներգչուհին նկատեց. “Выступление с капеллой Чекиджяна – большая радость для меня. Рада, что открыла для себя и Чекиджяна-композитора, приняла участие в исполнении его вокально-симфонической поэмы “Весенние грезы””<sup>10</sup>.

1982 թվականի՝ Կապելլայի լենինգրադյան «հյուրախաղերի վերջին ակորդը եղավ Հովհաննես Չեքիջյանի «Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմի կատարումը: Գարուն, սեր, սպասում. այսպիսին է Վահան Տերյանի խոսքերով հնչող երկի ասելիքը: Այս անգամ Տերյանի խոսքերը հնչում էին Կարլ Ջարինի, Յիսանա Թաթիշվիլու շուրթերից ... հայերեն»<sup>11</sup>:

Հետագայում ստեղծագործությունը հնչել է Մոսկվայում, Փարիզում՝ հանրահայտ սոպրանո Լյուբով Կազարնովսկայայի կատարմամբ, ապա ԱՄՆ տարբեր քաղաքներում՝ մասնակցությամբ Հասմիկ Պապյանի ու Գեղամ Գրիգորյանի:

«Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմի հայաստանյան պրեմիերայով եզրափակվեց Արամ Խաչատրյան մեծ համերգա-

<sup>8</sup> И мастерство, и вдохновение, «Коммунист», 2 февраля, 1977.

<sup>9</sup> «Գարնանային անուրջների» կատարման մասին տե՛ս **Դավыдова Е.** Капелла из Армени, «Ленинградская правда», 15 апреля, 1982:

<sup>10</sup> **Сантрян В., Сердобольский О.** Армянской капелле – цветы Ленинграда, «Коммунист», 29 апреля, 1982.

<sup>11</sup> **Վարդանյան Ռուբեն,** Պրեմիերաներ՝ Լենինգրադում, «Սովետական Հայաստան», 29 ապրիլի, 1982:

սրահում սրանից ուղիղ հինգ տարի առաջ՝ 2009 թվականի հունիսի 19-ին տեղի ունեցած Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի համերգի առաջին բաժինը<sup>12</sup>: Մենակատարներն էին Արծվիկ Դեմուրճյանն ու Սարգիս Աղամալյանը:

Հովհաննես Չեքիջյանը այսպես է մեկնաբանում ստեղծագործությունը. «Ես համարում եմ, որ այս ստեղծագործությունն իմ ամենահաջողվածներից է, որովհետև այն գրված է ուրիշ զգացմունքներով, սիրո վերաբերյալ է: Ընդհանրապես, Վահան Տերյանի պոեզիան թողել է ինձ վրա խոշոր ազդեցություն: Կարծում եմ, նրա խոսքերի վրա գրված երաժշտությամբ ինձ հաջողվել է արտահայտել նրա ոգին: Այս ստեղծագործությունը նախորդի պես լավ ընդունելության արժանացավ: Նրանով ես կարևոր քայլ արեցի որպես ստեղծագործող: Ես չեմ ցանկացել, որպեսզի վոկալ հնարավորությունները շատ սահմանափակ լինեն, որովհետև վերևում սի բեկար է, իսկ ներքևում՝ լյա դիեզ, պարզ է, որ դրամատիկ ծայն է պետք: Այսպիսով, ես փորձել եմ արտահայտել միջազգային ոգին, որովհետև սերը չի ճանաչում ազգություն», - ավարտում է իր միտքը Հովհաննես Չեքիջյանը<sup>13</sup>:

Այսպիսով, «Գարնանային անուրջներ» և «Ազատության դղանջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմները, ունենալով իրենց ուրույն վառ դիմագիծը, անկասկած, հարստացնում են հայ երգչախմբային երաժշտությունը՝ շարունակելով Քրիստափոր Կարա-Մուրզայի, Մակար Եկմալյանի, Կոմիտասի և Տիգրան Չուխաճյանի հարուստ կոմպոզիտորական ավանդույթները և հարստացնելով ու լրացնելով նրանց թողած ստեղծագործական ժառանգությունը:

<sup>12</sup> Համերգի մասին տե՛ս **Ասատրյան Աննա**, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հերթական տրիումֆը՝ հայ խմբերգային արվեստի մարշալի ղեկավարությամբ, «Ազգ», 23 հունիսի, 2009, էջ 6:

<sup>13</sup> Հովհաննես Չեքիջյանի հետ անձնական զրույցից:

## ՆԱԻՐԱ ՄԱԴՈՅԱՆ

*Խ.Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան*

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ ԵՎ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Ձեկուցման մեջ փորձել ենք ներկայացնել ՀՀ ԳԱԱ հուշամեդալակիր Հովհաննես Չեքիջյանի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության մեջ միակ երաժիշտ ակադեմիկոսի՝ Արամ Խաչատրյանի առնչությունները: Ժամանակագրական առումով դրանք այնքան էլ տևական չէին, որովհետև, ինչպես գիտենք, Մաեստրոն հայրենիքում հաստատվեց 1961-ին, իսկ դրանից 17 տարի անց՝ 1978թ. մայիսի 1-ին, կյանքից հեռացավ Արամ Խաչատրյանը:

«Շատ բարձր եմ գնահատում Հովհաննես Չեքիջյանի կատարած աշխատանքը: Նա համաշխարհային ընդգրկման դիրիժոր է, խմբերգային արվեստը հասցրել է համամարդկային հնչողության»<sup>1</sup>: Ահավասիկ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, արվեստագիտության դոկտոր Արամ Խաչատրյանի կարծիքը Հովհաննես Չեքիջյանի մասին:

Թեև Հ.Չեքիջյանը 1961 թվականից ապրում ու ստեղծագործում էր Երևանում, իսկ Ա.Խաչատրյանը՝ Մոսկվայում, սակայն երիտասարդ դիրիժորի գործունեությունը չվրիպեց ականավոր կոմպոզիտորի սրատես աչքից: Երևանյան դեբյուտից ընդամենը երեք տարի անց՝ 1964-ի նոյեմբերի 24-28-ը, տեղի է ունենում Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ Կապելլայի առաջին բեմելը ԽՍՀՄ մայրաքաղաք Մոսկվայում:

Ինչպես հետագայում Մաեստրոյի մոսկովյան դեբյուտի մասին կհիշի շախմատի աշխարհի իններորդ չեմպիոն, Հ.Չեքիջյանի բարեկամ Տիգրան Պետրոսյանը. «Հովհաննես Չեքիջյանի հոչակավոր երգչախմբին լսել ու Մաեստրոյի հետ ծանոթացել եմ 1964-ին Մոսկվայում իմ լավ բարեկամ, աշխարհի լավագույն բարիտոններից մեկի՝ Պավել Լիսիցյանի շնորհիվ: Մոսկվայի երաժշտասերներին հեռակա ծանոթ Հովհաննես Չեքիջյանի անունը Չայկովսկու անվան համերգասրահ էր բերել ռուսական երաժշտության գիգանտներին, ինչը մեծ ուրախություն և հպարտություն էր հայերիս համար: Ճեմարահում Արամ Խաչատրյանին շրջապատել էին Եվգենի Մրավինսկին, Նիկոլայ Տիխոնովը, Դմիտրի Կաբալևսկին, Իվան Կոզլովսկին, Սերգեյ Լեմեշևը, Նաթան Ռախլինը, Մարիետա Շահինյանը, Վլադիմիր Ֆեդոսենը, Լենինգրադ հատուկ ժամանած Բորիս Պիոտրովսկին, իսկ քիչ անց եկավ Դմիտրի Շոստակովիչը»<sup>2</sup>:

Արամ Խաչատրյանը ողջունում է իր տաղանդաշատ հայրենակցի մոսկովյան դեբյուտը. «Это – блестящий хор с высочайшей культурой. Во главе капеллы стоит большой музыкант и композитор. Во всем, что он делает, чувствуется новатор... Государственную капеллу Армении можно посылать на гастроли в любую страну. Она гордо пронесет знамя советской культуры»<sup>3</sup>:

Մաեստրոյի անձնական արխիվում պահպանվել են Արամ Խաչատրյանի՝ իրեն հասցեագրած երկու նամակները, որոնք հետագայում լույս են տեսել 1983-ին հրատարակված Արամ Խաչատրյանի նամականիում<sup>4</sup>:

<sup>2</sup> Առաքելյան Սերգեյ, Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2014, էջ 30-31:

<sup>3</sup> Ազդագրերում՝ Հայաստանի երգչախումբը, «Սովետական արվեստ», 1965, N 2:

<sup>4</sup> Տե՛ս Արամ Խաչատրյան, Письма, Ереван, 1983, стр. 138, 150-151:

<sup>1</sup> Ասատրյան Աննա, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 4: «Հայրենիքի ծայն», 1 հունվարի, 1974:

«1968-1969 թվականների համերգային ծրագրի համար» Հովհաննես Չեքիջյանին 1971-ին շնորհվում է համերգային-կատարողական գործունեության բնագավառում 1970 թվականի Հայկական ՍՍՀ պետական մրցանակը<sup>5</sup>: Իսկ ամիսներ անց՝ 1971թ. հուլիսի 14-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ Հ.Չեքիջյանը պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Առաջին շնորհավորանքը հենց Արամ Խաչատրյանից էր: Հուլիսի 15-ին Հ.Չեքիջյանն ստանում է հետևյալ շնորհավորական հեռագիրը. «Дорогой Оганес. Сердечно поздравляю Вас с награждением Орденом Трудового Красного знамени. Желая еще большего расцвета Вашего сверкающего таланта. С любовью, Арам Хачатурян»<sup>6</sup>:

Եվ իսկապես, հետագա տարիները՝ մինչև Ա.Խաչատրյանի մահը՝ 1978 թվականը, իսկապես դարձան խմբավարի շողշողացող տաղանդի ծաղկման տարիներ: Ընդամենը երեք տարի անց՝ 1975-ին, Հ.Չեքիջյանն արժանանում է ԽՍՀՄ Պետական մրցանակի, իսկ 1978-ին նրան շնորհվում է ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչում...

Հովհաննես Չեքիջյանին հասցեագրված կոմպոզիտորի երկրորդ ու ցավոք վերջին նամակը թվագրված է 1977 թվականի դեկտեմբերի 12-ով: Ռուսերեն գրված իր նամակը Ա.Խաչատրյանն սկսում է հայերեն՝ «Սիրելի Հովանես!»<sup>7</sup> Только что по телевизору смотрел передачу о тебе и твоём хоре. Я снова был в восторге от твоего мастерства. Были прекрасны Россини и Комитас.

Я помню в Большом зале Московской консерватории Гуно и что-то еще очень трудное и красивое.

<sup>5</sup> Տե՛ս «Երեկոյան Երևան», 9 ապրիլի, 1971:

<sup>6</sup> Տե՛ս Հ.Չեքիջյանի անձնական արխիվ: Ի դեպ, 1983-ին հրատարակված Ա.Խաչատրյանի նամականիում նշված է այդ հեռագրի սխալ տարբերվող՝ 1972: Տե՛ս Արամ Խաչատրյան, Письма, стр. 138.

<sup>7</sup> Տե՛ս Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

Это письмо я пишу из больницы. Я давно собирался тебе сказать или написать, что я думаю о тебе. Но московская суэта и шумные ереванские встречи не позволяли мне сказать тебе то, что я скажу тебе сейчас.

Меня удивляет, что за очень короткое время ты сумел создать такой хорошей коллектив, который занял не только всесоюзное положение, но и стал известен за границей.

Ведь если собрать 100 прекрасных певцов, то это еще не хор, не творческий коллектив, т.е., я хочу сказать, что для того, чтобы создать художественный коллектив, нужны годы.

Ты очень большой музыкант и обладатель огромного таланта. Государственный хор Армении – один из самых лучших хоров в Советском Союзе. Беспощадно требуй высокого художественного уровня и смело избавляйся от посредственностей.

Постарайся записывать весь свой репертуар на пленку и пластинку. Пиши в Москве, и в Ереване, и за границей.

Ты прекрасно умеешь “инструментировать” для хора – да, я не ошибся, именно инструментовать. У тебя такая большая амплитуда красок и нюансов, что поражаешься.

Ты и твоя деятельность яркое доказательство формулы – “интернациональное и национальное”. Ты сумел свое национальное обратить в интернациональное и сделать свое искусство общечеловеческим.

В больнице у меня много времени, поэтому я имею возможность писать тебе это письмо.

Желаю тебе здоровья и новых успехов. Арам Хачатурян»<sup>8</sup>.

<sup>8</sup> **Առաքելյան Սերգեյ**, Հովհաննես Չեքիջյան, էջ 102: Արամ Խաչատրյան, Письма, стр. 150-151.

Ընդամենը չորս ամիս անց Ա.Խաչատրյանը հեռացավ կյանքից: Սակայն Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի և նրա գեղարվեստական ղեկավարի ու գլխավոր դիրիժորի հետ շարունակեց քայլել նրա երաժշտությունը:

Կապելլայի երկացանկում իր հաստատուն տեղն ունի Արամ Խաչատրյանի «Ձոն ցնծության» ստեղծագործությունը:

Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ 1967-ի հունիսի 5-ին Կրեմլի համերգասրահում տեղի ունեցած՝ Հայաստանի արվեստի վարպետների համերգին հնչում է Արամ Խաչատրյանի «Ձոն ցնծությանը»: Ստեղծագործությունը մեծ հաջողությամբ կատարում է Կապելլան իր լենինգրադյան հյուրախաղերի ընթացքում: Այն հնչում է 1971-ի նոյեմբերի 4-ին Լենինգրադի Շոստակովիչի անվան համերգային դահլիճում, մենակատար՝ Գոհար Գալաշյան: Կապելլան հանդես է գալիս «տեղի ֆիլհարմոնիայի մեծ նվագախմբի, Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի ջութակահարների անսամբլի, տավղահարների խմբի հետ»<sup>9</sup>:

Ա.Խաչատրյանի ստեղծագործությունը Լենինգրադում հնչում է նաև 1977-ի հունվարի 10-ին և 11-ին: «Այն պահանջում է երգչախմբի, սիմֆոնիկ նվագախմբի, մեներգչի, ջութակահարների և տավղահարների պրոֆեսիոնալ բարձր վարպետություն, երկի խոր ընկալումով հանդես եկավ ՌՍՖՍՀ ժողովրդական արտիստուհի, մեներգչուհի Նինա Իսակովան»<sup>10</sup>:

Ա.Խաչատրյանի մահից ամիսներ անց՝ 1978թ. սեպտեմբերի 12-ին, «Ձոն ցնծությանը» վերստին հնչում է Լենինգրադում:

<sup>9</sup> Երաժշտական կյանքի օրագիր, Վերադարձան համերգային շրջագայությունից, «Երեկոյան Երևան», 18 նոյեմբերի, 1971:

<sup>10</sup> **Վարդանյան Ռուբեն**, Պրեմիերաներ՝ Լենինգրադում, «Սովետական Հայաստան», 1 փետրվարի, 1977:

1993-ին Մոսկվայում նշվում է Արամ Խաչատրյանի ծննդյան 90-ամյա հոբելյանը: Կոնսերվատորիայի մեծ դահլիճում ապրիլի 10-ին տեղի է ունենում «Հնչում է Արամ Խաչատրյանի երաժշտությունը» փառատոնը, որի ընթացքում Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ կատարվում է «Ձոն ցնծությանը»՝ Մոսկվայի սիմֆոնիկ նվագախմբի, Մոսկվայի պետական ակադեմիական երգչախմբի և Մոսկվայի կոնսերվատորիայի տավղահարների անսամբլի կատարմամբ<sup>11</sup>:

Ինչպես հետագայում կհիշի Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի առաջին տնօրեն Գոհար Հարությունյանը. «Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ կատարեց «Ձոն ցնծության» ստեղծագործությունը: Առաջին ու վերջին անգամ ես նման կատարում լսեցի: Մի ցնծություն էր դահլիճում, մի ցնծություն, մի զուլում բան էր, զուլում: Ծափահարություններին վերջ չկար: Մոսկվայի ունկնդիրը շնորհավորում ու շնորհակալություն էր հայտնում Չեքիջյանին այդ ելույթի համար»<sup>12</sup>:

«Ձոն ցնծության»-ը Մոսկվայում հնչել էր նաև մինչ այդ՝ 1993-ի մարտի 5-ին:

Կոմպոզիտորի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ 2003թ. հունիսի 5-ին Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում "Новая Россия" պետական սիմֆոնիկ նվագախմբի, Ռուսաստանի Ա.Ա.Յուզովի անվան պետական ակադեմիական երգչախմբային կապելլայի և տավղահարների անսամբլի կատարմամբ, Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ հնչում է «Ձոն ցնծության»-ը (մենակատար՝ Լիլիթ Գրիգորյան):

Հետագայում ևս տարիներ ու տասնամյակներ շարունակ Ա.Խաչատրյանի «Ձոն ցնծությանն» ուղեկցել է Հովհաննես Չեքիջյանին ու

<sup>11</sup> St'u Если б я не стал музыкантиом, то непременно стал бы артистом, «Республика Армения», 5 июня, 1993:

<sup>12</sup> **Առաքելյան Սերգեյ**, Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2014, էջ 175:

Կապելլային: Ձևավորված ավանդույթի համաձայն՝ ստեղծագործությունը հնչում է Կապելլայի հորեյանական համերգներին: Կապելլայի հիմնադրման 50-ամյակին նվիրված հորեյանական համերգին, որը տեղի ունեցավ Մարգահամերգային համալիրում 1987-ին, հնչեց «Ձոն ցնծությանը» Հայաստանի պետական ակադեմիական և Երևանի օպերային թատրոնի միացյալ երգչախմբերի, Օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի, Երևանի ռադիոյի և հեռուստատեսության ջութակահարների անսամբլի և տավղահարների խմբի կատարմամբ: Մենակատարն էր ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի, Սոցիալիստական աշխատանքի հերոս Իրինա Արխիպովան<sup>13</sup>:

Եվ պատահական չէ, որ այն հնչեց Կապելլայի հիմնադրման 70-ամյակին նվիրված հորեյանական եզրափակիչ համերգին՝ 2007թ. հուլիսի 13-ին Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, Վարդուհի Խաչատրյանի, օպերային թատրոնի նվագախմբի, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի, Կոնսերվատորիայի ջութակահարների անսամբլի, տավղահարների անսամբլի և Շողակաթ երգչախմբի մասնակցությամբ<sup>14</sup>:

Հովհաննես Չեքիջյանի՝ ծավալով համեստ ստեղծագործական ժառանգության մեջ կրկին հանդիպում ենք Արամ Խաչատրյանին: Կոմպոզիտորի ծննդյան 60-ամյակին է ձոնել Հ.Չեքիջյանն իր «Ազատության դողանջներ» երկմաս վոկալ-սիմֆոնիկ պոեմը՝ գրված Սիլվա Կապուտիկյանի խոսքերով, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար<sup>15</sup>:

Տարիներ անցան: 2006-ին Ա.Խաչատրյանի հեղինակած Հայաստանի հիմնի երաժշտությունը վերականգնելու հիմնավոր ու համոզիչ

առաջարկությամբ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին բաց նամակ հղած հայ անվանի արվեստագետների ու մտավորականների թվում էր նաև Հովհաննես Չեքիջյանը: Շուտով ՀՀ վարչապետի՝ 2006թ. մայիսի 4-ի N 299-Ա որոշմամբ ստեղծվեց հանձնաժողով՝ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի գլխավորությամբ, որի կազմում, բնականաբար, ընդգրկված էր նաև Մաեստրոն: Հայտարարվեց մրցույթ, և 5-6 ամիս տևած թեժ քննարկումներից հետո՝ 2006թ. հոկտեմբերի 21-ին, հեղինակավոր հանձնաժողովը փակ (գաղտնի) քվեարկությամբ կայացրեց պատմական որոշում. մրցույթի 2-րդ փուլ անցած օրհներգի հինգ տարբերակներից 15 կողմ ձայնով, գրեթե միաձայն ՀՀ օրհներգի մրցույթում հաղթող ճանաչվեց Արամ Խաչատրյանի երաժշտությունը, և առաջարկվեց ՀՀ կառավարությանը՝ հայտարարել նոր մրցույթ Խաչատրյանի երաժշտության բանաստեղծական տեքստի համար:

2006-ի օգոստոսի 31-ին խաչատրյանական հիմնը հնչեց Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում՝ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի և Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ՝ Մաեստրո Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ: Եվ ուզում ենք հավատալ, որ խաչատրյանական հիմնը անպայման վերադառնալու է և վերադառնալու է կրկին Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի կատարմամբ՝ Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ:

Ուզում եմ զեկուցունս ավարտել Արամ Խաչատրյանի հետևյալ խոսքերով. «Հիացած եմ Հովհաննես Չեքիջյանի տաղանդով և եռանդով: Անսխալական են հատկապես դասական ստեղծագործությունների նրա մեկնաբանությունները: Նրանք ավարտուն են, իրենն են: Արվեստի կատարյալ տոն հիշեցնող երգչախմբի յուրաքանչյուր ելույթը լսելիս ես հսկայական հրճվանք եմ ապրում, զարմանում չեքիջյանական իմպրովիզացիաներով: Մոսկվայում ու նաև ամենուր կա այն

<sup>13</sup> Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

<sup>14</sup> Տե՛ս **Ասատրյան Աննա**, Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ, էջ 104:

<sup>15</sup> Տե՛ս Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

կարծիքը, որ Չեքիջյանի Կապելլան Խորհրդային Միության լավագույն խմբերից մեկն է: Ինձ երջանկացնում է երգային այդ հզոր օրգանիզմի հաղթարշավը աշխարհի ամենահեղինակավոր բեմերում»<sup>16</sup>:

Հայ երաժշտության տիտանի խոսքերն այսօր էլ արդիական են ու խորապես ճշմարիտ:

---

<sup>16</sup> Առաքելյան Սերգեյ, Հովհաննես Չեքիջյան, էջ 12:

### ԼԻԼԻԹ ԱՐՏԵՄՅԱՆ

արվեստագիտության թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

#### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԱԼ.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ

1982 թվականին ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, ՍՍՀՄ և Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր Հովհաննես Չեքիջյանը համատեղությամբ նշանակվում է Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրեկտոր՝ պաշտոնավարելով մինչև 1987-ը և ծավալելով իր արդյունաշատ գործունեությունը օպերային երաժշտության բնագավառում ևս: Այդ տարիները փայլուն էջեր են գրում օպերային թատրոնի տարեգրության մեջ<sup>1</sup>:

Այդ առիթով Պավել Լիսիցյանը նկատեց. «Ուրախությամբ լսեցի, որ այժմ Հ.Չեքիջյանը միաժամանակ ստանձնել է նաև Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավարությունը: Միանգամայն ժամանակին ու ճիշտ որոշում: Տաղանդավոր, սկզբունքային, գերազանց ճաշակի տեր երաժիշտը, հավատացած եմ, կկարողանա նոր բարձրության հասցնել նաև մեր օպերային թատրոնը»<sup>2</sup>:

Ստանձնելով թատրոնի ղեկավարությունը՝ Հ.Չեքիջյանը մի հանդուգն նպատակ դրեց իր առջև. «...մեր օպերան և բալետը մատուցել

բեմական արտահայտչական այնպիսի բարձր արվեստով, որ Սպենդիարյանի անվան թատրոնը կանգնի երկրի լավագույն երաժշտական թատրոնների շարքում: Հասկանալի է, որ այդ նպատակն իրականացնելու համար շատ ջանքեր են պահանջվում»<sup>3</sup>:

Առաջին հերթին Հ.Չեքիջյանը կարևորում է թատրոնի խաղացանկը. «...մեր ազգային դասական օպերաներն ու բալետները չափազանց սակավաթիվ են, մատների վրա կարելի է հաշվել դրանք: Եվ, ցավոք, ներկայումս մեզանում ներկայացվում են դրանցից երեքը միայն... «Անուշ», «Դավիթ-Քել», «Գայանե»: Պարզ է, որ մեր առաջիկա գլխավոր խնդիրներից է հանդիսատեսին վերադարձնել «Ալմաստը», «Արշակ Երկրորդը», «Սպարտակը»<sup>4</sup>:

Հ. Չեքիջյանի երաժշտական ղեկավարությամբ 1982 թվականի դեկտեմբերի 10-ին և 11-ին ներկայացվում է Հեկտոր Բեռլիոզի «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկ սիմֆոնիան մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար, մասնակցությամբ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի, Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների կոմիտեի կամերային երգչախմբի, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի մանկական երգչախմբի (գեղարվեստական ղեկավար՝ Արթուր Վերանյան), ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Նինա Իսակովայի, Կարլ Ջարինի ու Միհրան Երկաթի, ինչպես նաև Վալերի Հարությունովի: Ջուլիետի դերով հանդես է գալիս Էլվիրա Մնացականյանը, իսկ Ռոմեոյի դերով՝ Սերգեյ Բարանովը: Դիրիժորն էր Հ.Չեքիջյանը, բեմադրիչը՝ Վիլեն Գալստյանը: Արաքսի Սարյանը, անդրադառնալով բեմադրությանը, այն գնահատեց որպես երևույթ մեր երաժշտական կյանքում. «ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանն ու նրա ղեկավարած կոլեկտիվը սիմֆոնիան հնչեց-

<sup>1</sup> Տե՛ս **Ասատրյան Աննա**, Ամենայն հայոց մատենություն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 82-84:

<sup>2</sup> **Գասպարյան Ալ.**, Խմբերգային համերգներ Մոսկվայում, «Երեկոյան Երևան», 9 փետրվարի, 1983:

<sup>3</sup> **Հովհաննես Չեքիջյան**. Ոչ միայն ծառայել, այլև նվիրվել արվեստին, «Սովետական արվեստ», 1982, N 11, էջ 8:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 10:



րին ողբերգության՝ բեռլիոզյան ռոմանտիկական ընթերցմանը համահնչյուն»<sup>5</sup>:

1983 թվականին բեմ է բարձրանում Պյոտր Չայկովսկու «Թեմա վարիացիաներով» (դիրիժոր՝ Հ.Չեքիջյան, բեմադրությունը՝ Աշոտ Ասատրյանի):

Հմուտ կազմակերպիչ Հ.Չեքիջյանի ջանքերով թատրոնի խաղացանկը հարստանում է նորանոր բեմադրություններով: Բեմ են բարձրանում մի կողմից՝ ժամանակակից սովետական կոմպոզիտորների երկերը, այդ թվում՝ Վյաչեսլավ Գանելինի «Սատանայի ջրաղացը» բալետը (1984, բեմադրությունը՝ Վ.Բրազդիլիսի), Ալեքսանդր Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերան (1985, դիրիժոր՝ Ա.Քաթանյան, բեմադրությունը՝ Ռ.Ջրբաշյանի), մյուս կողմից՝ համաշխարհային դասականների գործերը, այդ թվում՝ Պ.Չայկովսկու «Շչելկունչիկ» բալետը (1985, դիրիժոր՝ Վիլեն Չարչոլյան, բեմադրությունը՝ Սախարովի), Պուչչինիի «Բոհեմա» (1986, դիրիժոր՝ Յուրի Դավթյան, բեմադրությունը՝ Ն.Սարգսյանի) և «Չիո-Չիո-Սան» (1986, դիրիժոր՝ Յուրի Դավթյան, բեմադրությունը՝ Տիգրան Լևոնյանի) օպերաները, նաև՝ Ջաքարիա Փալիաշվիլու «Դաիսի» օպերան (1985, դիրիժոր՝ Ռ.Թակիձե, բեմադրությունը՝ Է.Անջափարիձեի), Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի «Ոսկի աքաղաղը» և այլն:

Հ.Չեքիջյանի գործունեությունն օպերային թատրոնում աննկատ չմնաց: Հայկական թատերական ընկերության նախագահ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչյա Ղափլանյանը 1984 թվականի սեպտեմբերին նկատեց. «...Եթե վերջին ժամանակներս ապրած ստեղծագործական վերելքի առումով առանձնացնելու լինենք մեկ կոլեկտիվ, ես կնշեի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակա-

<sup>5</sup> Սարյան Արաքսի, Հուսադրող և հեռանկարային (օպերային թատրոնի նոր պրեմիերան), «Սովետական Հայաստան», 7 հունվարի, 1983:

դեմիական թատրոնը: Այստեղ ծնվեցին նոր օպերային ու բալետային հաջողված ներկայացումներ: Լիառույս ենք, որ այս թատերաշրջանում ևս սպենդիարյանցիները բոլորիս կուրախացնեն նոր ձեռքբերումներով, մանավանդ որ տարին հոբելյանական է նրանց համար. հանդիսավորությամբ նշվելու է թատրոնի գոյության 50-ամյա հոբելյանը»<sup>6</sup>:

Հ.Չեքիջյանի պաշտոնավարման տարիներին թատրոնը բոլորում է իր հիմնադրման կեսդարյա հոբելյանը: Այդ կապակցությամբ 1984 թվականին լույս է տեսնում Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի կեսդարյա հարուստ պատմությունը ներկայացնող գիրքը, որի ծննդյան «մեղավորը» հենց Չեքիջյանն էր<sup>7</sup>:

Օպերային թատրոնի հոբելյանական թատերաշրջանը բացվում է Ալ.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի նոր բեմադրությամբ<sup>8</sup>, որի համար Հ.Չեքիջյանը հրավիրում է Նովոսիբիրսկի թատրոնի գլխավոր ռեժիսոր, ՌՍՖՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Վահագն Բագրատունուն: Բեմադրությունը նվիրվեց թատրոնի հիմնադրման 50-ամյակին: Դիրիժորն էր Յուրի Դավթյանը, նկարիչը՝ Սարգիս Արուստյանը: Թաթուլի դերերգը կատարեց Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ Արշավիր Կարապետյանը, իսկ Ալմաստինը՝ Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստուհի Օլգա Գաբայանը:

Օպերայի ընտրությունը պատահական չէր: Ինչպես գիտենք, դրանից ուղիղ կես դար առաջ՝ 1933 թվականին, Երևանի օպերային թատրոնը բացվեց հենց «Ալմաստով»: Ուստի միանգամայն տրամա-

<sup>6</sup> Տրամադրված ենք լավատեսորեն, «Սովետական Հայաստան», 14 սեպտեմբերի, 1984:  
<sup>7</sup> Տե՛ս Ալ.Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն (կազմող և տեքստի հեղինակ՝ Կ.Մարկոսյան), Երևան, 1984:  
<sup>8</sup> Տե՛ս Сезон начинается с премьеры, «Комсомолец», 10 сентября, 1983: Սանթրյան Վ., Հոբելյանական խաղաշրջանում, «Ալմանգարդ», 11 նոյեմբերի, 1983: Тер-Симонян Маргарита, Еще одна версия “Алмаст”, «Коммунист», 31 января, 1984:

բանական էր՝ թատրոնի կեսդարյա հոբելյանի առթիվ վերածնել օպերան: Ի դեպ՝ «բոլոր այն տարիներին, երբ «Ալմաստը» եղել է խաղացանկում, թատերաշրջանը բացվել է այդ ներկայացմամբ»<sup>9</sup>: Ավելին, ինչպես նկատում է Հ.Չեքիջյանը. «Ալ.Սպենդիարյանի անունը կրող թատրոնի 50-ամյակը նշելիս աններելի կլիներ խաղացանկում նրա միակ օպերայի՝ «Ալմաստի» բացակայությունը: Մանավանդ Սպենդիարյանի ստեղծած օպերան այնպիսի բարձրարվեստ ստեղծագործություն է, որ համարձակ կարելի է ներկայացնել աշխարհի ցանկացած բեմահարթակում»<sup>10</sup>:

Խմբավար և սիմֆոնիկ դիրիժոր Հ.Չեքիջյանը հանդես է գալիս որպես օպերային դիրիժոր ևս: 1984-ի ապրիլի 27-ին և 28-ին իրականացվում է Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերայի չորրորդ բեմադրությունը: Ռեժիսոր-բեմադրիչը Հայաստանի ժողովրդական արտիստ Տիգրան Լևոնյանն էր, դիրիժորը՝ Հ.Չեքիջյանը, նկարիչը՝ ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Եվգենի Սաֆրոնովը: Բեմադրությանը, որը նվիրվեց թատրոնի 50-ամյակին, մասնակցում էր Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը: «Ներկայացման դիրիժորի՝ Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությունը նպաստում է ներկայացման դրամատուրգիայի բացահայտմանը: Չուխաճյանական սքանչելի երաժշտությունը նրա ղեկավարությամբ ապրում է ոչ թե մեկուսացված, այլ բեմական խնդիրներին համաձույլ կյանքով: Նա այստեղ իրեն դրսևորում է մեկ ուրիշ ժանրի մեջ՝ պահպանելով օպերային թատրոնին անհրաժեշտ՝ դիրիժորի և ռեժիսորի ստեղծագործական համագործակցությունը»<sup>11</sup>:

<sup>9</sup> Թատերաշրջանը բացվեց «Ալմաստով», «Սովետական Հայաստան», 10 սեպտեմբերի, 1983:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> **Սարգսյան Նորայր**, «Արշակ Երկրորդի» վերադարձը, «Սովետական Հայաստան», 1 հուլիսի, 1984:

Օպերային թատրոնի հիմնադրման հոբելյանի առթիվ 1984թ. դեկտեմբերի 2-ին «Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո: Թատրոնի կեսդարյա ուղու մասին խոսք ասաց նրա դիրեկտոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ պետական մրցանակների դափնեկիր Հ.Չեքիջյանը»<sup>12</sup>: Ավարտելով իր խոսքը բանախոսը նշեց. «Թատրոնի կոլեկտիվը պատրաստ է նոր գործերով ամրապնդել արդեն նվաճածը, անվարան գնալ դեպի ստեղծագործական նոր որոնումներ: Այդ է պահանջում մեզանից հայոց հին մշակույթը, այդ է պահանջում իր կես դարը բոլորած օպերային թատրոնը, այդ է սպասում մեզանից մեր համբերատար, մեր ջերմ ու շնորհակալ հանդիսատեսը»<sup>13</sup>:

Թատրոնի 50-ամյա հոբելյանի կապակցությամբ «Սովետական Հայաստան» թերթի դեկտեմբերի 2-ի համարում տպագրվում է Հ.Չեքիջյանի հարցազրույցը թերթի թղթակցի հետ: Հիշարժան հոբելյանին է անդրադառնում «Коммунист» թերթը, իսկ դեկտեմբերի 2-ի «Ավանգարդում» տպագրված Արմեն Բուդաղյանի «Մեր մշակույթի պարծանքը» հոդվածն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Վերջին տարիներին հետաքրքիր բեմադրություններ է իրագործել ճանաչված դիրիժոր, թատրոնի ներկայիս ղեկավար, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հ.Չեքիջյանը»<sup>14</sup>:

Եթե «Ալմաստն» ու «Արշակ Երկրորդը» Հ.Չեքիջյանի շնորհիվ վերադարձան բեմ, ապա Ռիմսկի-Կորսակովի «Ոսկի աքաղաղը» Երևանի օպերային թատրոնի բեմում բեմադրվեց առաջին անգամ: Այս

<sup>12</sup> Երաժշտական մշակույթի խոշորագույն կենտրոնը, «Երեկոյան Երևան», 4 դեկտեմբերի, 1984:

<sup>13</sup> Երաժշտական մշակույթի խոշորագույն կենտրոնը, «Սովետական Հայաստան», 4 դեկտեմբերի, 1984:

<sup>14</sup> **Բուդաղյան Արմեն**, Մեր մշակույթի պարծանքը, «Ավանգարդ», 2 դեկտեմբերի, 1984:

պրեմիերայով թատրոնը եզրափակեց ընթացիկ տարվա թատերաշրջանը:

1987-ին տեղի ունեցան Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի հյուրախաղերը Թբիլիսիում:

Հ.Չեքիջյանն իր արդյունավետ գործունեությունն օպերային թատրոնում ոչ միայն հաջողությամբ համատեղում է Կապելլայի ղեկավարության ու համերգային ակտիվ գործունեության (այդ տարիներին հյուրախաղերով հանդես է գալիս Խորհրդային Միության տարբեր քաղաքներում և Ֆրանսիայում), այլև ակտիվ հասարակական գործունեության հետ. 1985-ին ընտրվում է Հայկական ԽՍՀ տասնմեկերորդ գումարման Գերագույն խորհրդի դեպուտատ:

1987 թվականին Հ.Չեքիջյանը թողեց օպերային թատրոնի դիրեկտորի պաշտոնը, սակայն կապն իր հարազատ օջախի հետ շարունակվում է մինչ օրս:

Եվ պատահական չէ, որ տասնամյակներ անց՝ 2003-ին, Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 70-ամյակի կապակցությամբ «օպերային և բալետային արվեստում ունեցած վաստակի համար» Հ.Չեքիջյանը պարգևատրվեց ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրով:

**ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

*ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ,  
Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և  
բալետի ազգային ակադեմիական թատրոն*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ ՄԵԾԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ**

Լրացել է դարի խոշորագույն արվեստագետ, աշխարհահռչակ խմբավար, դիրիժոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակը:

Այդ առիթով լույս է տեսել արվեստագետ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սերգեյ Առաքելյանի «Հովհաննես Չեքիջյան» սովետաբանական գունագարդ ժողովածուն, որը հեղինակի հիմնադրած «ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԵԾԵՐԸ» մատենաշարի 14-րդ հատորն է:

Գիրքը հրատարակվել է ՀՀ կառավարության հովանավորությամբ, և նրա շնորհանդեսը օրերս տեղի է ունեցել ՀՀ Ազգային ժողովում:

Հռչակավոր Մաեստրոյի մասին մեծանուն արվեստագետների հայտնի կարծիքներից բացի, հեղինակը տպագրել է նաև իր անձնական արխիվում պահվող բազմաթիվ նյութեր, որոնք կուտակվել են տարբեր առիթներով Չեքիջյանին նվիրված ռադիո և հեռուստատեսային իր հաղորդումներից:

Սակայն գրքի հեղինակը ավստասանքով հայտնում է, որ գրքում տեղ չեն գտել 1978թ. Մաեստրոյին նվիրված ռադիոհաղորդման համար Սուրեն Քոչարյանի և Աննո Բաբաջանյանի հայտնած արժեքավոր կարծիքները, որոնք նրա անձնական արխիվում հայտնաբերվել են վերջերս:

«Եթեր»-ի խմբագրությունը շնորհավորում է Սերգեյ Առաքելյանին «Հովհաննես Չեքիջյան» արժեքավոր գրքի լույսընծայման հա-

մար և իր ընթերցողների ուշադրությանն է ներկայացնում գրքի էջերից դուրս մնացած այդ, իսկապես, արժեքավոր կարծիքները:

Հովհաննես էրբայրս, քեզ շնորհած՝ մեր երկրի ամենաբարձր և ամենապատվավոր կոչման առիթով ուրախ են մոսկովյան քո բարեկամները: Երեկ՝ Մոսկվայի ակադեմիայում ունեցած իմ համերգից հետո, մեր տանը քեզ լավ «բամբասեցին» Հովհաննես Բաղդամյանը, Արամ Խաչատրյանը, Մարիետա Շահինյանը, Պավել Լիսիցյանը, Զարուհի Դոլովսանյանը, Աննո Բաբաջանյանը, Ալեքսեյ Չեքիմյանը, Հրանտ Ապրեսյանը, իսկ ամենից շատ՝ քո խոնարհ ծառան:

Ասել եմ և կրկնում եմ. դու ապրում ես ստեղծագործական բեղմնավոր, բովանդակալից կյանք, որը ոչ միայն քոն է՝ քո կենսագրությունը, այլև հայ երգարվեստի հավաքական առաջընթացի հանրագումարն է՝ նույնացված Հովհաննես Չեքիջյան հնչեղ անվան հետ:

Հիշում եմ թումանյանական երանելի մեր օրերը, մեր «Անուշը», մեր չքնաղ Գոհարի գոհարեղեն կատարումը: Տպավորվել է երգչախումբը քո գեղարվեստական նպատակներին հասցնելու, միայն քեզ հատուկ, որոշակի ու արտահայտիչ չեքիջյանական ժեստը, որը քո սեփական կատարողական ոճի հիմքն է:

Այդ ամենի արդյունքն էր կառավարական բարձր պարգևը, որին լիովին արժանի ես դու, տաղանդաշատ ի՛մ բարեկամ:

Կրկին շնորհավորում եմ և ցանկանում նոր պարգևներ:

ՍՈՒՐԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ

Ռուսաստանի և Հայաստանի ժողովրդական արտիստ

Թեպետ բացառիկ տաղանդի տեր դիրիժոր և խմբավար, իմ սրտամոտ բարեկամ Հովհաննես Չեքիջյանը դեռ էն գլխից ժո-

ղովրդական էր, աշխարհին ծանոթ ու սիրելի անուն, սակայն Խորհրդային Միության ժողովրդական արտիստի պատվավոր կոչման վավերացումը երջանկացրեց մեզ:

Դա միաժամանակ հայ երգի ու խմբերգային արվեստի հաղթանակն է, նրան երբևէ տրված ամենաբարձր գնահատանքը:

Շնորհավորում եմ հայ երաժշտասերներին, մեզ բոլորիս, տաղանդաշատ իմ Հովհաննեսին և մեկիկ-մեկիկ համբուրում եմ կապելլայի բոլոր արտիստներին:

Ցավում եմ, որ անձամբ չեմ շնորհավորում ու համբուրում իմ Հովհաննեսին, բայց շնորհակալ եմ Երևանի ռադիոյին, որ ստեղծեց հեռախոսով շնորհավորելու հնարավորությունը:

քո՝ ԱՌԼՈՒ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

**ԴԱՎԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ**

*«Վճակույթի վաստակավոր գործիչ,  
Հայաստանի երաժշտական ընկերություն»*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ. ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆԸ**

Հայ ժողովուրդը իր բազմադարյան գոյության ընթացքում ստեղծել է մշակութային բազմաթիվ արժեքներ, որոնք քաղաքակիրթ աշխարհում լայն ճանաչման և գնահատանքի են արժանացել:

Չորրորդ դարից սկսած՝ Քրիստոնեության մուտք գործելու հետ, Հայաստանում սկիզբ է առնում և զարգանում հայ հոգևոր եկեղեցական երաժշտությունը: Քրիստոնեական շրջանի հոգևոր երգերի ու շարականների համար հիմք է դառնում հեթանոսական շրջանի երգերաժշտությունը, որը նույնանում է աշխարհիկ-ժողովրդական երաժշտություն հասկացության հետ, որի ապացույցը հնագույն շարականների տաղաչափական ձևերի և եղանակների ընդհանրությունն է հին գուսանական արվեստի հետ:

Ամեն մի ժողովրդի երաժշտության պատմություն սկիզբ է առնում այդ նույն ժողովրդի ժողովրդական երաժշտության զարգացման հետ:

Եվ ուրեմն պրոֆեսիոնալ երաժշտությունը սկիզբ է առնում իր իսկ ժողովրդական երաժշտությունից:

Երգչախմբային արվեստը սկիզբ է առել անհամեմատ ավելի ուշ շրջանում՝ սերտորեն կապված լինելով մեր ժողովրդի ընդհանուր և առանձնապես երաժշտական մշակույթի հետ և բխում է նրանից:

Հայտնի է, որ մինչև 9-րդ դարը հայկական ժողովրդական երաժշտությունը, ավանդաբար փոխանցվելով սերնդեսերունդ, բերնեբերան՝ գերազանցապես բանավոր, անցել է զարգացման պատմական

էվոլյուցիա՝ մի քանի հարյուրամյակների ընթացքում: Պատմական զարգացման ընթացքում մոնոդիկ երգեցողությունից փոխանցվել և ապա ձայնառության ու իմիտացիոն բազմաձայնության զարգացման միջոցով հասել է մեր ժամանակակից խմբերգային բազմաձայն երգեցողության ներկա օրինաչափությանը:

Միայն 19-րդ դարի 70-ական թվականներից սկսած՝ բազմաձայնության ներմուծումով ընդարձակվեց հոգևորի նշանակությունը, Քրիստափոր Կարա-Մուրզայի, Մակար Եկմալյանի և Մեծն Կոմիտասի ջանքերով ուղենշվեց հայ ազգային երգի հետագա ընթացքը՝ հենվելով հոգևոր և ժողովրդական երգարվեստի հազարամյա ավանդույթների վրա:

Հայ խմբերգային արվեստը՝ իբրև ընդհանուր երաժշտական կատարողական արվեստի կարևորագույն բաղկացուցիչ, անխզելիորեն կապված լինելով հարազատ ժողովրդի՝ պատմականորեն կազմավորված մշակութային ավանդույթների հետ, զարգացել է պատմական բարդ պայմաններում: Պրոֆեսիոնալ երաժշտության ժանրերի ասպարեզում ամենակարևոր պրոբլեմը ազգային լեզվի բյուրեղացումն ու հարստացումն էր, ինչի լուծման գործում վճռական դեր խաղացին Կոմիտասը, Տ. Չուխաճյանը, Ալ. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը, Ա. Տիգրանյանը:

Երաժշտարվեստի զարգացումը պայմանավորվեց լավագույն մասնագետների համակենտրոնացումով:

Մայր Հայրենիք գալով՝ մշակույթի, գիտության, արվեստի անվանի գործիչներ, մասնագետներ իրենց ամբողջությամբ նվիրաբերեցին հարազատ ժողովրդի մշակույթի զարգացման գործին:

1961 թվականին Ստամբուլից Հայաստան է տեղափոխվում 33-ամյա Հովհաննես Չեքիջյանը:

Հ.Չեքիջյանը ծնվել է Ստամբուլում, նախնական կրթությունը ստացել է Մխիթարյան վարժարանում, հետո հաճախել է Սեն Միշել

վարժարան և արդեն 1951թ. Ստամբուլի կոնսերվատորիայի խմբավարական բաժնի շրջանավարտ է:

Դեռ պատանեկան տարիներին և ուսմանը զուգահեռ ղեկավարում է հայկական եկեղեցու, բարեգործական հաստատությունների երգչախմբերը: Այնուհետև մեկնում է Փարիզ, ստանում քիմիկոս-ինժեների դիպլոմ (իր հոր ցանկությամբ, քանի որ հայրը կաշեգործ էր) և միաժամանակ կոնսերվատորիայի՝ պրոֆեսոր Ժան Ֆուրնեի դասարանում կատարելագործվում է սիմֆոնիկ դիրիժորության արվեստում:

Ստամբուլի կոնսերվատորիայի ասպիրանտուրան փայլուն ավարտելուց հետո սկսվում է Հ. Չեքիջյանի՝ իբրև դիրիժոր-խմբավարի շքահանդեսը:

1960թ. ստանձնում է Ստամբուլի պետական երգչախմբի գեղարվեստական ղեկավարի և գլխավոր դիրիժորի պարտականությունը, միաժամանակ հիմնադրում բազմաթիվ հայկական՝ «Կոմիտաս», «Գողթան», «Նարեկացի», «Եկեղեցական միացյալ» երգչախմբեր և «Չեքիջյան» համերգային խումբը, որոնց համերգների հասույթը հատկացվում է հայկական դպրոցներին և հիվանդանոցներին:

Հովհաննես Չեքիջյանը արդեն մայր Հայրենիքում կգրի իր կենսագրությունը հետևյալ ճիշտ բնորոշումով. «Անշուշտ, երաժշտի համար վատ սկիզբ չէր, սակայն սփյուռքահայի համար (Թուրքիայի հայի համար առավել ևս) կենսական անհրաժեշտություն է ունենալ իր հոգևոր հայրենիքը: Չէ՞ որ թոչնոլ արարածին որքան որ պետք է երկինքը, նույնքան անհրաժեշտ է և պատվանդան, որտեղից սկսվում է առհասարակ թռիչքը»:

Եվ ահա 1961 թվի նոյեմբերի 27, Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճ, կրկնակի պրեմիերա: Հայաստանի պետական երգչախումբը ելույթ է ունենում նոր ծրագրով, և երգչախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը Հովհաննես Չեքիջյանն է: Առաջին բեմելը հայրենիքում, հայտագրի առաջին անունը՝ Կոմիտաս, այնուհետև Կարա-

Մուրզա, Մ. Եկմայան: Այս անդրանիկ համերգի 2-րդ բաժնում Հ. Չեքիջյանը հանդես եկավ նաև իբրև սիմֆոնիկ դիրիժոր՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ կատարելով Լ. Վ. Բեթով-վենի 7-րդ սիմֆոնիան:

Այդ օրվանից սկսվեց մեր պետական երգչախմբի հաղթարշավը՝ Մաեստրոյի կողմից հաստատվելով Մեծն Կոմիտասի խոսքն ու ավանդը այն մասին, որն Հայն ունի իր ինքնուրույն երաժշտությունն ու մտածողությունը:

Հենց համերգի հաջորդ օրը «Կոմունիստ» թերթում հիացմունքի բարձր խոսքեր գրվեցին արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, խմբերգային արվեստի փայլուն գիտակ Մ. Տերյանի կողմից. «...Уже при исполнении первого номера программы можно было заключить, что перед нами талантливый, обладающий высокой культурой хормейстер, с ярко выраженной индивидуальностью, большой музыкальной чуткостью, хорошим вкусом и четким дирижерским жестом, тонко передающим все особенности музыкальной фразы и нюансов».

Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ սկսվեցին Պետական երգչախմբի համերգները մեր հանրապետությունում, նախկին Խորհրդային Միության տարբեր քաղաքներում, ինչպես նաև արտասահմանում:

Հովհաննես Չեքիջյանը, փայլուն տիրապետելով երգչախմբային արվեստի բոլոր նրբերանգներին և գաղտնիքներին, վարպետորեն մեկնաբանում է ոչ միայն հայ կոմպոզիտորների, այլև դասական և ժամանակակից՝ ինչպես արևմտաեվրոպացի, այնպես էլ ռուս հեղինակների խմբերգային գոհարները՝ սկսած փոքր գործերից մինչև խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններ:

Մաեստրոն հավասարազոր տիրապետում է սիմֆոնիկ նվագախմբին ևս, կատարողական բարձր վարպետությամբ և ինքնատիպ մեկնաբանություններով: Սրա արգասիքն էր երգչախմբին 1969թ.

«Ակադեմիական»-ի բարձր կոչում շնորհելը, իսկ 1975թ.՝ «Վաստակավոր»-ի:

Մեծ է երգչախմբի երգացանկը. հայկական ստեղծագործությունների կողքին Հ. Չեքիջյանը քսանյոթ լեզուներով հնչեցրել է աշխարհի ժողովուրդների երաժշտություն՝ լեզվական անբասիր՝ բնագրին հարազատ հնչողությամբ: Երգչախումբը ելույթներ է ունեցել ավելի քան 67 սիմֆոնիկ նվագախմբերի հետ տարբեր երկրներում:

Հայաստանի պետական երգչախումբը երկար տարիներ համագործակցել է Լենինգրադի սիմֆոնիկ նվագախմբի հետ: Եվ երբ Հ. Չեքիջյանը հնչեցրել է Հ. Բեռլիոզի «Ռեքվիեմը», ահա թե ինչ է գրել աշխարհահռչակ դիրիժոր Եվգենի Մրավինսկին այդ համերգի մասին. «Մենք՝ պրոֆեսիոնալ երաժիշտներս, համերգի ժամանակ ամենից առաջ մտածում ենք պարտիտուրի, տակտերի տեղաբաշխման, նրբերանգների և այլ բաների մասին: Միաժամանակ հսկայական է հրճվանքը, երբ հանդիպում ես այնպիսի կատարողի, որը պրոֆեսիոնալին դարձնում է սովորական ունկնդիր: Լենինգրադի Ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահում Հայաստանի պետական երգչախմբի և մեր սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ լսելով Բեռլիոզի «Ռեքվիեմը», որ իրականացրեց դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը, ես բախվեցի մի այնպիսի մեկնաբանի, որն ստիպեց ինձ մոռանալ պարտիտուրը և իմ պրոֆեսիոնալ վերաբերմունքը երաժշտության հանդեպ: Ես ակամա դարձա սովորական, հիացած ունկնդիր և երջանիկ էի, որ այդպիսի ուրախություն վայելեցի»:

Եվ ահա շուրջ 53 տարի Հովհաննես Չեքիջյանը, լինելով Պետական ակադեմիական կապելլայի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը, մեր ժողովրդին է մատուցում բազմաթիվ երաժշտական կտավներ, որոնք հնչել են առաջին անգամ, և ինքը եղել է առաջին կատարողը, ինչպես երգչախմբի, այնպես էլ երգչախմբի և

սիմֆոնիկ նվագախմբի հետ: Այլ է դիրիժոր Հ. Չեքիջյանի ֆենոմենը, որը դեռ ամբողջությամբ և խորությամբ բացահայտված չէ:

Ահա ինչ է գրել Փարիզի «Ֆիգարոն» ակադեմիական կապելլայի՝ Ֆրանսիայում կայացած համերգների մասին. «Շլացուցիչ տպավորություն են թողնում ակապելլա երգերը, որտեղ կատարման էսթետիկան և բարձր տեխնիկան իսկական հայտնագործություն են մեզ համար: Արտաբերված ձայները հոսում են մի այնպիսի էլաստիկությամբ և ճկունությամբ, որի մասին մենք Եվրոպայում պատկերացում չունենք»:

Այո՛, Չեքիջյանը երաժիշտ-մեկնաբան է բառիս խոր իմաստով՝ որպես երգչախմբային, նվագախմբային, ինչպես նաև երաժշտական-թատերական դիրիժոր (այն ժամանակահատվածը նկատի ունեմ, երբ Չեքիջյանը նշանակվեց Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար և իրականացրեց մի շարք մտահղացումներ): Գուցեև տարբերություն եղել է, թեև արդյունքը հավասարապես գոհացուցիչ և ցայտուն է, բայց հանգամանքների բերումով մենք Մատեորոյին ավելի շատ ընկալում ենք որպես խմբավար-երգչախմբային դիրիժոր:

Հիշենք նրա երգչախմբային համերգները, կոմիտասյան ծրագրերը, Եկմալյանի և Կոմիտասի «Պատարագ»-ների ամբողջական մեկնաբանումները, հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների փայլուն կատարումները: Հ. Չեքիջյանի կատարման առանձնահատկությունները, հանդես գալով միասնականորեն, փոխգործակցության մեջ, ստեղծում են նրա երգարվեստի խոր արտահայտչականությունը, տպավորչությունը, որ երևան են գալիս ոչ միայն կոմիտասյան երկերում, այլև նրա կատարած ամեն մի գործում, լինի դա փոքր կտավի ստեղծագործություն, թե վոկալ-սիմֆոնիկ երկ:

Չեքիջյանական մեկնաբանումները, առաջին հայացքից այդ նորը, երգվող մեղեդու ոչ սովորական շեշտադրումները, սովորականից



ավելի ցայտուն, ավելի կորընթաց մեղեդիները, նրա ձեռքի տակ՝ երգչախմբի հաճախ հնչման ուժային երանգների կոնտրաստները, ունկնդրին կարծես ավելի շոշափելի կերպով են ընկալելի դարձնում երգչախմբի հնչման ուժգնության մակարդակը, ինչպես մեղմագույն (pp), այնպես էլ ձայնուժի (ff) կամ մարկատո շեշտավորվածությամբ:

Հ. Չեքիջյանի խմբերգային արվեստի մի այլ, նույնքան և գուցե ավելի կարևոր հատկանիշն էլ այն է, որ նա երգը մատուցում է ոչ միայն որպես ցայտուն և գեղեցիկ մեղեդի, այլև որպես որոշակի գաղափարական բովանդակություն՝ միշտ վառ կենսական, միշտ խոր ու համոզիչ, և նրա կատարողական արվեստում միշտ կարելի է զգալ գեղարվեստական յուրահատուկ ճաշակն ու ինքնատիպությունը:

Մի շատ կարևոր հանգամանք և դիտարկում ևս: Հ. Չեքիջյան խմբավարի, երգչախմբի գեղարվեստական ղեկավարի ֆենոմենը հետևյալն է. «Երգչախումբը պետք է ստեղծագործությունը կատարի անգիր, լինի դա փոքր կտավի խմբերգ, թե խոշոր՝ ռեքվիեմ, մեսսա, կանտատ»:

Մասետրոյի համոզմամբ այս հանգամանքը շատ օգնում է երգչախմբի յուրաքանչյուր երգչին ավելի վստահ կատարել այն բոլոր նրբերանգները, որ արժարժված են պարտիտուրում, և որը պահանջում է երգչախմբի գեղարվեստական ղեկավարը:

Դարերով երազած մեր պետության անկախացումից հետո, երբ հանրապետությունն ապրեց ճգնաժամային տարիներ, մեր մշակույթը, արվեստը և արվեստագետները հայտնվեցին անելանելի վիճակի մեջ, Մասետրո Հովհաննես Չեքիջյանը կարողացավ պահել-պահպանել մոտ հարյուր հոգուց բաղկացած երգչախումբը, շարունակել համերգային գործունեությունը՝ հանդես գալով գեղարվեստական և կատարողական բարձր մակարդակով:

Դիպուկ և ճշգրիտ է բնութագրել Չեքիջյանի արվեստը կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Ս. Սարգսյանը. «Несколько десятилетий самоотверженной творческой жизни Оганеса Чекиджяна убеждают в том, что в его лице армянская культура имеет достойного хранителя хоровой традиции. Наиболее ранняя в становлении национального исполнительского искусства хоровая традиция до сих пор играет фундаментальную роль, поскольку формирует равновесие актуального и прошлого музыкального опыта. Деятельность О. Чекиджяна строится на осознании этого равновесия. Подобно классикам армянской музыки, корень древа культуры он видит именно в вокальной культуре».

Подняв на новую ступень профессионализма хоровое исполнительство Армении, Чекиджян сумел воплотить в монументальном звучании Хоровой капеллы величие и силу духа нашего народа».

Արվեստը ոգևորում, հուզում, ոգեշնչում և մխիթարում է մարդուն. նրան է վիճակված հատուկ դաստիարակչական մեծ դեր, և դա արվեստի իսկական կոչումն է:

Երգչախմբային արվեստը հսկայական դեր է խաղում ազգային ինքնատիպ ոճի ձևավորման գործում:

Հանդիսանալով ազգային մշակույթի կարևորագույն բաղկացուցիչը՝ խմբերգային արվեստը իր հայրենասիրական բնույթով և միավորելու ու համախմբելու ուժով հայ երաժշտության պատմության մեջ միշտ ունեցել է և ունի որոշակի դերակատարություն:

Այս մտքերի, գաղափարների և գնահատանքի հաստատումն է Մասետրո Հովհաննես Չեքիջյան երգչախմբային դիրիժորի ֆենոմենը:

### Գրականության ցանկ

1. **Կոմիդրաս**, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941:
2. **Աթայան Ռ.**, Ժողովրդական երգի ներդաշնակության սկզբունքները, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1949, թիվ 9:
3. **Հարությունյան Մ., Բարսամյան Ա.**, Հայ երաժշտության պատմություն, Երևան, 1968:
4. **Հովհաննիսյան Ա.**, Հովհաննես Չեքիջյան, Երևան, 1984:
5. **Դավթյան Ս.**, Հովհաննես Չեքիջյան. Արվեստագետն ու քաղաքացին, Երևան, 2000:

**ԱՐՈՒՍՅԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**  
*ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ*

**ՎՈՎԱԼ-ՍԻՄՖՈՆԻԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀՈՎԿԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ**

Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի երկացանկում կայուն տեղ են զբաղեցնում վոկալ-սիմֆոնիկ կտավները՝ ռեքվիեմներ, պատարագներ, կանտատներ ու օրատորիաներ, սիմֆոնիաներ ու ձոներ:

Այսպիսի ուղղվածությունը պարզ էր արդեն առաջին համերգներից՝ 1960-ականների սկզբին, երբ նորանշանակ գլխավոր դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը ներկայացավ հավասարապես և՛ որպես սիմֆոնիկ, և՛ խմբերգային երաժշտության հմուտ ու գիտակ մեկնաբան: Իր հարցազրույցներում Մաեստրոն մշտապես նշում է, որ նվագախմբի հետ համատեղ ելույթները հնարավորություն են տալիս հնչեցնելու վոկալ - սիմֆոնիկ կտավներ, առանց որոնց երաժշտական կյանքը չի կարող համարվել լիաձայն:

Այդ գործերն իրենց հետ բերում են տարբեր դարաշրջանների երաժշտական կերպարի ոճական բազմազանության, տարբեր ուղղություններին ու դպրոցներին հատուկ ինքնարտահայտման ձևերի ճանաչման:

Ազգային, եվրոպական, դասական և սովետական հեղինակների շատ գործերի մեկնաբանություններում Հովհաննես Չեքիջյանը միշտ հանդես է բերում ոճի անվրեպ զգացողություն: Նրա երաժշտաշխարհն ունի երկու գլխավոր բարձունքներ՝ Կոմիտասի խմբերգային ժառանգությունը և 19-րդ դարի իտալական, ավստրիական ու ֆրանսիական երաժշտարվեստի կոթողները:

Խմբերգեցողության հիանալի ավանդույթներով աչքի ընկնող այնպիսի կենտրոններում, ինչպիսիք են՝ Մոսկվան, Լենինգրադն ու Ռիգան, հաճախակի իր հյուրախաղերի ընթացքում Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Արգենտինայի, Լեհաստանի ու Խորհրդային Միության տարբեր քաղաքների լավագույն դահլիճներում Հայաստանի պետական երգչախումբը Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ ներկայացել է շուրջ 40 վոկալ-սիմֆոնիկ մեծակտավ ստեղծագործություններով, տեղի լավագույն նվագախմբերի հետ, հանրահայտ մեծակատարների մասնակցությամբ, իսկ ազդագրերին գրված է եղել՝ «կատարվում է առաջին անգամ»:

Դրանք են այնպիսի նշանավոր ստեղծագործություններ, ինչպիսիք են՝ Բեռլինգի «Ռեքվիեմը», «Te Deum»-ը, Վիվալդիի «Գլորիան», Ի.Ս. Բախի Մեսսան, Շուբերտի կանտատը, Վերդիի «Ազգերի հիմնը», Ռոսինիի «Stabat mater»-ը, Սմետանայի կանտատը, Գր. Հախինյանի «Սայաթ - Նովան» և այլն: Եվ ամենուր Հայաստանի պետական երգչախումբն աչքի է ընկել կատարողական ինքնատիպ ոճով, որի բաղադրիչներն են գրական բնագրի արտասանության հստակությունը, ելևէջի մաքրությունն ու ֆրազի պլաստիկ արտահայտչականությունը: Մաեստրոյին մատչելի են բարդ ու նշանակալի ստեղծագործություններին հատուկ մարդկային ապրումները, հույզերն ու կրքերը, քնարական զեղումներն ու պաթետիկ պոռթկումները:

Միջազգային լրատվության վկայությամբ Հովհաննես Չեքիջյանը երգչախումբը ղեկավարում է կրակոտ ոգևորությամբ՝ հասնելով վառ կերպարային մեկնաբանության, բարձրակետերի առանձնացման, գլխավոր ու երկրորդական շեշտերի նպատակային տեղաբաշխման և, ի վերջո, ձևի ավարտվածության:

Չեքիջյանի կատարողական արվեստի հիմնական կիզակետը մարդկային հզոր կրքերն են և իրարամերժ ճակատագրերի բախումից ծնված երաժշտությունը:

Այսպիսին էր, օրինակ, Հ.Բեռլիոզի «Ռեքվիեմի» համամիութենական պրեմիերան 1969 թվականին Լենինգրադում՝ նվիրված կոմպոզիտորի մահվան 100-ամյակին: Այս հիշարժան կատարումից հետո Չեքիջյանն իր բեղուն տարիների ընթացքում «Ռեքվիեմը» հնչեցրեց 37 անգամ: Բեռլիոզի «Ռեքվիեմի» կատարումն իրականացրած դիրիժորների ցուցակում է նաև Հովհաննես Չեքիջյանի ուսուցիչը՝ Ժան Ֆուրնեն, սակայն երաժշտական այդ գլուխգործոցի տարեգրությունը թերևս չգիտի մեկ այլ դիրիժորի անուն, որը 37 անգամ կատարած լինի այն, քանի որ դրա իրականացման համար անհրաժեշտ է ոչ միայն լավագույնս մարզված երաժշտական վիթխարի օրգանիզմ (գրեթե 400 մարդ), այլև ահռելի դրամական ծախսեր, որ չի կարող հատուցել ոչ մի կազմակերպություն: Այստեղ պետք է ուղղակի պետական հոգաճություն: Այս պրեմիերան Լենինգրադի խստապահանջ հանդիսատեսի համար դարձավ հիրավի երաժշտական տոն: Մեծ դիրիժոր Ե. Մրավինսկին, որը հայտնի էր իր ակադեմիական խստապահանջությամբ, գրում է այդ համերգից հետո. «Ես ականա դարձա սովորական, հիացած ունկնդիր և երջանիկ էի, որ այդպիսի ուրախություն վայելեցի»:

Ֆրանսիացի կոմպոզիտորն այս երաժշտական կոթողը ստեղծել է 1830 թվականին՝ նվիրելով այն ֆրանսիական հեղափոխության զոհերի հիշատակին: 1974 թվականի ապրիլի 24-ին Ռիգայում՝ Դոմյան տաճարում, Չեքիջյանը «Ռեքվիեմի» հնչյուններից հյուսում է հարազատ ժողովրդի ապրիլյան զոհերի իր պսակը:

Համերգից հետո լրագրողը հարցնում է նրան.

– Մաեստրո՛, Ձեր հայտագրում կան 5 ռեքվիեմներ, ինչո՞ւ եք հետամուտ հազվադեպ հնչող այդ երկերի կատարմանը:

– Ռեքվիեմները միայն անունով են մահերգ, իրականում երաժշտական այդ կտավներում ամենից ուժգին հնչում է հենց մահի մերժումը, – պատասխանում է Չեքիջյանը և շարունակում, – Բեռլիոզը

առաջին հնչյունից մինչև վերջինը փորձում է սպանել մահը, կյանք է ցանում մահվան անապատում...

Հայաստանում իր առաջին քայլերով արդեն Չեքիջյանը ներկայացավ որպես լայն մտահորիզոնի և բարձր ճաշակի տեր բազմակողմանի օժտված կարկառուն երաժիշտ, որը իշխում է կատարողական բազմանդամ կազմի և համերգային դահլիճի վրա:

1962 թվականին Երևանում տարվա երաժշտական երևույթ է դառնում Մոցարտի «Ռեքվիեմի» կատարումը, ինչը չէր կարող արձագանք չունենալ մամուլում. «Հովհաննես Չեքիջյանը փայլուն ճաշակ դրսևորեց..., նրա կատարմամբ «Ռեքվիեմը» հնչեց որպես մոնումենտալ ստեղծագործություն, որն արթնացնում է խոր ու նուրբ զգացմունքներ: Թերևս ամենից ավելի այս գործի կատարման ժամանակ է դրսևորվում խմբի գրեթե մոզական հատկությունը՝ հասնել մեղեդու անհնարին թափանցիկության, հնչյունին դրոշմել մարդկային հոգու փոփոխականությունը»:

Իր դասական իմաստով մենք «Ռեքվիեմ» չունենք, եթե նկատի չունենանք Ալ. Հարությունյանի Ռեքվիեմը: Չեքիջյան արվեստագետի մտքի ուժը, որ ձգտում է թափանցել մարդկային կեցության ամենաբարդ հարցերի մեջ, բերում է նրան այն մտքին, որ ժողովրդասպանությունը չի կարող մի ժողովրդի վիշտը լինել, դա մարդկության վիշտն է, և նա Վերդիի, Մոցարտի, Բեռլիոզի, Ֆորեի ձայնին միացնում է և հայ ժողովրդի ցասումնալից ձայնը:

Հ. Բեռլիոզի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններից Հովհ. Չեքիջյանի մեկնաբանությամբ ևս երկուսն են արժանի հիշատակման՝ «Te Deum»-ը և «Ռոմեո և Ջուլիետ»-ը, որը, ըստ հեղինակային վերնագրի, կոչվում է «Դրամատիկական սիմֆոնիա»: Այս սիմֆոնիայի դրամատիկական շեշտը հնարավորություն է տվել Հովհ. Չեքիջյանին բեմական գործողության նյութ դարձնելու այն ամենը, ինչ հնարավոր է վեր հանել պարտիտուրից:

Այս պատճառով 1983 թվականին երևանյան համերգ-ներկայացմանը երաժիշտների հսկայաձավալ խմբին օպերայի բեմահարթակում միացել են գեղանկարչական ձևավորումը, բալետը, լուսավորման արվեստը: Այս պարտիտուրի կատարումը նույնպես շատ քիչ դիրիժորներ են իրականացրել:

Այն նվագախմբի, երգչախմբի և մեներգիչների անսամբլային փոխհարաբերության բազմազան ու հարուստ մի հյուսվածք է: Վերցնենք, օրինակ, երգչախմբի խորալային ասերգությունը, որը պատմում է սիրահարների մասին:

Ասերգությունը ֆրանսիական միջնադարից սկիզբ առնող երաժշտական ավանդույթներն է զարգացնում: Այստեղ Չեքիջյանն իր քնարականության հարուստ ներկայանակն է ներկայացնում: Ռոմանտիկ երաժշտություն հնչեցնելիս դիրիժորը բացահայտվում է իր երգեցիկ բնության ամբողջ հմայքով, և այդ պահերին չգիտես գերապատվությունը տալ էպիկական շնչի Չեքիջյան դրամատուրգի<sup>1</sup>ն, թե՞ նրբին քնարերգու Չեքիջյան երաժշտին:

Սրբությամբ վերաբերվելով կոմիտասյան ու եկմալյանական պատարագներին՝ Հովի. Չեքիջյանը չի մոռանում հանդիսավոր առիթներով կատարել և սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Այսպես, 1967 թվականին, երբ նշվում են հայկական օրերը Մոսկվայում, Կրեմլի համերգասրահում հնչում է Արամ Բաբաջանյանի «Ձոն ցնծության» կանտատը կապելլայի, սիմֆոնիկ նվագախմբի, ջութակահարների անսամբլի և տավալահարների խմբի մասնակցությամբ:

Հովի. Չեքիջյանի ղեկավարությամբ այն հնչում է և 1980 թվականին Սովետական Հայաստանի 60-ամյակի առթիվ Մեծ թատրոնում կազմակերպված երեկոյին: Այդ օրը կատարվում է և Ա. Բաբաջանյանի «Ձոն Հայաստանին» կանտատը: Երկուսն էլ համահունչ են ժողովրդի նորարար ոգուն, ձգտումներին և հույզերին: Կապելլայի երկացանկում են նաև Ալ. Հարությունյանի «Ձոն Լենինին» օրատորիան, որ հնչեց

նույնպես վերը նշված առիթով Կրեմլի համերգասրահում, և «Հայրենիք» օրատորիան, որ ծավալվում է հանդիսավոր ու ոգեշունչ, երգչախմբային հատուկ գեղեցիկ հնչողությամբ: Շատ քիչ երգչախմբեր կգտնվեն, որոնք այդքան բազմաբնույթ կկիրառեն տեմպային համադրություններն ու ինտոնացիոն երանգները:

Լենինգրադում և Ստամբուլում է կատարվում Գր. Հախինյանի «Սայաթ-Նովա» կանտատը: Ինքը՝ կոմպոզիտորը, գրում է, թե ինչպես Մաեստրո Չեքիջյանը փորձերի ժամանակ կարող էր խոսել հայ աշուղների ստեղծագործությունների մասին՝ այն համարելով դեմոկրատական երաժշտաբանաստեղծական արվեստի ճյուղերից մեկը:

Դժվարությունների հաղթահարումն է ոգևորում Հովի. Չեքիջյանին, երբ ամեն անգամ սիրով վերակենդանացնում է վաղուց գրված, բայց կատարողական ավանդույթ չունեցող գործերը: Դրա վառ օրինակն է Ռոսինիի «Stabat mater»-ը, որը 1964 թվականին առաջին անգամ հնչեց մոսկովյան հյուրախաղերի ժամանակ:

Իսկ Փարիզում «Figaron» գրում է. «Ռոսինիի «Stabat mater»-ի կատարման ընթացքում մեզ ներկայացան գանձերն այն ավանդույթների, որոնք ձեռք են բերվում պրոֆեսիոնալ կարգապահության և կուլտիվի քրտնաջան աշխատանքի շնորհիվ:

Սովետական Միությունում առաջին անգամ հնչեց և Վերդիի «Ազգերի հիմնը», որն իր անդրանիկ կատարումը թրանցել էր 120 տարի առաջ Լոնդոնում համաշխարհային ցուցահանդեսի օրերին: Քնարական բնապատկերներն ու ժողովրդական ուրախ տոնախմբությունը հաջորդում են միմյանց այնպիսի տարբեր գործերում, ինչպիսիք են՝ Բեթհովենի «Բնության զովերգը» ֆանտազիան և անգլիացի կոմպոզիտոր Լամբերտի «Ռիո-Գրանդե» սիմֆոնիկ պատկերը: Սրանք գրված են երգչախմբի, նվագախմբի և դաշնամուրի համար:

Լավագույն դաշնակահարներից, որոնք մասնակցել են այս կատարումներին, նշելի է Նիկ. Պետրովի անունը:

Չեքիջյանական կապելլան այս գործերում ևս ապշեցնում է երգեցողական վիրտուոզ ազատությամբ, կատարողական դժվարությունների հաղթահարման զարմանալի թեթևությամբ, նրբերանգների և կոնտրաստների մեծ ընդգրկումով: Տեխնիկական դժվարություններ, թվում է, գոյություն չունեն կապելլայի համար. ծավալուն երաժշտական կտավները սովորաբար կատարվում են անգիր և բնագրի լեզվով:

Մեկնաբանման կերպերն ու եղանակը հիրավի անսահմանափակ են, և հենց այստեղ է դրսևորվում արվեստագետի անհատականության այսպես կոչված «ինչպես»-ը, որը միշտ շարժուն է, միշտ փոփոխական և ուղղակի կապի մեջ է տվյալ ժամանակի ու ժամանակակցի, ինչպես նաև կատարողական հուզական-իմացական աշխարհի հետ:

Հովհաննես Չեքիջյանի ազգանունը սովորաբար հղվում ենք երեք առումներով՝ որպես խմբավար, դիրիժոր, կոմպոզիտոր: Սակայն Չեքիջյան կոմպոզիտորը մի առանձին խանդով ու համառությամբ լռության է մատնում ստեղծագործությունները: Չեքիջյանական առասպելական պահանջկոտությունն անողոք չափերի է հասնում, երբ հարցը վերաբերում է իրեն: Այնուհանդերձ մի շարք քաղաքների երաժշտասեր ունկնդիրներին քաջ ծանոթ են մեծատաղանդ արվեստագետի որոշ գործեր: Այսպես, Ա.Խաչատրյանի հետ երկարամյա ստեղծագործական բարեկամությունը պսակվեց կոմպոզիտորի 60-ամյակին նվիրված «Ազատության դղանջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմով՝ Ս. Կապուտիլյանի խոսքերով: Մաեստրոյի սիրելի բանաստեղծ Վ.Տերյանի խոսքերով հյուսված «Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը ևս արժանացել է ունկնդրի ջերմ ընդունելությանը: Տերյանական հոգու անփարատ թախիծը, գթությունն ու հույսը, գարնան անհանգստի կարոտը պոեմին հաղորդել են թափանցիկ, մեկը մյուսի մեջ մարող գույների իմպրեսիոնիստական խաղաղություն:

Հայաստանի պետական երգչախումբը՝ կապելլան, և նրա ղեկավարը տարբեր դարաշրջանների ու ոճերի բարդ ստեղծագործությունների կատարմամբ խմբերգային արվեստը հասցրել են մեծագույն բարձունքի և դրանով իսկ արժանացել միջազգային ճանաչման:

Մեծ վարպետությամբ է Մաեստրոն մեկնաբանում և XX դարում գրված ստեղծագործությունները:

Քշիշտոֆ Պենդերեցկին անվերապահորեն ընդունում է իր «Stabat mater»-ի կատարումը՝ համարելով, որ դիրիժորն ու նրա երգչախումբը հնարավորինս հարազատ են մնացել իր ոգուն և ոճին. «Չէի կարծում, որ իմ ստեղծած «Stabat mater»-ը այսպես հմուտ ձեռքերով կմեկնաբանվի, - գրում է Պենդերեցկին: Չարմանում եմ, որ երգչախումբը երգեց անգիր: Շատ երջանիկ եմ, որ արժանացա իմ ստեղծագործության գերազանց կատարմանը»:

1980թ. Լեհաստանում Հայաստանի պետական երգչախումբը Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ կատարում է Կ. Շիմանովսկու «Stabat mater»-ը: Լեհ ունկնդրի համար անակնկալ էր հայկական երգչախմբի կողմից այդ հազվադեպ հնչող գործի կատարումը, և լեհական մամուլը ամենայն մանրամասնությամբ անդրադառնում է իր ազգային դասական դարձած գործի կատարմանը՝ մատնանշելով խմբի «վիրտուոզ վարպետությունը»: Ընդարձակ հարցազրույցներ են տպագրվում Հովհաննես Չեքիջյանի հետ՝ մասնագետներին տեղեկացնելով երգչախմբի փորձերի ինտենսիվության, ուսուցման մեթոդների և այլ հարցերի մասին:

Մեկ զեկուցման կամ հոդվածի սահմաններում հնարավոր չէ առանձնացնել բոլոր մեծակտավ գործերի կատարումները: Բեթովենի IX սիմֆոնիան, Վերդիի կանտատը և «Նաբուկո»-ի համերգային կատարումը, Գունոյի «Մահ և կյանք» օրատորիան էլ վերջնագիծ չեն Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի՝ 1961 թվականից մինչև օրս ղեկավարած Հայաստանի ազգային ակադեմիական կապելլայի հարուստ

երկացանկում: Այս կոթողների չեքիջանական կատարումները, ի թիվս մյուս հաջողությունների, Լենինյան և Խորհրդային Միության պետական մրցանակների կոմիտեի կողմից գրանցվեցին որպես «Երկրի երաժշտական կյանքի խոշորագույն երևույթ»: Հզոր ու առողջ հնչյուններ ծնելու Հովհաննես Չեքիջանի ունակությունը, համոզված ենք, որ կշարունակի մեզ ջերմացնել կենարար համերգային կյանքով:

## ՎԱԼԵՆՏԻՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

արվեստագիտության թեկնածու, դոցենտ,  
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

### ԴԻՐԻԺՈՐ ՉԵՆ ԴԱՌՆՈՒՄ, ԾՆՎՈՒՄ ԵՆ

«Հայրենաբաղձությունը հոգու քաղց է, որ կարող է հագենալ միայն այն բաներով, որոնցով գոյանում է Հայրենիքը, իմ գալուց ի վեր անցել են փասնամյակներ, բայց ես ինձ հաճախ բռնում եմ ուրքը հենց նոր հայրենի հողին դրած մարդու վիճակի մեջ: Գիտեմ անգիր՝ որ ծառը փնկելուց հետո ինչպես է մեծացել, որ շենքը, փողոցը, հուշարձանը կային մինչև վերադարձս, որը կառուցվեց իմ ներկայությամբ, և կարող է բոլորովին իզուր ու անառիթ մի վախ պաշարել քեզ, այս ամենը նորից կորցնելու վախը, որ ապրում է մեջդ որպես ցավի հիշողություն, որպես վատ երագի փագնապ»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ

Այդ վախն ու ցավը, տագնապն այսօր էլ ապրում է յուրաքանչյուր հայի հոգում, սրտում, ապրել է և Ջիլջյանների գերդաստանի 16 սերունդների սրտում, ովքեր արդեն 400 տարի շարունակ աշխարհի երաժիշտներին են հրամցնում աշխարհահռչակ լավագույն ZILDJIAN ծնծղաները, և Մեծն Տիգրան Չուխաճյանը, ով աշխարհում իրենից 300 տարի առաջ ստեղծված օպերային արվեստի (Կ. Մոնտեվերդի) գլուխգործոցների շարքում ավելացրեց և հայկական ազգային առաջին օպերան՝ իր անունը ոսկե տառերով գրելով հայկական երաժշտության տարեգրքում, որպես հայկական դասական երաժշտության հիմնադիր, Քրիստափոր Կարա-Մուրզան, ով հայկական իրականության մեջ ստեղծեց առաջին երգչախմբերը, որոնց շնորհիվ նաև քառաձայն երգեցողությունը, Մակար Եկմալյանը (Պատմական Հայաստանի Եկմալ գյուղից), ով հայ ժողովրդին և աշխարհին հոգևոր ծիսակատարության արարողությանը նվիրեց իր տաղանդավոր մտքի արգասիք, անգերազանցելի՝ «ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻԻՆՔ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ», «Հայաստան»

տանյայց Առաքելական եկեղեցույ» և նաև հիմնադրելով հայկական մասնագիտացված առաջին երգչախումբը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Մեծն Կոմիտաս վարդապետը, ով, հայկական երգն ու պարը օտար ազդեցություններից մաքրելով ու մշակելով, որպես երաժշտական գոհարներ, աշխարհին ներկայացրեց՝ ապացուցելով, որ հայն էլ ունի ինքնուրույն երաժշտություն, Թաթուլ Ալթունյանը, իրականում Հայաստանի առաջին մասնագետ խմբավարը, ով Երևանի կոնսերվատորիայից հետո ավարտել էր Լենինգրադի Ն.Ռիմսկի-Կորսակովի անվան կոնսերվատորիան երկու մասնագիտությամբ՝ հորոյ (Ֆ. Նեյմանի դաս.) և խմբավարություն (Ա. Եգորովի դաս.): 1937թ. նա ստեղծեց Հայաստանի պետական երգչախումբը, որը, 1939-ին մեծ փայլով ու հաջողությամբ հանդես գալով Մոսկվայում կայացած հայկական գրականության և արվեստի առաջին տասնօրյակի համերգներին, արժանացավ Խորհրդային Միության կառավարական ու պետական պարգևների, և վերջապես Արամ Տեր-Հովհաննիսյանը, ով կանգնեց երգչախմբի նոտակալի առջև (1940-1941թթ. և 1955-1960 թթ.) ու նրա կատարողական արվեստը հասցրեց միջազգային մակարդակի, և ինչպես Ա.Շեկունցն է իր «Հայ խմբավար կոմպոզիտորներ» գրքում նշում (Երևան, 1986, էջ 45). «...իր հրաշագործ վարպետությամբ ստեղծեց Կոմիտասի երկերի մեկնաբանման չափանիշն ու ավանդույթները: Դիրիժորի նոր մեկնաբանությունը խորտակեց ազգային նեղ շրջանակները և այն դուրս բերեց միջազգային լայն ասպարեզ»:

Ահա վերը նշված հայկական երաժշտության այս տիտաններից հետո էր, որ 1961 թ. Հայաստանի պետական երգչախմբի ղեկավարությունն ստանձնեց Միջին Արևելքում հայտնի, հեղինակություն վայելող, երիտասարդ խմբավար Հովհաննես Հարությունի Չեքիջյանը: Եվ այդ օրն էլ կարծես թե ինքը երկրորդ անգամ ծնվեց.



«Դա իմ կյանքի օրերի օրն էր, երբ մայրդ քեզ կյանք է նվիրում՝ իր առաջին առավոտով, ամբողջ լույսով ու ստվերով, մարդկային խոր ցավերով ու կարոտով, այն ամենով, ինչը հետո դառնում է ճակատագիր: Եվ ինչքան էլ մենք կքվենք առօրյա հոգսերից, անիծենք մեր բախտը և հենց կյանքը, միևնույն է, մեզ տրված կյանքը մեծագույն պարզ և: Իսկ մեր կյանքի պարտատերը մեր ժողովուրդն է: Միայն նա կարող է մեր օրերին իմաստ և ուղղություն հաղորդել: Ես սա ապրել եմ սփյուռքահայի ճանապարհին անցնելուց հետո»:

Արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանի ճշմարիտ բնորոշմամբ. «...այստեղից էլ սկսվեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի տարեգրության Ոսկեդարը», երբ հայկական կապելլան հասավ ԽՍՀՄ լավագույն ակադեմիական երգչախմբերի մակարդակին՝ որոշ առումներով գերազանցելով նրանց, ու ձեռք բերեց միջազգային ճանաչում և համաշխարհային հռչակ, նշանավորվեց ամենայն հայոց Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի գործունեությամբ, ում մասին Մեծն Արամ Խաչատրյանն իրավացիորեն գրել է. «Շատ բարձր եմ գնահատում Հովհաննես Չեքիջյանի կատարած աշխատանքը: Նա համաշխարհային ընդգրկման դիրիժոր է, խմբերգային արվեստը հասցրել է համամարդկային հնչողության»: Դիպուկ է ասված:

Համոզված ենք, որ ամենայն հայոց Մաեստրոյի հոբելյանին նվիրված այս գիտաժողովի մասնակիցներից շատերն են 1961 թվականի նոյեմբերի 27-ին ներկա եղել Երևանում Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ կայացած անդրանիկ համերգի բեմելին: Հայաստանի պետական երգչախումբը ներկայացրեց նոր ծրագիր: Ամենայն Մաեստրոյի անդրանիկ համերգը մայր հայրենիքում, հայտագրի անունն էլ՝ Կոմիտաս:

Անժելա Հովհաննիսյանն այսպես է նկարագրել այդ երեկոն. «Խմբերգային համերգի երկրպագուները բերնբերան լցրել էին Հայ-

ֆիլիարմոնիայի մեծ դահլիճը: Նրանց, անշուշտ, կարելի էր հասկանալ: Արամ Տեր-Հովհաննիսյանին հաջորդած տասնմեկ դիրիժորներն այնպիսի արագությամբ փոխարինեցին միմյանց, որ ունկնդիրը չհասցրեց յուրացնել անգամ անունները: Երաժշտության այդ ժանրի պահանջը հագեցնում էին ավելի շատ Արամ Տեր-Հովհաննիսյանի կատարած ծայնագրությունները, որոնք անդադար հնչում էին հանրապետության ռադիոյի երաժշտական ծրագրերում, քան դահլիճում կայացած համերգները: Այն հազվադեպ համերգներն էլ, որ այսուհանդերձ տրվում էին Հայաստանի պետական երգչախմբի հայտագրերով, չափազանց քիչ ունկնդիր էին բերում համերգասրահ»:

Եվ Հայֆիլիարմոնիայի մեծ դահլիճի կամարների տակ հնչում է Հրայր Համբարձումյանի ծայնը.

- Ելույթ կունենա Հայաստանի պետական երգչախումբը, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Հովհաննես Չեքիջյան:

Կոմիտաս՝ «Գութանի երգը», «Կալի երգը», «Երկրագործի երգը», մթնոլորտն ավելի է շիկանում, երբ հնչում են Մակար Եկմայանի «Ով հայոց աշխարհ» (բնագրում՝ Աստված), «Հողն մեր հնավանդ» երգերը, որոնք կարծես մի առանձին սիմֆոնիաներ հնչեցին երգչախմբի կատարմամբ, դիրիժորի ձեռքերի ցուցումով, իսկ դիրիժորը, դառնալով դեպի դահլիճ, համոզվեց է, որ այս երկերը հայրենիքի համար են գրվել, այն էլ իր ղեկավարության համար: Իսկ Կոմիտասի հարսանյաց երգերը ցնծության ալիք են բերում շիկացած դահլիճ, իսկ Մ. Եկմայանի Պատարագից «Սուրբ սուրբը» այնպիսի լույս է սփռում դահլիճում, կարծես ի վերուստ հրեշտակներն են պտտվում Մաեստրոյի և երգչախմբի շուրջը:

Այստեղ էլ կայացավ Մաեստրոյի առաջին հանդիպումը նաև Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ հնչեցնելով Լ. Վ. Բեթհովենի 7-րդ սիմֆոնիան: Այսպիսին էր այն մեծ գործընթացի սկիզբը, որն արդեն կես դարից ավելի է աշխարհի չորս ծագերի

ունկնդիրների առջև իրականացնում է Մաեստրո Հովհաննես Չեքիջյանը՝ իր աննման երգչախմբի հետ հանդես գալով հայտնի և անհայտ, մեծ ու փոքր դահլիճներում:

Այսպես իրականացավ ամենայն հայոց Մաեստրո Հ. Չեքիջյանի՝ հայրենի հողին ու նրա բուրմունքին արժանանալու մանկուց փայփայած երազանքը, որի մասին հետագայում պետք է պատմեր արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանին, նա էլ նմանը չունեցող Մաեստրոյի մտքերը պետք է զետեղեր Հայաստանի կապելլային նվիրված գրքում ու մեզ նվիրեր:

Առաջին մարդը, ով Հայաստանում նրան այցելեց, Ալեքսանդր Հարությունյանն էր, ում գլուխգործոցներից մեկի՝ «Հայրենիքի մասին կանտատի» նոտաները Հայաստանի ռադիոյից էր լսել ու տիտանական համբերատար աշխատանքի շնորհիվ նոտագրել չորս երգաբաժինների նոտաները, ապա և կատարել Ստամբուլում իր ղեկավարած երգչախմբերի համերգներին... Մնացյալը հայտնի է բոլորին:

Եվ արդեն 53 տարի աշխարհի հայտնի ու անհայտ հազարավոր բեմահարթակներում, ջահերով միայն լուսավորված հարյուր երգչից բաղկացած երգչախմբի առջև վեր են խոյանում դիրիժորի կախարհող ձեռքերը և ունկնդրին հիպնոսացնելով տանում աներևակայելի երազների այն աշխարհը, որը երգարվեստ ու երգեցողություն է կոչվում, և որը ոգևորում, խթանում ու վերերկրային գործերի է մղում հայ մարդուն, ստեղծելու, արարելու ու հավերժացնելու իր հայրենի բնության գեղեցկություններն ու նվաճումները, գեղեցկացնում կյանքը: Եվ նրա դյուբլիզ դիրիժորական կատարողական արվեստի ազդեցությունն է, որի շնորհիվ հայ մարդը երջանկանում ու հպարտանում է իր ժողովրդով ու Հայրենիքով:

Դրվատանքի, գնահատանքի ու գովեստի հազարավոր էջեր են գրվել Հ. Չեքիջյանի դիրիժորական, խմբավարական կատարողական արվեստի շնորհիվ հնչող, կատարվող ստեղծագործությունների անզու-

գական մեկնաբանությունների մասին, հատկապես հիշարժան է «Սովետական մուզիկա» հանդեսի էջերում մասնագիտական վերլուծությունը: 1978-ին Կրեմլի համագումարների պալատում կայացած «Մուկոլյան աստղեր» փառատոնին Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի ներկայացրած ծրագիրը լսելուց հետո հողվածագիրը նշել է. «Շքեղ, թեթև, գրեթե գործիքային է ձայնարտաբերումը, փափուկ, հյուսիս, հագեցած է ամբողջ խմբի հնչողությունը՝ հստակ լսելի դարձնելով յուրաքանչյուր երգաբաժնի տեմբրը: Հ. Չեքիջյանի բոցավառ երևակայությունը և ստեղծագործական կամքը, բազմապատկված հսկայական բազմագիտությամբ և մշակույթով, օգնել են ստեղծելու իսկական գլուխգործոցներ»:

Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի պետական երգչախումբը Հ. Չեքիջյանով, ինքն էլ նրանցով, ամենայն հայոց Մաեստրոյի տաղանդի ու ի վերուստ նրան շնորհված շնորհների արդյունքով դարձան աշխարհի մեկ վեցերորդ մասի խմբական երգեցողության բնագավառում ամենահայտնի, ամենաառաջավորներից ու ամենաառաջատարներից, նաև ամենափնտրվածներից, ամենասպասվածներից ու ամենասիրելիներից՝ աշխարհի երաժշտասերներին ներկայացնելով Յոհան Բախի, Գեորգ Ֆրիդրիխ Հենդելի, Հեկտոր Բեռլիոզի, Յոզեֆ Հայդնի, Վոլֆգանգ Մոցարտի, Լյուդվիգ Բեթհովենի, Ջուզեպպե Վերդիի, Ջակոմո Պուչչինիի, Յոհաննես Բրամսի, Գաբրիել Ֆորեի, Տիգրան Չուխաճյանի, Մակար Եկմայանի, Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Ալան Հովհաննեսի և էլի հարյուրավոր անվանիների Սիմֆոնիաները, Ռեքվիեմները, Մադրիգալներն ու Մագնիֆիկատները, Ձոներգերը, օպերային զարմանահրաշ խմբերգերն ու խմբերգային բազում ստեղծագործություններ, որոնց թվում 500-ից ավելի նոր պարտիտուրներ ու հատուկ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի համար գրված տարբեր ժանրերի պարտիտուրներ, փառք ու պատիվ բերելով հայրենիքին ու հայրենի ժողովրդին:

Այս բոլորին զուգահեռ ամենայն հայոց Մաստրոնոսկե էջ է գրել նաև հայկական ազգային օպերային արվեստի տարեգրքում՝ 1982 – 1987 թթ. գլխավորելով Հայաստանի ազգային օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը, որպես գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր:

Այստեղ էր, որ հայրենաբաղձ ու հայրենադարձ արվեստագետներ Հովհաննես Չեքիջյանն ու թատրոնի գլխավոր բեմադրիչ, ՀՀ ժողովրդական արտիստ, անվանի երգիչ Տիգրան Լևոնյանն իրականացրին հայկական ազգային առաջին օպերայի հիմնադիր Մեծն Տիգրան Չուխաճյանի «Արշակ Բ» չքնաղ օպերայի նոր, բեմական նորամուծություններով հագեցած բեմադրությունը: Այստեղ միայն նշենք որպես ներկայացման սկիզբ բեմը զարդարող այն հզոր ու խոշոր, հնչելու զանգերը, որոնք խորհրդանշում էին Հայկական թագավորության և նրա տիրակալ Արշակի ու հայ ժողովրդի հավատամքն ու հավատարմությունը և 350-ական թվականների Հայաստան աշխարհի հզորությունը: Բեմադրությունը, որը հետագայում ներկայացվեց նաև Զվարթնոց տաճարի փլատակների վրա, անչափ համահունչ էր երբեմնի գեղատես տաճարի վեհությանը: Ցավալի է, որ այժմ հրաշալի բեմադրությունը ինչ – ինչ պատճառներով հանվել է հայտագրից: Կարծում ենք՝ այն վերականգնելու ժամանակն է: Բեմադրության նկարիչն էր ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր Եվգենի Սաֆրոնովը: Կարևոր հանգամանք, որ բեմադրությանը մասնակցում էր Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ դրանով իսկ մի քանի անգամ հզորացնելով խմբերգերի հնչողությունը, նոր շունչ ու ավիշ ներարկելով բեմադրությանը: Նորույթ էր և 1982-ի դեկտեմբերի 10-ին և 11-ին Հ. Չեքիջյանի երաժշտական ղեկավարությամբ հայ երաժշտասերին ներկայացված Հեկտոր Բեռլիոզի՝ մեներգիչների, երգչախմբի և նվագախմբի «Ռոմեո և Զուլիետ» դրամատիկական սիմֆոնիայի բեմադրությունը, մասնակցությամբ Հայաստանի պետական ակադեմիական երգ-

չախմբի, Արթուր Վերանյանի ղեկավարությամբ Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների կոմիտեի կամերային երգչախմբի, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի մանկական երգչախմբի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Նինա Իսակովայի, Կառլ Զարինջի, Միհրան Երկաթի ու Վալերի Հարությունովի մասնակցությամբ: Մի առանձին նշանակություն ունեւր բալետային խմբի և մենապարողներ Էլվիրա Մնացականյանի (Զուլիետ) և Սերգեյ Բարանովի (Ռոմեո) մասնակցությունը, բեմադրությունը՝ ՀՀ ժողովրդական արտիստ Վիլեն Գալստյանի:

Մեկ տարի անց Հ. Չեքիջյանի դիրիժորությամբ և պարուսույց Ա. Ասատրյանի բեմադրությամբ բեմահարթակ բարձրացվեց Պ. Չայկովսկու «Թեմա վարիացիաներով» բալետային բեմադրությունը: Հետաքրքրականն այն է, որ օպերային թատրոնի դիրիժորները նոր բեմադրությունների իրականացման գործում նույնպես քրտնաջան ու համառ աշխատանք էին կատարում, ինչպես ժողովրդական արտիստներ Արամ Քաթանյանը, Յուրի Դավթյանը, վաստակավոր արտիստ Վիլեն Զարչոյլյանը, իսկ Զ. Փալիաշվիլու «Դաիսի» օպերայի բեմադրությունը ղեկավարում էր հրավիրված դիրիժոր Ռ. Թադիձեն:

1984 թ. լույս ընծայվեց օպերային արվեստի բազմամյա նվիրյալ երգիչ ու մեկնաբան Կառլոս Մարկոսյանի հեղինակած օպերային թատրոնի անցած 50-ամյա ստեղծագործական ուղուն նվիրված գիրքը, որի հրատարակման նախաձեռնողը նույնպես Հ. Չեքիջյանն էր: Ու նորից Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի համերգներ, համերգներ ու էլի համերգներ Լենինգրադում, Սոչիում, Դագոմիսում, Ռիգայում, Վիլնյուսում, Կաունասում, Ռոստովում, Տագանրոգում, Քիշնևում, բազում երկրներում ու քաղաքներում կայացած համերգներին Հ. Չեքիջյանի դիրիժորությամբ հնչում են Անտոնիո Վիվալդիի «Gloria»-ն, Բեթհովենի «Ֆանտազիան», Շուբերտի C-dur կանտատը, Ֆորեի «Requiem»-ը, Բեռլիոզի «Te Deum»-ը, իսկ հաջորդ

տարվա Լենինգրադում, Թբիլիսիում, Մերձբալթյան հանրապետություններում հյուրահամերգներին մասնակցում էին Ելենա Օբրագովան, Մարիա Բիեշուն, Իրինա Արխիպովան, Կառլ Զարինշը և Վալերի Հարությունովը:

1986-ին ամենայն հայոց Մաեստրոյին ծափողջունել են Փարիզն ու Մարսելը, Վերդի «*Gloria*»-ի, Բեթհովենի դաշնամուրի, երգչախմբի և նվագախմբի Ֆանտազիայի, Վերդիի «Նաբուկկո» և Տիգրանյանի «Անուշ» օպերաներից հատվածների՝ Հասմիկ Պապյանի մենակատարմամբ, ապա և մի առանձին խմբերգային ծրագրի՝ Եկմայանի, Կոմիտասի, Չեքիջյանի, Նովիկովի, Վերդիի, Ռոսսինիի, Մասկանիի, Գունդի, Գերշվինի խմբերգերից կազմված ծրագրերի համար: «*Le provençal*»-ն իր 1986թ. սեպտեմբերի 29-ի համարում գրել է. «Հայաստանի ակադեմիական երգչախմբի մարսելյան հյուրահամերգներն անցան բուռն հիացմունքի և խոր համակրանքի մթնոլորտում:

Դա անմոռանալի համերգ էր:

Մենք կարող ենք վստահաբար փաստել, որ այս կապելլան աշխարհի լավագույն խառը երգչախմբերի թվին է պատկանում: Ես դա համարձակորեն եմ պնդում: ... Կապելլայի արտիստներն իրենց անկեղծությամբ ունկնդրի վրա թողնում են անջնջելի տպավորություն, քանզի նրանք երգում են իրենց հայրենիքի ոգին: Նրանք ներկայացնում են հանճարեղ Կոմիտասի մշակումները, էջեր Եկմայանի, Կանաչյանի, Չեքիջյանի և Հարությունյանի ստեղծագործություններից» և Հովհաննես Չեքիջյանի ու նրա ղեկավարած Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի մասին նման շուրջ 1200 կարծիք ու հոդված:

Ահա և հազարավոր այդ կարծիքներից վերջինը. ճիշտ տասը տարի առաջ՝ 2004 թ. հունվարի 23-ին, Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում

նշվում էին դիրիժորի կախարդական փայտիկի տիրակալի ծննդյան 75 և ստեղծագործական գործունեության 60-ամյա հոբելյանները:

Այդ առթիվ Ամենայն Հայոց Կաթողիկոս, Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ-ի շնորհավորական կոնդակում մասնավորապես նշված է. «Գնահատանքով ենք անդրադառնում, որ երգչախմբի հարուստ երկացանկում միշտ առանձնակի տեղ է ունեցել հայկական հոգևոր երգը, մատուցվել ու տարփողվել բացառիկ սիրով ու նախանձախնդրությամբ, որպեսզի հոգևոր երգարվեստի մեր արժեքները շարունակեն ապրել այսօր ու փոխանցվեն մեր զավակներին: Տոնական այս առիթով ուրախություն է Մեզ համար նշել, որ տաղանդավոր հայորդու և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակ Հովհաննես Չեքիջյանի կուրծքը զարդարված է նաև Հայ Եկեղեցու պարզևոճճ՝ Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ պատվո շքանշանով»:

Ի դեպ, ամենայն հայոց Մաեստրոյի կառավարական ու այլազան պարգևների թիվը 50-ի է հասնում:

Եվ վերջին խոսքը ամենայն հայոց Մաեստրո Հովհաննես Չեքիջյանին.

«Հայաստանի պետական երգչախումբը Հայաստանից դուրս կտրել - անցել է ավելի քան 400000 մղոն ճանապարհ. օդով, ծովով, ցամաքով երգ ենք տարել մարդկանց: Զարմանալի բան է՝ մանկության մեծագույն երազանքս ծովն էր և այն էլ՝ ավելի ծովը: Իմ բոլոր արթմնի երազներում տեսնում էի ինձ նավապետի դերում և, իհարկե, հենց որ իրար էին հանդիպում իմ վարած նավն ու օվկիանոսը, իսկույն փոթորիկ էր սկսվում: Կռվում էի տարերքի դեմ, նավը բախվում էր ժայռերին, ալիքները հասնում էին կայմին, ծովի մոլեգին տարերքը խստացնում էին ամպրոպն ու կայծակը, բայց նավը դիմակայում էր. . . Հետո, ինչպես արթմնի բոլոր երազներում, փոթորիկը խաղաղվում էր, և իմ հոգնած – հաղթանակած նավը ափ էր հասնում:

Ունկնդիր ասվածդ ինձ միշտ ծովի պես առեղծված է մնացել, մինչև չսուզվես, ծովի խորությունը չես զգա, բայց եթե հմուտ լողորդ չեղար, կխորտակվես»:

Ուրեմն, նավապետ ամենայն հայոց Մաեստրոյի նավը իր կյանքի բոլոր տարիներին թող երկարատև ճամփորդություններից հայրենի նավահանգիստ վերադառնա, որտեղ նրան կդիմավորեն սրտաբաց, ժպիտով ու ծաղիկներով:

### Ծանոթագրություն

1. **Թեյմուրազյան Ն. Ա.** Մակար Եկմայան, համառոտ քիբիոգրաֆիա, Եր., 1959:
2. **Հովհաննիսյան Ա. Հ.** Հովհաննես Չեքիջյան, «Սով. գրող», Եր., 1984:
3. **Շեկունց Ա. Գ.** Հայ խմբավար կոմպոզիտորներ, Եր., 1986:
4. **Ասատրյան Ա. Գ.** Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ, «Ամրոց գրուպ», 2007:
5. **Ասատրյան Ա. Գ.** Ամենայն հայոց Մաեստրոն ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ, «Ամրոց գրուպ», 2009:

## ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

արվեստագիտության թեկնածու, դոցենտ,  
Խ.Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ

Ինչպես գիտենք, իր կատարողական գործունեության ընթացքում Հովհաննես Չեքիջյանը համերգներով հանդես է եկել աշխարհի տարբեր երկրներում, բազմաթիվ քաղաքներում: Սակայն երկրագնդի վրա կան երկրներ ու քաղաքներ, որոնք հատկապես թանկ են Մաեստրոյի համար, քանի որ կարևոր դեր են կատարել նրա ստեղծագործական կյանքում: Դրանց շարքում կարևորագույններից են Փարիզը և Ֆրանսիան:

1951-1953 թվականներին Հ.Չեքիջյանը սովորել է Փարիզի “Ecole normale de Musique” կոնսերվատորիայում: Աշակերտելով Փարիզի օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր Ժան Ֆուրնեին՝ Հ. Չեքիջյանը փայլուն դպրոց է անցել և կատարելապես տիրապետել սիմֆոնիկ դիրիժորի արվեստին: «Մեր պրոֆեսորը մեր գործի նրբություններն էր սովորեցնում,- հետագայում կհիշի Մաեստրոն,- ես մշտապես հետևում էի նրա շարժումներին, նրա արվեստին, որովհետև նա ինձ այդ գործի գաղտնիքներն էր սովորեցնում: Եվ գիտե՞ք՝ ինչ էր անում. գնում կանգնում էր, օրինակ, տրոմբոնների կողքին, և ես չափ էի տալիս, նա ասում էր՝ ստո՛ւ պ: Այսպես չափ տվեցիր՝ սա՛ ստացար, իսկ եթե այսպես չափ տաս՝ այսպիսի արդյունք կունենաս: Ինձ մի՛ կապկեք, ասում էր, արտաքին շարժումներ մի՛ վերցրեք: Նույնիսկ կարող ես շարժումներ չանել, սակայն աչքերով հասկացնել, լուրջամբ հասկացնել: Նրանից շատ բան եմ սովորել, այո՛, շատ-շատ: Այնպես որ այսօր

էլ ե՛ս եմ ասում՝ ինձ կապկեք, կրկնել պետք չէ»<sup>1</sup>:

Եվ միանգամայն բնական է, որ Ֆրանսիան ու ֆրանսիական երաժշտությունը հետագայում մեծ դեր ունեցան Հ.Չեքիջյանի կատարողական կյանքում: Ֆրանսիայի և Մաեստրոյի առնչությունները երկու բնույթի են՝

1. Ֆրանսիական կոմպոզիտորների վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունները Հ.Չեքիջյանի մեկնաբանությամբ,
2. Հ.Չեքիջյանի և Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հյուրախաղերը Ֆրանսիայում:

Հայկական Կապելլայի երկացանկում իրենց հաստատուն տեղն ունեն ֆրանսիացի կոմպոզիտորների ստեղծագործությունները, որոնց մի մասը Խորհրդային Միությունում առաջին անգամ կատարվել է հենց Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ: Ավելին՝ «ո՛ր կոմպոզիտորն է Ձեզ առավել հոգեհարազատ» հարցին Մաեստրոն պատասխանել է՝ «Առաջինը Կոմիտասն է, երկրորդը՝ Բեռլիոզը»<sup>2</sup>: Սիրելի կոմպոզիտորի ստեղծագործություններից Կապելլայի երկացանկում ներկայացված են «Requiem»-ը, «Ռոմեո և Ջուլիետը» և «Te Deum»-ը: Չեքիջյանն անդրադարձել է նաև Գաբրիել Ֆորեի «Requiem»-ին և Շառլ Գունոյի «Մահ և կյանք» օրատորիային: Եվ դա այն դեպքում, երբ «Ֆրանսիական խմբերգային երաժշտությունն առանձնապես չի վայելում մեր կատարողների (խոսքը սովետական կատարողների մասին է – Ա.Հ.) հատուկ ուշադրությունը: Անգամ Բեռլիոզի հանճարեղ «Requiem»-ը մեր համերգային էստրադայի հազվադեպ հյուրն է: Էլ չենք խոսում Ֆրանկի ու

<sup>1</sup> Ասատրյան Աննա, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 26: Դավթյան Սուսաննա, Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2000, էջ 93:

<sup>2</sup> Առաքելյան Էմմա, Ֆրանսիական կոմպոզիտորների ստեղծագործությունները Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ. Հ.Բեռլիոզ՝ «Requiem», Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջան, նվիրվում է Տիգրան Չոխաճյանի ծննդյան 175-ամյակին (19-21 հոկտեմբերի, 2012), Նստաշրջանի նյութեր, Երևան, 2013, էջ 248:

Դեբյուսիի օրատորիաների ու կանտատների մասին»<sup>3</sup>:

Հ.Չեքիջյանի շնորհիվ խորհրդային ունկնդրին անձանոթ այդ ստեղծագործություններն առաջին անգամ հնչում են Սովետական Միության տարբեր քաղաքներում, բայց առաջինը դրանց, բնականաբար, ծանոթանում է երևանյան ունկնդիրը:

Ի դեպ, հենց Հ.Չեքիջյանի ջանքերով տեղի ունեցավ Բեռլինի «Requiem»-ի<sup>4</sup> երևանյան պրեմիերան 1967-ի փետրվարի 1-ին և 2-ին: Օրեր անց՝ փետրվարի 26-ին, «Requiem»-ը հնչեց Մոսկվայում՝ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ, ՍՍՀՄ պետական սիմֆոնիկ նվագախմբի և Հայաստանի պետական երգչախմբի կատարմամբ: Իսկ մարտի 2-ին և 3-ին ստեղծագործությունը Մաեստրոյի ղեկավարությամբ հնչեց Լենինգրադում՝ Հայաստանի պետական երգչախմբի և Լենֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: Հ.Չեքիջյանի կատարմամբ «Requiem»-ը հնչել է 37 անգամ Երևանում, Մոսկվայում, Լենինգրադում, Մինսկում, Թբիլիսիում, Վիլնյուսում, Կիևում, Քիշնևում, Կաունասում, Ուլյանովսկում, Տիրասպոլում, Խարկովում, Դնեպրոպետրովսկում, Սվերդլովսկում, Լվովում, Օդեսայում, Նովոսիբիրսկում, Օմսկում, Տոմսկում:

Հայրենիք տեղափոխվելուց տասը տարի անց՝ 1971 թվականին, Մաեստրոն հանդես է գալիս շատ գնահատելի նախաձեռնությամբ և երևանյան ունկնդրին մատուցում իր հերթական անակնկալը: 1971 թ. հունվարի 27-ին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում Սովետական Միությունում առաջին անգամ հնչում է Գաբրիել Ֆորեի՝ հայրենիքից

դուրս սակավ հնչող «Requiem»-ը. կատարումը գնահատվեց որպես «հայտնություն մայրաքաղաքի երաժշտասերների համար»<sup>5</sup>: «Յոթ մասից բաղկացած այդ ստեղծագործությունը երգչախումբը մատուցեց բարձր վարպետությամբ: «Ռեքվիեմի» կատարմանը մի առանձին հմայք հաղորդեցին ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը, հանրապետության ժողովրդական արտիստ Միհրան Երկաթը, երգեհոնահար Կառլեն Թովիջյանը»<sup>6</sup>: Ի դեպ, երգչախումբն այդ դժվարին ստեղծագործությունը յուրացրել էր ընդամենը մեկ ամսում: Հ.Չեքիջյանի խոստովանությամբ Ֆորեի երաժշտությունը վաղուց էր հրապուրում իրեն, և նա մտադիր էր այդ գոհարը զետեղել երգչախմբի համերգացանկում<sup>7</sup>:

1971-ի փետրվարի 5-ին Մոսկվայում հնչում է Ֆորեի «Requiem»-ը, ինչպես նաև Մոսկվայում երբևիցե չկատարված Գունոյի «Մահ և կյանք» օրատորիան: «Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ երկրի լավագույն խմբերգային կոլեկտիվներից մեկը, ևս մեկ անգամ ապացուցեց իր գեղարվեստական բարձր հեղինակությունը: Հովհաննես Չեքիջյանը դրսևորեց իրեն որպես տաղանդավոր և կամային դիրիժոր»<sup>8</sup>: Երգչախումբը հանդես եկավ Մոսկվայի պետական ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի հետ: Մենակատարներն էին Գոհար Գասպարյանն ու Միհրան Երկաթը:

Ուկրաինայում առաջին անգամ Ֆորեի «Requiem»-ը հնչում է հոկտեմբերի 9-ին Յալթայում, հոկտեմբերի 10-ին և 11-ին՝ Սիմֆերոպոլում, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի և Ղրիմի պետական ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ՝

<sup>3</sup> Юрьев Н. Первое исполнение, «Музыкальная жизнь», 1971, N 11 (325).

<sup>4</sup> Հ.Բեռլինի «Requiem»-ի չեքիջյանական մեկնաբանումների մասին տե՛ս Առաքելյան Էմմ, Ֆրանսիական կոմպոզիտորների ստեղծագործությունները Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ. Հ.Բեռլինի «Requiem», Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջան, նվիրվում է Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին (19-21 հոկտեմբերի, 2012), Նստաշրջանի նյութեր, Երևան, 2013, էջ 247-252:

<sup>5</sup> Հնչում է Գաբրիել Ֆորեի Ռեքվիեմը, «Սովետական արվեստ», 1971, N 3:

<sup>6</sup> Ֆորեի «Ռեքվիեմը» առաջին անգամ, «Երեկոյան Երևան», 1 փետրվարի, 1971:

<sup>7</sup> Տե՛ս Ֆորեի «Ռեքվիեմը» առաջին անգամ, «Երեկոյան Երևան», 1 փետրվարի, 1971: Տե՛ս Մաթևոսյան Վ., Հնչեցին առաջին անգամ, «Սովետական Հայաստան», 3 փետրվարի, 1971:

<sup>8</sup> Юрьев Н. Первое исполнение, «Музыкальная жизнь», 1971, N 11 (325).

Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ:

Կապելլայի և Մատարոյի կատարմամբ 1971թ. հոկտեմբերին Ֆորեի «Requiem»-ն առաջին անգամ հնչում է Մոլդավիայում՝ հոկտեմբերի 16-ին և 18-ին՝ Քիշնևում<sup>9</sup>, հոկտեմբերի 19-ին՝ Տիրասպոլում՝ Մոլդավիայի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի հետ: Կիևում առաջին անգամ հոկտեմբերի 22-ին հնչում են Ֆորեի «Requiem»-ը և Գունոյի «Մահ և կյանք» օրատորիան, իսկ Լիտվայում՝ հոկտեմբերի 29-ին՝ Կաունասում, իսկ հոկտեմբերի 30-ին՝ Վիլնյուսում:

1971թ. նոյեմբերի 3-ին և 4-ին Լենինգրադում տեղի է ունենում Գարրիել Ֆորեի «Requiem»-ի լենինգրադյան պրեմիերան՝ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի և Լենինգրադի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ<sup>10</sup>:

«Երեկոյան Երևան» թերթի 1976 թվականի օգոստոսի 26-ի համարում տպագրված հարցազրույցում Հ.Չեքիջյանը նշում է. «Այժմ զբաղված ենք Տե Դեումի փորձերով: Այն Սովետական Միությունում, Լենինգրադի ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում, տեղի սիմֆոնիկ նվագախմբի հետ կհնչեցնենք առաջին անգամ»<sup>11</sup>:

Բեռլինի «Te Deum»-ը Լենինգրադում հնչեց 1977թ. հունվարի 10-ին և 11-ին Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի և Լենինգրադի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ՝ «ԽՍՀՄ-ում առաջին անգամ» խորագրի տակ: «Ըստ էության, լենինգրադյան առաջին համերգը կարելի է անվանել պրեմիերաների ներկայացում: Համերգի երկրորդ բաժնում դարձյալ առաջին անգամ հնչեց Բեռլինի Տե դեում ստեղծագործությունը՝ գրված 1001 մասնակցի համար (երգչախումբ՝ 200, մանկական երգչախումբ՝ 600, սիմֆոնիկ նվագախումբ՝

200 և երգեհոնահար): Այս նշանավոր երկը նվիրված է հաղթանակին, լույսին, ցնծությանը: Ստեղծագործությունը հնչեցրեց 300 հոգանոց կոլեկտիվը, որի կազմում հանդես եկան Հայաստանի պետական ակադեմիական, Լենինգրադի Գլխակայի անվան ակադեմիական երգչախմբերը, տեղի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը, Մուսորգսկու անվան երաժշտական ուսումնարանի ջութակահարների անսամբլը և Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երգչախումբը: Մեներգերը կատարեց Ռիգայի օպերային թատրոնի մեներգիչ Կարլ Զարինը: Ունկնդիրը խանդավառ ու երախտապարտ ողջունեց Բեռլինի նշանավոր երկի առաջին կատարումը»<sup>12</sup>:

Իսկ Լենինգրադի գեղարվեստական ղեկավար Վիտալի Ֆոմինը նկատեց. «Մեզ համար հաճելի է, որ հենց այստեղ՝ Գ.Գ.Շոստակովիչի անվան լենինգրադյան ֆիլհարմոնիայի պատերի ներսում, տեղի ունեցավ XIX դարի ֆրանսիացի հայտնի կոմպոզիտոր Բեռլինի հսկայական «Տե Դեում» ստեղծագործության՝ ԽՍՀՄ-ում առաջին կատարումը, որը նախկինում երբեք չէր հնչել մեր երկրում: «Տե Դեում»-ի կատարումը դարձավ հսկայական նշանակության իսկական մշակութային և երաժշտական իրադարձություն ոչ միայն Լենինգրադի, այլև մեր երկրի ողջ երաժշտական կյանքի համար: Այստեղ, անկասկած, կարևոր դեր կատարեցին գլխավոր դիրիժոր և ականավոր երաժիշտ Հ.Չեքիջյանի մանրակրկիտ փորձերը համերգին մասնակցող երաժշտական կոլեկտիվների հետ»<sup>13</sup>:

Ֆորեի «Requiem»-ին և Բեռլինի «Te Deum»-ին լենինգրադյան ունկնդիրը վերստին հանդիպեց 1983-ի հունիսի 21-ին և 22-ին:

«Ապրիլի 16-ին Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը Լենինգրադ է բերում համերգաշրջանի զարդը՝ Բեռլինի

<sup>9</sup> Տե՛ս **Богдановский Е.**, Концерты академической капеллы Армении, «Советская Молдавия», 22 октября, 1971.

<sup>10</sup> Տե՛ս համերգի հայտագիրը, Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

<sup>11</sup> Երգի թևերով, «Երեկոյան Երևան», 289 օգոստոսի, 1976:

<sup>12</sup> **Վարդանյան Ռուբեն**, Պրեմիերաներ Լենինգրադում, «Սովետական Հայաստան», 1 փետրվարի, 1977:

<sup>13</sup> И мастерство, и вдохновение, «Коммунист», 2 февраля, 1977.



«Ռոմեո և Ջուլիետ» սիմֆոնիան, որը Խորհրդային Միությունում կատարվում է առաջին անգամ: Համերգը վարում է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանը: Համերգասրահը ծափահարում է հոտնկայս և արդեն ավանդական դարձած սովորությամբ, ճանապարհելով սիմֆոնիկ նվագախմբին, երկարատև օվազիա սարքում երգչախմբի պատվին՝ վերստին բեմ հրավիրելով մեներգիչներին՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Նինա Իսակովային և Կարլիս Զարինշին, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Ալբերտ Խաչատրյանին և, իհարկե, տոնի մեղավորին՝ Հովհաննես Չեքիջյանին»<sup>14</sup>:

1983թ. հունվարի 18-ին Մոսկվայում առաջին անգամ հնչեց Բեռլիոզի «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկական սիմֆոնիան մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար: Կատարեցին Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը, Մոսկվայի պետական ֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը և Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների կամերային երգչախումբը: Մենակատարներ՝ Նինա Իսակովա (մեցցո-սոպրանո), Կարլ Զարին (տենոր) և Վալերի Հարությունով (բաս)<sup>15</sup>...

«Որքան գիտեմ, Դուք միշտ երազել եք անպայման ելույթ ունենալ հենց Փարիզում, Ինչո՞ւ եք հատկապես նախապատվությունը տալիս Փարիզին:

-Իրոք, դա այդպես է: Ես երկար եմ ապրել Փարիզում և հոգեպես կապված եմ նրան: Մեր երգչախումբը երևի դեռ աշխարհի շատ քաղաքներում կլինի, բայց Փարիզը նրա ճանաչումն էր, ինքնաբացահայտումը՝ անմոռանալի և անկրկնելի»<sup>16</sup>:

Կապելլայի տարեգրության կարևոր էջն են կազմում հյուրախա-

ղերը Ֆրանսիայում: Կապելլան առաջին անգամ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ Ֆրանսիայում հյուրախաղերով հանդես եկավ 1974 թվականին:

«Ամեն տարվա աշնան առաջին շաբաթ և կիրակի օրերին ֆրանսիական հասարակայնությունն անց է կացնում «Յուամանիտե» թերթի տոնակատարություն, որին մասնակցելու են հրավիրվում ոչ միայն ֆրանսիական արվեստի ճանաչված ներկայացուցիչներ, այլև տարբեր երկրներից հրավիրված արվեստագետներ: 1974-ին Սովետական Միությունից հրավիրվում է երկու կոլեկտիվ, որոնցից մեկը Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբն էր»<sup>17</sup>:

«Յուամանիտե» թերթի 50-ամյակին նվիրված հանդիսություններին մասնակցելու նպատակով Փարիզ հրավիրված Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը սեպտեմբերի 6-ին և 8-ին «Յուամանիտեի» մեծ դաշտահանդեսում կատարում է Բեռլիոզի «Requiem»-ը՝ հունգարական սիմֆոնիկ նվագախմբի, Յուզովի անվան ռուսական և Բուդապեշտի երգչախմբերի մասնակցությամբ: Համերգին ներկա է 100 հազար մարդ:

Այսպես, Ֆրանսիայում Կապելլայի հյուրախաղերն սկսվեցին սեպտեմբերի 6-ին. տասն օրում Կապելլան համերգներով հանդես է գալիս Փարիզում և Մարսելում:

Փարիզի Կոնգրեսների պալատում սեպտեմբերի 7-ին Բուդապեշտի սիմֆոնիկ նվագախմբի հետ հայկական Կապելլան Մաեստրոյի ղեկավարությամբ կատարում է Բեթհովենի Իներորդ սիմֆոնիան: Ունկնդիրը պահանջում է շարունակել համերգը: Մաեստրոյի հրահանգով նվագախումբը նստում է: Կոմիտաս. «Գութաներգ»: Փարիզում վերստին հնչում է հայ երգը: Հանդիսականները հոտնկայս ծափահա-

<sup>14</sup> Ասատրյան Աննա, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, էջ 78:

<sup>15</sup> Տե՛ս համերգի հայտագիրը. Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

<sup>16</sup> Աթանեսյան Ստանիսլավ, Մաեստրոն, «Գարուն», 3, 1976, էջ 24:

<sup>17</sup> Տե՛ս Դավթյան Սուսաննա, Տոն, որ միշտ քեզ հետ է, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի՝ Փարիզում տված համերգների առթիվ, «Սովետական Հայաստան», 10 հոկտեմբերի, 1974:

րում են: Իսկ հաջորդ օրը մամուլը գրում է. «Հայաստանի երգչախումբը արդի դարաշրջանի ամենանշանակալից երկույթներից է» («Tierse soir»):

«Անտարակույս, մենք գործ ունենք դարաշրջանի երաժշտական մեծագույն ֆենոմենի հետ» («Le soir»):

«Արտաբերված ծայները հմայում են նրբությամբ և ճաշակով: Հնչյունները մերթ գալարվում են, մերթ թռչում, վանկերը տեղ-տեղ չափազանց խիտ են ու զուսպ, հետո նորից հոսում են մի այնպիսի էլաստիկությամբ ու ճկունությամբ, որի մասին մենք Եվրոպայում պատկերացում չունենք» («Figaro»):

Հուզված է սփյուռքահայ մամուլը. «Սրահեն հեռացանք հպարտ ազգովին, հրճված խմբովին՝ խոր հուզականությամբ և միշտ երախտապարտ Մայր հայրենիքին» («Մարմարա»):

Սեպտեմբերի 13-ին Pleyel համերգասրահում Փարիզում հավատարմագրված դեսպանությունների աշխատակիցներն էին, հոգևոր առաջնորդներ, արվեստագետներ, երաժիշտներ, նաև հայ ունկնդիրը: Կոմիտաս՝ «Կալի երգը», «Երկրագործի երգը»: Զուսպ ֆրանսիական մամուլը համերգի մասին պատմեց մանրամասն՝ երգչախմբի բեմելի «անհունորեն վայելչագեղ» քայլերից, ծայնային խմբերի դասդասումից, որը «Paris Match»-ը համեմատեց մարշալ Ժուկովի՝ զորաբանակներ վարելու արվեստի հետ, մինչև որոտընդոստ, չդադարող ծափողջույնները: Փարիզյան թերթերը շտապում են ազդարարել երաժշտական հայտնությունը:

«Հովհաննես Չեքիջյանը կայծակի պես փայլատակող մարդ է, նրա պողթկուն ժեստերին անվերապահորեն հետևում է Խորհրդային Հայաստանի պետական երգչախումբը: Եվ դա դրսևորվեց ծայրահեղ սակավադեպ հնչող այնպիսի ստեղծագործության կատարման ընթացքում, ինչպիսին է Ռոսինիի «Stabat mater»-ը: Շլացուցիչ տպավորություն

ություն թողեցին a cappella երգերը, որտեղ կատարման էսթետիկան, բարձր տեխնիկան իսկական հայտնություն էին մեզ համար:

... «Stabat mater»-ի կատարման ընթացքում մեզ ներկայացան գանձերն այն ավանդույթների, որոնք ձեռք են բերվում պրոֆեսիոնալ կարգապահության և կոլեկտիվ քրտնաջան աշխատանքի շնորհիվ» («Figaro»):

«Չեքիջյանը հմայեց մեզ: Բեմում նրա հայտնվելը, երաժշտական ներդաշնակությամբ ներթափանցված շարժումները, որ նման չեն որևէ դիրիժորի, և նույնիսկ օդում անշարժացող ձեռքերը հենց ինքը՝ կյանքն է» («Le soir»):

Հ.Չեքիջյանին անվանում են «խմբերգային փայտիկի հրաշագործ», «երաժշտության մոգ», «թռչող մարդ, որ անձից արտաբերվող սուսկալի ուժով պայքարում է ութսուն ոտխներու դեմ»:

Սփյուռքահայ մամուլը նկատեց. «Համերգներու հանդիսավայրերը լեցուն էին ծովածավալ բազմությամբ: Եկել էին անգամ Բեյրութից: Երգչախմբի անունն ու առաջին ելույթները մագնիսացրած էր մարդոց, մանավանդ՝ երիտասարդներուն, որոնք բազմաթիվ էին հանդիսականներուն մեջ, ինչ որ բացառիկ է: Իսկ դեսպաններու, հոգևոր պետերու և այլ բնագավառներեն ներկա անձնավորությանց շքախումբը ցույց կուտար, թե համերգները ինչ աստիճանի հետաքրքիր և որակով բարձր էին»:

Փարիզը նվաճած Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբն ուղևորվում է Մարսել. սեպտեմբերի 15-ին և 16-ին նրա ելույթներով բացվում է 1974-1975թթ. թատերաշրջանը: Հնչում է Բեթհովենի «Ֆանտազիան», ապա՝ Կոմիտասի «Գուփաներգը»: «Le soir»-ը խոստովանում է, որ «16 սեպտեմբերի սույն երգահանդեսը Մարսելի երաժշտական տարեգրության մեջ կմնա միշտ»: Մարսելյան համերգներից հետո «Figaro»-ն գրեց. «Ամենից շլացուցիչը, սակայն, հայ եր-

գիչների կատարած խմբերգային բաժինն էր, ուր ի հայտ են գալիս նրանց ապշեցուցիչ արվեստը և երգային տեխնիկան»:

1986-ին Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը տասներկու տարվա ընդմիջումից հետո վերստին այցելում է Ֆրանսիա. կրկին նրան ծափահարում են Փարիզն ու Մարսելը<sup>18</sup>: Մարսելի օպերային թատրոնի լեյվ-լեցուն դահլիճում սեպտեմբերի 26-ի համերգի ընթացքում կատարվում են Վիվալդիի «Gloria»-ն, Բեթհովենի «Ֆանտազիան» դաշնամուրի, երգչախմբի և նվագախմբի համար, հատվածներ Վերդիի «Նաբուկո» և Տիգրանյանի «Անուշ» օպերաներից: Համերգին մասնակցում է Հասմիկ Պապյանը: Երգչախմբի հետ ելույթ է ունենում Կաննից հրավիրված նվագախումբը<sup>19</sup>: Սեպտեմբերի 28-ին Կապելլան ներկայանում է խմբերգային ծրագրով՝ Կոմիտաս, Եկմալյան, Տիգրանյան, Հարությունյան, Կանաչյան, Չեքիջյան, Նովիկով, Վերդի, Ռոսինի, Մասկանի, Գունո, Գերշվին:

«Le provençal» թերթի 1986-ի սեպտեմբերի 29-ի համարում Ժան Աբելը գրում է. «Հայաստանի ակադեմիական երգչախմբի մարսելյան հյուրախաղերն անցան բուռն հիացմունքի և խոր համակրանքի մթնոլորտում: Դա անմոռանալի համերգ էր:

Մենք կարող ենք վստահաբար փաստել, որ այս կապելլան պատկանում է աշխարհի լավագույն խառը երգչախմբերի թվին: Եվ ես դա համարձակորեն կարող եմ պնդել: ... Կապելլայի արտիստներն իրենց անկեղծությամբ մեզ վրա թողնում են անջնջելի տպավորություն, քանի որ նրանք երգում են իրենց հայրենիքի ոգին: Նրանք ներկայացնում են ժողովրդական երգերի՝ հանճարեղ Կոմիտասի մշակումները, էջեր Եկմալյանի, Կանաչյանի, Չեքիջյանի և Հարությունյանի ստեղծագործությունից»:

<sup>18</sup> Տե՛ս Այվազյան Հ., Հյուրախաղերն ավարտվեցին, հյուրախաղերն սկսվեցին, «Սովետական Հայաստան», 24 հոկտեմբերի, 1986:

<sup>19</sup> Տե՛ս Երգի թևերով, «Հայրենիքի ձայն», 19 նոյեմբերի, 1986:

Փարիզյան համերգները տեղի են ունենում սեպտեմբերի 29-ին և 30-ին՝ հանրահայտ սուպրանո Լյուբով Կազարնովսկայայի մասնակցությամբ: Սեպտեմբերի 29-ի համերգի առաջին մասի ծրագրում ընդգրկված էին Կոմիտասի, Եկմալյանի, Կանաչյանի, Բաբաջանյանի, Չեքիջյանի, իսկ երկրորդ բաժնում՝ Չուխաճյանի, Նովիկովի, Մասկանիի, Վերդիի, Գունոյի և Ռոսինիի ստեղծագործությունները: Մենակատարներն էին Ալբերտ Խաչատրյանն ու Գեղամ Գրիգորյանը: Սեպտեմբերի 30-ի համերգի առաջին բաժնում հնչեցին Կոմիտասի, Եկմալյանի, Կարա-Մուրզայի, Ա.Տիգրանյանի գործերը, Էդգար Հովհաննիսյանի Էրեբունի-Երևանը, իսկ երկրորդ բաժնում՝ Չեքիջյանի, Հարությունյանի, Կոմիտասի, Ֆորեի, Վիվալդիի, Վերդիի, Ռոսինիի և Հենդելի ստեղծագործությունները:

«Հովհաննես Չեքիջյանը Փարիզին ներկայացրեց ծրագիր, գրում է Գի Սիլվան «Յումանիտե» թերթի հոկտեմբերի 3-ի համարում, որտեղ ներդաշնակ զուգակցվել էին ավանդական և դասական երկացանկի ստեղծագործությունները:

Կատարելություն. ահավասիկ այն բառը, որը հնչում էր որպես լայթնոտիվ: Մեզ մնում է հավելել՝ հնչողության զուգալություն և պարզություն: Եվ էլի՝ անսամբլային վոկալի բացառիկ վարպետություն:

Մաղթենք, որ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը հնարավորինս հաճախ ելույթ ունենա Ֆրանսիայում: Սա, անտարակույս, մեր օրերում հանդիպող երգչախմբային լավագույն անսամբլներից է»:

«Յումանիտեն» գրեց. «Կատարման բացառիկ մաքրություն: Անկասկած, այս կոլեկտիվն աշխարհի լավագույն երգչախմբերից է: Եվ պատահական չէ, որ փարիզեցիներն այդպես ոգևորված ծափահարում էին նրան»<sup>20</sup>:

<sup>20</sup> На крыльях песни, «Коммунист», 15 ноября, 1986.

Կապելլայի հաջորդ այցելությունը Ֆրանսիա 1995-ին էր: Տարվա ընթացքում Կապելլան երեք անգամ այցելում է Ֆրանսիա:

Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունման 1700-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում 2001-ի փետրվարի 13-ին “Notre Dame de Paris” տաճարի կամարների ներքո Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը հանդես է գալիս միջազգային ծրագրով. շուրջ 9000 հանդիսականների ներկայությամբ հայ խմբերգային երաժշտության նմուշների կողքին հնչում են Բախի, Հենդելի, Ռոսինիի, Ֆորեի, Բեռլիոզի և այլոց ստեղծագործությունները<sup>21</sup>:

«9 հազար փարիզեցիներ, որոնք երեքշաբթի երեկոյան հավաքվել էին Փարիզի Աստվածամոր տաճարում, տևական ծափողջույններով, հոտնկայս ողջունեցին Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի ելույթը: Երգչախմբի ղեկավար, ԽՍՀՄ և Հայաստանի ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր Հովհաննես Չեքիջյանին շնորհավորեցին համերգին ներկա նախագահներ Ռոբերտ Քոչարյանն ու Ժակ Շիրակը: Մեկուկես ժամանոց այս համերգը հիրավի տպավորիչ էր: Կոմիտասի, Եկմալյանի, Բախի, Վերդիի, Ֆորեի, Բեռլիոզի կախարդիչ երաժշտությունն էլ ավելի հզոր ու ազդեցիկ էր հնչում չեքիջյանական երգչախմբի վարպետության և տաճարի վեհաշուք կամարների շնորհիվ»<sup>22</sup>:

Մեզ մնում է վերստին շնորհավորել մեր սիրելի Մաեստրոյին ծննդյան հոբելյանի կապակցությամբ և մաղթել նորանոր ելույթներ իր այդքան սիրելի Փարիզում:

<sup>21</sup> Տե՛ս Պետական ակադեմիական երգչախումբը հանդես կգա Փարիզի Աստվածամոր տաճարում, «Ազգ», 31 հունվարի 2001: Հայ երաժիշտներից առաջինը Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը ելույթ է ունենալու Փարիզի Աստվածամոր տաճարում, «Ազգ», 8 փետրվարի, 2001:

<sup>22</sup> **Լիլոյան Տիգրան**, Բացառիկ համերգ Փարիզի Աստվածամոր տաճարում, «Ազգ», 15 փետրվարի, 2001:

**ԷՄՄԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ**  
 ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ՝ ԿՈՄԻՏԱՍԻ  
 ԽՄԲԵՐԳԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆ**

*«Կոմիտասին մարտելու համար կյանքս չի հերի-  
 քի: Որոշ մարդիկ կարծում են, որ Կոմիտասին կա-  
 րելի է մշակել: Միայն ծիծաղել կարելի է: Կոմիտասը  
 իմ մեծագույն սերն է»:*

Հովհաննես ՉեքիՋյան

1910 թվականի նոյեմբերի 21-ին Կ.Պոլսի Պոսի Շանի ձմեռային թատրոնում տեղի ունեցավ Կոմիտասի ստեղծած «Գուսան» երգչախմբի համերգը: Երգչախմբում երգում էր Հ.ՉեքիՋյանի հայրը՝ Հարություն ՉեքիՋյանը: ՉեքիՋյանների տան պատին փակցված էր Կոմիտասի երգչախմբի նկարը. հաճախ նրանց հարկի տակ էին հավաքվում Կոմիտասի երգչախմբի մյուս անդամները ևս: Խոսակցության թեման Կոմիտաս վարդապետն էր, հետո երգում էին բազմաձայն, ինչպես սովորեցրել էր իրենց Ուսուցիչը: Փոքրիկ Հովհաննեսն էլ զգուշությամբ սողում էր սեղանի տակ, որի վրա երկար ծոպերով սփռոց էր գցված, և որտեղ, իրեն ապահով ու պաշտպանված զգալով, ժամեր շարունակ լսում էր հայկական երգերի այդ «ընտանեկան կատարումները»: «Պիտի ասեմ,- հետագայում կխոստովանի Մաեստրոն,- որ այդ երգերը աշխարհի առաջին ձայներն էին, որ արթնացրին իմ լսողությունը, որը դեռ երկար քնած մնաց խոսքի հանդեպ: Նաև պիտի ասեմ այսօրվա ծնողներին ի լուր, որ Ստամբուլի հայկական մեր տան պատերի ներսում այդպես անլռելի ապրում էր հայկական երգը, Կոմիտասը՝ մանկության օրերս թաթախելով իր հոգու լույսերի մեջ: Այո՛,

այն, ինչ ընդունում և ընկալում ես մանուկ հասակում, երբեք չի ջնջվում հետագա տարիքում: Գուցե դա էր պատճառը, որ հետագայում որտեղ էլ որ հաղորդվեցի երաժշտությանը, կրթական ինչ օջախում էլ սովորեցի, միևնույն է, Կոմիտասը եղավ և մնաց այն հենքը, որի վրա հյուսվեցին հետագա ձայներն ու գույները»: Տարիներ անց այն հարցին, թե «ո՞ր կոմպոզիտորի ստեղծագործություններն էք հաճույքով կատարում», Մաեստրոն անվարան պիտի պատասխանի՝ «Կոմիտասի»<sup>1</sup>:

Այդ ժամանակ ՉեքիՋյանը հինգ տարեկան էր, նրա ականջներում Կոմիտասի երգն էր, տան նվիրական գրույցները հյուսվում էին այդ անվան շուրջ և երգի հետ ներթափանցում փոքրիկի ներաշխարհը: ՉեքիՋյանների ընտանիքը 15 օր հյուրընկալել էր Կոմիտասին և տարիներ շարունակ փայփայում էր այդ հուշերը: «Հիմա էլ որպես սրբազան մասունք մի գուրգուրոտ սիրով պահում եմ իմ հոգում և ինձ համար դժվարին պահերի կրկին արծարծում եմ հուշի այդ պայծառ պատահիկները:

-Սակավապետ մարդ էր,- պատմում էր հայրս,- առաջին իսկ գիշերը խնդրեց անկողին գցել կոշտ թախտի վրա, վրան գցում էր սավան, և այդ տարվա խստաշունչ ձմռանը (դրսում հունվարն էր) քնում էր լուսամուտի բաց փեղկերի տակ, առավոտյան սավանի վրայից թափ էր տալիս ձյան փաթիլները: Շատ էինք խնդրում, աղաչում, որ երգի, չէր երգում: Միայն վերջին երեկոյան, անսալով ընտանիքի թախանձանքին, համաձայնեց. կիտրոն խնդրեց, քամելով հյութը բաժակի մեջ և խմելով այն՝ երգեց: Կարծես իր ձայնը սառնիճի միջից լսվե,- սովորաբար այս խոսքով էր ամփոփվում հուշերի շղթան»<sup>2</sup>:

Անցան տարիներ, և ՉեքիՋյանն իր ողջ կյանքում հավատարիմ մնաց իրենց տան մթնոլորտին ու Կոմիտասին:

<sup>1</sup> Ասատրյան Աննա, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես ՉեքիՋյան, Երևան, 2009, էջ 22-23:

<sup>2</sup> Հովհաննիսյան Անժելա, Հովհաննես ՉեքիՋյան, Երևան, 1984, էջ 16-17:

Եվ միանգամայն տրամաբանական է, որ 1961թ. նոյեմբերի 27-ին Հայաստանում տեղի ունեցած Հ. Չեքիջյանի առաջին համերգի ծրագրում Կոմիտասի ստեղծագործություններն էին՝ «Գութանի երգը», «Ինչու Բինգյուլը մտար», «Երկրագործի երգը», «Կալի երգը» և հարսանեկան երգեր՝ «Փեսին արդուզարդը», «Մաղթանք», «Փեսին գովքը», «Կատակերգ», «Շուրջպար»<sup>3</sup>:

Մաեստրոյի գերագույն նպատակներից մեկը Կոմիտասի խմբերգերի կատարման միջոցով հայ երգի տարածումն է, ինչը նա իրականացնում է տարիների ու տասնամյակների ընթացքում աշխարհի տարբեր քաղաքներում: Կոմիտասյան խմբերգերը նրա համերգների անբաժան ուղեկիցն են:

Կրեմլում Ֆորեի «Requiem»-ի կատարումից հետո ունկնդիրը պահանջում է շարունակել համերգը: Առանց խոսքի երգչախումբը Մաեստրոյի հայացքում կարդում է՝ Կոմիտաս. «Գութաներգ»: Վերջին հնչյունները մարում են, և ունկնդիրներին են միանում նվագախմբի երաժիշտները: Բեմն ու հանդիսատեսը հոտնկայս ծափահարում են՝ բացառությամբ նվագախմբի արտիստներից մեկի, որը դեռ շարունակում է մնալ կոմիտասյան երաժշտության ազդեցության տակ:

-Ի՞նչ էր դա,- հարցնում է նա երգչախմբի երգիչներին:

-Կոմիտասի «Գութաներգը»:

-Արժե հայ լինել թեկուզ միայն նրա համար, որ այդ ժողովուրդը Կոմիտաս ունի,- եզրափակում է ԽՍՀՄ մեծ սիմֆոնիկ նվագախմբի արտիստը՝ ինքն էլ ունկնդրի չափ հուզված ու երջանիկ<sup>4</sup>:

Տարիներ անց անդրադառնալով իր լենինգրադյան հյուրախաղերին՝ Մաեստրոն նկատել է. «Լենինգրադն, անշուշտ, մեր պրեմիերաների հայրենիքն է: Այդ իրողությունը պայմանավորված է երկու

<sup>3</sup> Համերգի ծրագիրը, Հ. Չեքիջյանի անձնական արխիվ:  
<sup>4</sup> **Հովհաննիսյան Անժելա**, Հովհաննես Չեքիջյան, էջ 79:

կարևոր գործոններով, նախ՝ այստեղ են գտնվում Եվրոպայի լավագույն սիմֆոնիկ նվագախմբերից մեկը և զարմանալի երաժշտական, բարեկիրթ ու բարեսիրտ ունկնդիրը, որին այնքան հավատում եմ: Այստեղից են կյանքի ուղեգիր ստացել երաժշտական մեծագույն կոթողներ, որոնք այսօր կազմում են երգչախմբի «հիմնական կապիտալը»: Սակայն, եթե կուզեք, ես պակաս չեմ կարևորում և այն հանգամանքը, որ տարիներ շարունակ այստեղ անլուելի հնչել է կոմիտասյան ստեղծագործությունը: Երբ վոկալ-սիմֆոնիկ մեծածավալ կտավի կատարումից հետո սրահն առանձնապես պահանջկոտ է ծափահարում, ես արդեն գիտեմ, որ առանց Կոմիտասի մեզ այստեղից բաց չեն թողնի: Եվ ամենաձանր համերգից հետո էլ ինձ լիովին վարձատրված եմ զգում, երբ հնչում է ռիթմիկ վանկարկումը. «Կա-մի-տաս, Կա-մի-տաս»<sup>5</sup>:

1969-ին նշվում է Կոմիտասի ծննդյան հարյուրամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ Հ.Չեքիջյանը պատրաստում է կոմիտասյան 38 ստեղծագործություններ, որոնց մի մասն իրենց կենսագրությունն սկսեցին այդ տարվանից՝ դառնալով երգչախմբի երկացանկի լավագույն համարները: Կոմիտասյան մեկամյա փառատոնը պսակվեց Մեծ թատրոնում հանդիսավոր նիստով, որի համերգին երգչախումբը կատարեց հոռովելները, քնարական, ծիսական երգերը: Մաեստրոն ի կատար ածեց շատ-շատերի, նաև իր փափագը. կոմիտասյան երգը հնչեց Մեծ թատրոնի բեմից<sup>6</sup>:

1970-ի հունիսի 15-ին «Պրավդան» հրապարակում է ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը. Կոմիտասի «Գութաներգը», «Կալի երգը», «Հարսանյաց երգերը», Մ. Եկմալյանի «Պլպուլն Ավարայրի», «Մեր հողն հնավանդ» և այլ խմբերգեր պարունակող «Հայաստանի երգերը» ծայ-

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 45:  
<sup>6</sup> Տե՛ս **Ասատրյան Աննա**, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 57:

նասկավառակն արժանացել է Ֆրանսիական Charles Gros ակադեմիայի «Գրան պրի» մրցանակին:

Կոմիտասյան խմբերգերը Մաեստրոյի կատարմամբ հնչել են աշխարհի տարբեր ծայրերում: 1974-ին տեղի ունեցան Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ Կապելլայի առաջին հյուրախաղերը Ֆրանսիայում: Ֆրանսիայում տրվելիք համերգների առթիվ բանակցություններն ընթացան շուրջ մեկ տարի: Փարիզն առաջարկում էր կատարել Բեռլիոզի «Requiem»-ը, Բեթհովենի Իններորդ սիմֆոնիան և Ռոսինիի «Stabat mater»-ը: Հ. Չեքիջյանն էլ համառում էր, թե առանց Կոմիտասի Փարիզ չի մտնի: Երկխոսությունը սրվեց, երբ Մաեստրոն առհասարակ հրաժարվեց համերգներից: Իմպրեսարիոն ստիպված էր տեղի տալ, և ձեռք բերվեց համաձայնություն. կլինի նաև խմբերգային համերգ:

1981-ի փետրվարի 28-ին Հայհամերգի մեծ դահլիճում Կոմիտասի երգաշարի պրեմիերան է. ընտրված գործերը՝ «Լուսնակը սարի տակին», «Անձրևն էկավ», «Եղնիկ», «Վարդ ա յարս», «Տուն արի», «Առնեմ էրթամ իմ յարը», «Արևը կայնե կեսօր», կատարվում են առաջին անգամ: Հավարտ առաջին բաժնի հնչում են «Գութաներգը», «Կալի երգը», «Երկրագործի երգը»:

Կոմիտասի հանճարի հանդեպ իր հարգանքի ամենամեծ տուրքը մատուցեց Մաեստրոն՝ սրանից ուղիղ հինգ տարի առաջ՝ 2009-ին ձայնագրելով կոմիտասյան Պատարագը:

«Մաեստրոն տասնամյակներ շարունակ ծառայում է կոմիտասյան խմբերգերի տարածմանն ու քարոզմանը, և, ահավասիկ, կոմիտասյան աշխարհիկ խմբերգերի բարձրարժեք կատարումների կողքին սերունդներին է թողնում նաև Կոմիտասի հոգևոր խմբերգային գլուխգործոցի՝ «Պատարագի» կատարումը: Ողջ կյանքում ծառայելով կոմիտասյան երաժշտության տարածմանը, աշխարհի տարբեր բեմահարթակներից հանդես գալով կոմիտասյան խմբերգերի անգուգական կատարումներով, նրա հոգևոր կարևորագույն ու մեծաձավալ

ստեղծագործության՝ «Պատարագի» ձայնագրությամբ Մաեստրոն ամբողջացնում է կոմիտասյան աշխարհիկ և հոգևոր խմբերգերի չեքիջյանական մեկնաբանությունների գանձարանը»<sup>7</sup>:

<sup>7</sup> Տե՛ս **Ասատրյան Աննա**, Կոմիտասի Պատարագի ձայնագրությունը ներկայացված է պետական մրցանակի, Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

## ՍՈՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի հնստիպոս

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԴԵՔՈՒՏԸ

*«Հիշում եմ, Պոլսում և Իզմիրում կազմակերպվել էր միջազգային փոնավաճառ, որին մասնակցում էր և Սովետական Միությունը: ՍՍՀՄ-ի փառավարում իր բաժինն ուներ նաև Հայաստանը. ցուցադրվում էին հայկական կոնֆերներ: Դրանցից երկուսը առա ափիս մեջ... և հիմա էլ, ահա այս պահին զգում եմ դրանց հպումը ինձ: Դրանք այստեղ՝ Երևանում, միայն կոնֆերներ են, որոնք կարող ենք չհավանել, կամ անտարբեր անցնել կողքով, սակայն Պոլսում Հայաստանի ցուցանակի փակ ներկայացվող այդ նույն կոնֆերները մի մոգական զորություն էին սփռել. ասես երկրից եկած կոունկներ լինեին, հեռվից եկած ձեռքեր, որ սեղմելու, իրենց զգալու անդիմադրելի պահանջ են հարուցում»:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ<sup>1</sup>

1928 թվականի դեկտեմբերի 23-ին Ստամբուլում՝ Կոմիտասի երգչախմբում երգած Հարությունի ընտանիքում ծնվեց կլանետահար Հովհաննեսի թոռը՝ Հովհաննես Հարությունի Չեքիջյանը:

Հ.Չեքիջյանի ծննդից 9 տարի անց՝ 1937-ի ապրիլին, Երևանում հիմնադրվեց հայ երաժշտական իրականության մեջ առաջին պրոֆեսիոնալ երգչախումբը՝ 25-30 երգիչներից բաղկացած Հայաստանի պետական երգչախումբը<sup>2</sup>:

Ստամբուլում Հ.Չեքիջյանը ստանում է երաժշտական բարձրագույն կրթություն. 1951-ին ավարտում է Ստամբուլի կոնսերվատորիայի դիրիժորական բաժինը, 1961-ին՝ ասպիրանտուրան: 1951-1953 թվա-

կաններին նա սովորում է Փարիզի “Ecole normale de Musique” կոնսերվատորիայում՝ աշակերտելով Ժան Ֆուրնեին: Դիրիժորի մասնագիտությունն ընտրած երիտասարդը 1958-ին աշխատանքի է անցնում Ստամբուլի օպերային թատրոնում՝ որպես երաժշտական ղեկավար, իսկ 1960-ին նշանակվում Ստամբուլի պետական կապելլայի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր: Ստամբուլում նա 1955-ին կազմակերպում և ղեկավարում է «Չեքիջյան» երգչախումբը: Այսպիսով, Ստամբուլում կային տաղանդավոր երիտասարդի ստեղծագործական առաջընթացի համար բոլոր պայմանները: Բայց Մատեստոյի հաստատ համոզմամբ. «Արվեստը հպարտ է և չի կարող ապրել տնվորի իրավունքով: Արվեստը պետք է ապրի տանտիրոջ պես, լինի իր օջախի, ծխի տերը, արմատներով իջնի հողի մեջ, սաղարթով ապրի երկնքում: Անհայրենիք արվեստ չկա և չի կարող լինել»<sup>3</sup>:

Իսկ այդ նույն ժամանակահատվածում Հայաստանի պետական երգչախումբը ղեկավարում են Թաթուլ Ալթունյանը, Լ.Տումաշևը, Էմմա Ծատուրյանը, Ջեյմս Գյոզալյանը, Ավետ Աբգարյանը, Արամ Տեր-Հովհաննիսյանը և Նուբար Մնգրյանը: Թ.Ալթունյանի ղեկավարությամբ երգչախումբը 1939-ին հաջողությամբ մասնակցում է Մոսկվայում կայացած հայ արվեստի և գրականության տասնօրյակին, հյուրախաղերով հանդես գալիս Լենինգրադում և Բաքվում: Երգչախումբը կարևոր արդյունքներ է արձանագրում Արամ Տեր-Հովհաննիսյանի ղեկավարության տարիներին:

Եվ ահա 1961-ին տեղի է ունենում Ստամբուլից Երևան տեղափոխված Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի պետական երգչախմբի հանդիպումը, որը բախտորոշ է դառնում ինչպես երիտասարդ դիրիժորի, այնպես էլ երգչախմբի համար: Յոթ տարում յոթ խմբավարի հետ աշխատած երգչախումբն այդ օրվանից ահա 53 տարի

<sup>1</sup> Հովհաննիսյան Անժելա, Հովհաննես Չեքիջյան, Երևան, 1984, էջ 160-161:

<sup>2</sup> Տե՛ս Ասատրյան Աննա, Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ, Երևան, 2007:

<sup>3</sup> Ասատրյան Աննա, Ամենայն հայոց մատեստոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 28:



քայլում է իր միակ ու անկրկնելի գեղարվեստական ղեկավարի ու գլխավոր դիրիժորի ղեկավարությամբ, դառնում վաստակավոր կոլեկտիվ, արժանանում Ակադեմիական բարձր կոչմանը (նկատենք, որ Հայաստանում երաժշտական կոլեկտիվներից այդ կոչմանն արժանացել են միայն Հայաստանի պետական երգչախումբն ու Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը), իսկ բոլորովին վերջերս՝ Ազգային կոչմանը: Ինչ խոսք, երաժշտական կատարողական արվեստի պատմության մեջ սա եզակի դեպք է, երբ երաժշտական կոլեկտիվն ու ղեկավարը միասին են գրում իրենց ստեղծագործական կենսագրությունը՝ ավելի քան կես դար շարունակ: Եվ կարծում ենք, որ վաղուց արդեն ժամանակն է Կապելլան անվանակոչել Հովհաննես Չեքիջյանի անունով:

Հայրենիքը գրկաբաց ընդունեց իր հարազատ զավակին՝ պայմաններ ստեղծելով նրա հետագա բեղմնավոր գործունեության համար: Ընդամենը մեկ տարի անց, պատասխանելով Արմեն Դարյանի «Ի՞նչ բանը Ձեզ մղեց Հայաստան գալու, այդքան բարձր պաշտոններ լքելու գնով» հարցին Մանեստրոն կպատասխանի. «Պտտած էի Երոպայի գլխաւոր քաղաքները եւ նկատած էի, թէ աշխարհի ո՛ր մէկ ալ անկիւնն ալ երթալու ըլլամ, կը մնամ հայ՝ ես ինձի համար, եւ օտարական՝ ուրիշներուն համար: Կ՛ուզէի ծառայել իմ ժողովուրդիս: Ուրիշ ու՛ր կրնայի աւելի լաւ ծառայել իմ ժողովուրդիս, եթէ ոչ մեր լուսագեղ հայրենիքին մէջ: Եւ որոշեցի գալ հոս, եւ աշխատիլ այստեղ, իմ բաժինս բերելով ընդհանուրի աշխատանքին»<sup>4</sup>:

Հ.Չեքիջյանի և երգչախմբի անդրանիկ համերգը նշանակվում է 1961թ. նոյեմբերի 27-ին: Համերգն ընկալվեց որպես Հայաստանի երաժշտական կյանքի կարևոր երևույթ, և համերգին ընդառաջ

<sup>4</sup> Դարեան Արմեն, Հայրենիքին մէջ. Յովհաննէս Չեքիջեանի հետ, Յառաջ-գրական, հուլիս, 1962, էջ 6:

երևանյան մամուլն ազդարարում է երիտասարդ դիրիժորի մոտալուս դեբյուտի մասին:

«Սովետական Հայաստան» օրաթերթը հյուրընկալում է երիտասարդ մանեստրոյին և նոյեմբերի 25-ի համարում զետեղում «Նա իր լուսավոր հայրենիքում է» հոդվածը: «Նա Հայրենիք է եկել վերջերս, եկել է Ստամբուլից: Դժվարություններ է հաղթահարել, բայց եկել է ու անմիջապես անցել սիրած գործին՝ դիրիժոր-խմբավարի աշխատանքին: Որքան է երազել երիտասարդ արվեստագետը գալ Հայաստան և իր շնորհքն ու ընդունակությունները ծառայեցնել հարազատ ժողովրդի կատարողական արվեստին, տալ նրան իր սրտի բոլոր հույզերը, հոգու կայծերը խարույկի վերածել և դրանցով ջերմացնել ունկնդիրներին»<sup>5</sup>:

«Երևան»<sup>6</sup> և «Ավանգարդ»<sup>7</sup> թերթերի նոյեմբերի 25-ի համարներում տպագրվում են Ա.Կակոսյանի «Ծանոթացե՛ք՝ Հովհաննես Չեքիջյան» հոդվածները, իսկ «Коммунист» թերթը սպասվող համերգին է անդրադառնում նոյեմբերի 26-ի համարում<sup>8</sup>:

Հայրենիքում Հ.Չեքիջյանի առաջին համերգի առաջին բաժնում հնչում են Կարա-Մուրզայի «Ալագյազ», «Գացեք, տեսեք» խմբերգերը, Կոմիտասի «Գութանի երգը», «Ինչու Բինգյոլը մտար», «Երկրագործի երգը» (մենակատարներ՝ Աննա Սարաջևա (սոպրանո), Մելինե Միրոքյան (կոնտրալտո), Հովհաննես Յաղջյան (տենոր) և Հովհաննես Քարաջյան (բաս), «Կալի երգը» (մենակատար՝ Էդվարդ Բաղդասարյան) և հարսանեկան երգեր՝ «Փեսին արդուզարդը», «Մաղթանք», «Փեսին գովքը», «Կատակերգ», «Շուրջպար» (մենակատար՝ Հարություն Քարաջյան)<sup>9</sup>:

<sup>5</sup> Նա իր լուսավոր հայրենիքում է, «Սովետական Հայաստան», 25 նոյեմբերի, 1961:

<sup>6</sup> Կակոսյան Ա., Ծանոթացե՛ք Հովհաննես Չեքիջյան, «Երևան», 25 նոյեմբերի, 1961:

<sup>7</sup> Կակոսյան Ա., Ծանոթացե՛ք Հովհաննես Չեքիջյան, «Ավանգարդ», 25 նոյեմբերի 1961:

<sup>8</sup> Познакомьтесь: Ованес Чекиджян, «Коммунист», 26 ноября, 1961.

<sup>9</sup> Համերգի ծրագիրը, Հ. Չեքիջյանի անձնական արխիվ:

Համերգի առաջին բաժինն ավարտվում է Կարո Զաքարյանի քնարական խմբերգերից մեկով, որը հնչում է ծրագրից դուրս<sup>10</sup>:

Համերգի վերաբերյալ երգչախմբի նախկին խմբավար Ջեյմս Գյոզալյանը գրեց. «Բեմահարթակի վրա սպիտակ ու սև գոտիներ է ձգել Հայաստանի պետական երգչախումբը, որի համերգն այսօր վարում է նրա նոր գեղարվեստական ղեկավարը՝ Հովհաննես Չեքիջյանը: Դահլիճում տարածվում են Կոմիտասի և Կարա-Մուրզայի երգերի հոյակապ հնչյունները, հետո թնդում են ծափահարությունները, իսկ ծափերի հետ թունդ է առնում հայրենադարձ երաժշտի սիրտը, նրա հուզումներն այսօր ուրիշ են, անսովոր: Սովետական Հայաստանի մայրաքաղաքի երաժշտական հասարակայնությունը առաջին անգամ իր գոհունակության արտահայտությունն է հղում հայրենադարձ դիրիժոր-խմբավարին»<sup>11</sup>:

Համերգից հետո Հ.Չեքիջյանին շնորհավորում են Գրիգոր Եղիազարյանը, Էդվարդ Միրզոյանը, Գևորգ Էմինը, Օհան Դուրյանը, Պարոյր Սևակը, Վահրամ Փափազյանը, Մարտիրոս Սարյանը, Սիլվա Կապուտիկյանը և այլք: Հաջորդում են մամուլի բազմաթիվ արձագանքները:

«Առաջին իսկ համարներից զգացվում են դիրիժորի նուրբ ճաշակը և կատարողական լուրջ վարպետությունը, մեծ խնամքով և յուրահատուկ մեկնաբանությամբ կատարվում են հայ երգի մեծ վարպետ Կոմիտասի «Գութանի երգը», «Ինչու Բինգյուլը մտար», «Երկրագործի երգը» և այլ գործեր: Խմբավարը կարողացել է երգչախմբի կատարողականության և հնչողության մեջ հասնել ձայների միաձուլության, մաքուր ինտոնացիայի, դրսևորել բազմազան երանգավորում»<sup>12</sup>:

<sup>10</sup> Տե՛ս **Тэрьян М.** Дебют талантливого дирижера, «Коммунист», 30 ноября, 1961.

<sup>11</sup> **Գյոզալյան Ջեյմս**, Չեքիջյանն է խմբավարը, «Սովետական արվեստ», 1961, N 12, էջ 63:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 64:

Կամ՝ «Առաջին համերգն ավարտված է: Դահլիճը իր նոր ծանոթին՝ հայրենադարձ մաեստրոյին, անկեղծ ծափեր, բուրումնավետ ծաղիկներ է նվիրում: Շնորհակալություն. հիացմունքի խորհրդանշաններն են դրանք և միաժամանակ մաղթանքները ապագա հաջողությունների»<sup>13</sup>:

Համերգին անդրադառնում է «Սովետական Հայաստան» օրաթերթը նոյեմբերի 29-ի համարում՝ տպագրելով Յ.Բրուտյանի «Անդրանիկ համերգը մայր հայրենիքում» հոդվածը<sup>14</sup>:

Երևանում առաջին բեմելին Մաեստրոն ներկայանում է ոչ միայն որպես խմբավար, այլև սիմֆոնիկ դիրիժոր. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը նրա ղեկավարությամբ կատարում է Բեթհովենի Յոթերորդ սիմֆոնիան: Նշենք, որ մինչև Հայաստան գալը Հ.Չեքիջյանը սիմֆոնիկ նվագախմբեր է ղեկավարել 1947-ից, այդ թվում՝ Ստամբուլում և Փարիզում, իսկ հայրենիք վերադառնալուց ի վեր՝ Հայաստանի բոլոր սիմֆոնիկ նվագախմբերը, ԽՍՀՄ առաջնակարգ նվագախմբերը՝ ԽՍՀՄ պետական ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը, Սանկտ Պետերբուրգի ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը, միութենական և այլ՝ ընդհանուր առմամբ 67 սիմֆոնիկ նվագախմբեր<sup>15</sup>:

Եվ այսպես, 1961 թվականի նոյեմբերի 27-ին հայրենիքի օրհնությանն արժանացավ Հ. Չեքիջյանը, որը մարմնավորում էր դիրիժորին և խմբավարին: Հետագայում վոկալ-սիմֆոնիկ խոշոր կտավի ստեղծագործությունների համերգային կատարումները պիտի դառնային Կապելլայի գործունեության կարևոր բնագավառը: Իսկ առաջին համերգում հնչած երաժշտության հեղինակները՝ Կոմիտասն ու Բեթհով-

<sup>13</sup> **Մաթևոսյան Վ.**, Ծաղիկներ, ծափեր նոր մաեստրոյին, «Երևան», 29 նոյեմբերի, 1961:

<sup>14</sup> **Բրուտյան Յ.**, Անդրանիկ համերգը մայր հայրենիքում, «Սովետական Հայաստան», 29 նոյեմբերի, 1961:

<sup>15</sup> Հովհաննես Չեքիջյանի անձնական արխիվ:

վենը, այլևս երբեք չպիտի իջնեին Հայաստանի պետական երգչախմբի հայտագրերից<sup>16</sup>: Հընթացս հայրենիքում անդրանիկ համերգի Մատենադարան մատուցում է իր առաջին անակնկալը. Խորհրդային Միության մեջ առաջին անգամ հնչում է Բեդրժիխ Սմետանայի «Չեխական երգ» Կանտատը, հնչում չեխերեն՝ սկիզբ դնելով ստեղծագործությունները միայն բնագրով կատարելու ավանդույթին. այսօր Կապելլան երգում է աշխարհի 27 լեզուներով<sup>17</sup>:

Համերգից երեք օր անց երևանյան «Կոմունիստ» թերթի նոյեմբերի 30-ի համարում լույս է տեսնում Հայաստանի պետական երգչախմբի և Հ.Չեքիջյանի դեբյուտի մասին գրախոսականը, որտեղ արվեստագիտության թեկնածու Միքայել Տերյանը գրում է. «Ծրագրի առաջին իսկ համարի կատարումից կարելի էր եզրակացնել, որ մեր առջև է տաղանդավոր, բարձր կուլտուրայի տեր, վառ անհատականությամբ, երաժշտական մեծ զգացողությամբ, ֆրագի և նրբերանգների բոլոր առանձնահատկությունները նրբորեն արտահայտող, դիրիժորական ժեստով օժտված նրբաճաշակ խմբավարը: Նրա ինքնատիպ, համոզիչ մեկնաբանման մեջ մենք նորովի, թարմ ընկալեցինք Կարա-Մուրզայի ու Կոմիտասի վաղուց հայտնի և յուրաքանչյուրիս հոգեհարազատ երգերը, որոնցից մի քանիսը մեզանում հնչեցին առաջին անգամ: Դրանց կատարումը կրակոտ էր, նպատակամղված, մեծ հուզականությամբ և քնարական զգացմունքայնությամբ հագեցած: Համերգի երկրորդ բաժնում Հ.Չեքիջյանն իրեն դրսևորեց որպես նվագախմբի հետ աշխատելու, այն իր կամքին ենթարկելու և հրաշալի հնչողություն ստանալու ունակ լավ սիմֆոնիկ դիրիժոր: Համերգն ունեցավ հսկայական հաջողություն, բյուրավոր ունկնդիրները ողջունեցին երիտասարդ տաղանդավոր դիրիժորին»:

<sup>16</sup> Ասատրյան Աննա, Ամենայն հայոց մատենոսրն. Հովհաննես Չեքիջյան, էջ 35:

<sup>17</sup> Նույն տեղում:

**ՍԱՐԳԻՍ ԲԱԼԲԱԲՅԱՆ**

*Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա*

**ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ. ՄԱԵՍՏՐՈ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ**

Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը ստեղծվել է 2005թ. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մի խումբ երաժիշտների նախաձեռնությամբ: Նվագախմբի կազմում ընդգրկված են կոնսերվատորիայի լավագույն ուսանողները և շրջանավարտները: Անցած 9 տարիների ընթացքում Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ նվագախումբը ելույթ է ունեցել տասից ավելի երկրներում (Գերմանիայում, Ֆրանսիայում, Նիդեռլանդներում, Իտալիայում, Լեհաստանում, ՌԴ-ում, Բելառուսում, Վրաստանում, Չինաստանում, ԱՄԷ-ում, Բեյրութում և այլ երկրներում)՝ մշտապես բարձր պահելով նվագախմբային հայ կատարողական արվեստը: Պետք է նշեմ, որ ստեղծման առաջին իսկ օրերից նվագախումբը սերտորեն համագործակցում է Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի և նրա ղեկավարած Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի հետ: Հատկանշական է, որ նորաստեղծ նվագախմբի երրորդ համերգը տեղի ունեցավ երգչախմբի ընկերակցությամբ: Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ նվագախումբը կարողացավ պատվով հաղթահարել այդ տարի նվագախմբին վստահված հայրենանվեր գործը. 2006թ. ապրիլի 24-ին ազգային ակադեմիական երգչախմբի հետ համատեղ հանդես եկավ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ ոգեկոչելով Հայոց ցեղասպանության 91-րդ տարելիցը: Այսօրվա պես հիշում եմ Մաեստրո Չեքիջյանի անխոնջ և բազմաբովանդակ փորձերը երգչախմբի փոր-

ձասենյակում: Նրա անցկացրած փորձերն այնքան արդյունավետ էին, որ Մոցարտի Ռեքվիեմի կատարման բոլոր դժվարությունները նորաստեղծ նվագախմբի համար լիովին հաղթահարելի էին: Ընդամենը մի քանի ամիս գործունեություն ծավալած նվագախումբը փորձերի առաջին իսկ րոպեներից կատարում էր Մաեստրոյի բոլոր նկատառումներն ու խորհուրդները: Այստեղ, ըստ իս, ազդեցություն ուներ ոչ միայն Մաեստրոյի 67 նվագախմբերի հետ աշխատանքային փորձը, այլ նաև որ ամենակարևորն է՝ Մաեստրոյի՝ երիտասարդների հետ համագործակցելու մոտեցումը. արդյունքում փորձերն այնքան հետաքրքիր էին անցնում, որ շատ դժվարությամբ էի հեռանում փորձասենյակից. կարծես անընդհատ ցանկանում էի լսել Մաեստրոյի բազմաբովանդակ խորհուրդները և պատկերավոր համեմատությունները:

Երիտասարդական նվագախմբի և երգչախմբի հաջորդ «հանդիպումը» 2008թ. դեկտեմբերի 6-ին էր. Սպիտակի երկրաշարժին նվիրված համերգաշարով Վլադիմիր Սպիվակովի ղեկավարությամբ Հայաստան էր ժամանել «Մոսկվայի վիրտուոզներ» կամերային նվագախումբը: Վերջիններիս միացել էին նաև երաժիշտներ երիտասարդական նվագախմբից: Երգչախմբի հետ ընդամենը մեկ փորձ պահանջվեց Վլադիմիր Սպիվակովից, և արդյունքում՝ փայլուն համերգ:

Նվագախմբի գործունեության մեջ մշտապես կարևորում ենք մեր մեծերի հոբելյանների նշումը և մշտապես հանդես գալիս հոբելյանական երեկոների կազմակերպմամբ, ակտիվ մասնակցությամբ: 2009 թվականի հունվարի 30-ին Մաեստրո Չեքիջյանի 80-ամյա հոբելյանին նվիրված երեկոյի բացումը վստահված էր երիտասարդական նվագախմբին: Մեծ հաճույքով և բարձր պատասխանատվությամբ երգչախմբի ընկերակցությամբ Հենդելի «Հալլելույա»-յով բացեցինք հանդիսավոր երեկոն:

Ընդհանուր առմամբ, ի տարբերություն նվագախմբերի, մեծակտավ ստեղծագործությունների կատարմամբ հանդես գալու երգչա-

խմբերի հնարավորությունները ողջ աշխարհում սահմանափակ են: Նրանք կարծես սպասում են նվագախմբերից առաջարկների՝ հանդես գալու այս կամ այն մեծակտավ երկերի կատարմամբ, քանի որ հիմնականում նվագախմբերի գեղարվեստական ղեկավարներն են որոշում երգչախմբերի հետ համերգների քանակը և ժամկետները: Այսօրվա միջազգային փառատոները նախ ընտրում են փառատոներին մասնակցող նվագախմբերը, հետո միայն մտածում երգչախմբեր ներգրավելու հնարավորության մասին: Սակայն սա Եվրոպայում: Մեզանում ճիշտ հակառակն է: Մաեստրոյի և երգչախմբի բեղուն գործունեության շնորհիվ հենց երգչախումբն է նախաձեռնում համերգային երեկոներ՝ դրանցում ընդգրկելով նվագախմբերի և մենակատարների ոչ միայն Հայաստանից, այլ նաև արտերկրից: Արդյունքում հերթական տպավորիչ հանդիպումն է երգչախմբի և իր ղեկավարի հետ: 2010թ. մարտի 17-ին Ա. Խաչատրյան համերգասրահում կայացավ համերգային երեկո, որի առաջին բաժնում երգչախումբը ներկայացրեց բազմաժանր a cappella ծրագիր՝ սկսած Կոմիտասից մինչև Սահառունի և Գերշվին: Իսկ երկրորդ բաժնում արդեն Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի ընկերակցությամբ հնչեց Բեթհովենի Ֆանտազիան դաշնամուրի, նվագախմբի և երգչախմբի համար և Շուբերտի «Մարիամի հաղթական երգը» կանտատը (մենակատար՝ Մագդա Մկրտչյան): Ի դեպ, Մաեստրոն Բեթհովենի Ֆանտազիայի դաշնամուրի մենանվագը լիովին վստահեց նվագախմբի երիտասարդ դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Լիլիթ Զաքարյանին: Համերգն անցավ լեփ-լեցուն դահլիճում: Ծափահարությունների տարափի տակ Մաեստրոն «ստիպված էր» հինգ անգամ բեմ դուրս գալ:

Նվագախմբի հանդիպումները Հովհաննես Չեքիջյան դիրիժորի և Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի հետ բազում են՝ 2011թ. նոյեմբերին «100 համերգ մինչև Հայոց Ցեղա-

սպանության 100-ամյակ» ծրագիր, «Վիվա-սելը մշակույթի բարեկամ» համերգ-երեկո և այլն: Ցանկանում եմ առանձնացնել 2013թ. մայիսի 29-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացած համերգը, որը Մեծ Բրիտանիայի և Ուելսի արքայազն Չարլզի՝ Հայաստան ժամանմանն էր նվիրված: Բացի ակապելլա կատարումներից, Երիտասարդական նվագախումբը երգչախմբի հետ կատարեց Հենդելի «Հալլելույա»-ն և Կարլ Օրֆի «Կարմինա բուրանայի» ֆինալը: Ակնհայտ էին արքայազն Չարլզի հրճվանքն ու հիացմունքը, ով համերգից հետո անմիջապես ցանկություն հայտնեց անձամբ հանդիպել Մաեստրո Չեքիջյանին՝ ողջունելու և շնորհավորելու նրան հիանալի ելույթի և այսպիսի կուլեկտիվ ունենալու համար:

Պետք է նշեմ, որ Հովհաննես Չեքիջյանը նվագախմբերի ուշադրությունը մշտապես կենտրոնացնում է Հայաստանում երկար ժամանակ չկատարված ստեղծագործությունների վրա՝ շեշտը դնելով հայ կոմպոզիտորների երկերի կատարմանը:

Վերջին տարիներին Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կազմով մեկնած բազմաթիվ հյուրախաղերի ընթացքում հնարավորություն ունեցա թե՛ որպես նվագախմբի գեղարվեստական մենեջեր և թե՛ որպես երաժիշտ<sup>1</sup> անձամբ համագործակցելու և համերգներով հանդես գալու Ֆրանսիայի, Գերմանիայի, Չեխիայի, Լիբանանի մեծ երգչախմբերի հետ: Մեզ համար այնքան խորթ էին այդ երգչախմբերի երգեցողությունը, տարբեր լեզուներով երգելիս բառերի արտաբերման, ինչպես նաև ինտոնացիոն և միաձույլ հնչողության խնդիրները և որ պակաս կարևոր չէ՝ կարգապահական հարցերը: Անկախ քեզնից սկսում ես համեմատություններ անցկացնել մեր ակադեմիական երգչախմբի հետ: Մաեստրոյի բարձր պրոֆեսիոնալիզմը,

<sup>1</sup> Ինքս կոնտրաբասահար եմ:

անհատական մոտեցման մեթոդները, տարիների փորձը արդեն հիսունից ավելի տարի մեր ազգային երգչախմբի կատարողական որակը պահում է ամենաբարձր մակարդակի վրա: Արդյունքում երգչախումբը ցանկացած ստեղծագործություն կատարում է առանց նոտաների. ի դեպ, ըստ մեր ունեցած տեղեկությունների, այս առումով երգչախումբը միակն է աշխարհում. պետք է նշեմ, որ որպես ունկնդիր մենք սովոր ենք կատարյալ լուրջյան մեջ վայելել Մոցարտի, Վերդիի, Բելլիոզի Ռեքվիեմը՝ չմտածելով անգամ երաժշտական ընթացքը խաթարող նոտաների թերթումից առաջացող աղմուկի մասին, որին ցավոք ականատես եղա վերոնշյալ երկրներում երգչախմբերի համերգների ժամանակ, որն ինձ համար շատ խորթ էր: Հիրավի, ինչպես նշում է Մաեստրոն. «Բեմ բարձրացողը նոտաներն իր սրտում և մտքում պետք է ունենա և ոչ թե ձեռքին»<sup>2</sup>: Սա, իհարկե, խոսում է ոչ միայն բարձր պրոֆեսիոնալիզմի, այլ նաև տարիների հսկայական աշխատանքի մասին:

Որպես նվագախմբի գեղարվեստական մասի պատասխանատու՝ ցանկանում եմ փաստել, որ Մաեստրոյի խիստ հսկողությամբ երգչախմբի գրադարանում պահվում են ոչ միայն երգչախմբային պարտիտուրներն ու ձայնաբաժինները, այլ նաև նվագախմբի նվագաբաժինները, որը նույնպես խոսում է բարձր պրոֆեսիոնալ արժեքների, պահանջկոտության և խիստ կարգապահության մասին: Արդյունքում մենք շատ հաճախ օգտվում ենք այս գրադարանից, որտեղ խնամքով պահվում են հայ կոմպոզիտորների նոտաների եզակի նմուշներ:

Երիտասարդական նվագախմբի, Մաեստրոյի և երգչախմբի համագործակցության գագաթնակետը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնի պատրաստումն ու կատարումն էր ակադեմիայի

<sup>2</sup> **Աստորյան Աննա**, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 38:

հիմնադրման 70-ամյակին նվիրված համերգային երեկոյի ընթացքում: Հիմնի խոսքերի հեղինակը Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանն է, իսկ երաժշտությունը գրեց կոմպոզիտոր Արամ Սաթյանը: Հիմնի պատրաստումը և ներկայացումը գրեթե անհնար էին թվում, քանի որ ընդամենը յոթ օրվա ընթացքում պարոն Սաթյանը պետք է հասցներ գործիքավորել (պատրաստեր պարտիտուրը), ապա տողերիս հեղինակն ապահովեր դրա համակարգչային շարվածքը, պարտիտուրի և նվագաբաժինների պատրաստումը, դրանք փոխանցեր նվագախմբի կատարմանը: Մաեստրոն մի քանի փորձում արդեն պատրաստել էր երգչախումբը և սպասում էր պարտիտուրին: Պարտիտուրն ու նվագաբաժինները պատրաստ եղան համերգից ընդամենը երկու օր առաջ: Հենց այդ երկու օրվա կարճ փորձերի ընթացքում Մաեստրոն կարողացավ միանգամից համախմբել բոլորին՝ իրականություն դարձնելով ՀՀ ԳԱԱ հիմնի պրեմիերան, որն աննկարագրելի հմայք հաղորդեց տոնական համերգ-երեկոյին: Այդ օրը բոլորս հուզված էինք և հպարտ. չէ՞ որ մեր՝ երիտասարդներիս ու մեծն Մաեստրոյի համատեղ աշխատանքի արդյունքում ծնունդ է առնում մի ստեղծագործություն, որը մնայուն արժեք է:

Հիրավի, այսօր հպարտ ենք, որ հնարավորություն ունենք լսելու կատարողական հմտությունների մասին Մաեստրոյի խիստ արժեքավոր խորհուրդները, ինչպես նաև համագործակցելու այնպիսի մարդկային տեսակի հետ, որի հետ շփվելիս երբեք չես զգում քո և մեծն Մաեստրոյի միջև սերունդների տարբերությունը:

Սերգեյ Սմբատյանի և նվագախմբի անունից Մաեստրոյին ցանկանում ենք անխոնջ եռանդ, քաջառողջություն և նորանոր հետաքրքիր համերգային ծրագրերով լեցուն համերգաշարեր, որոնք անկասկած կզարդարեն մեր երաժշտական կյանքը և անգնահատելի հետք կթողնեն հայ երաժշտարվեստի պատմության մեջ: Յուրաքանչ-

յուր անգամ ներկա գտնվելով մեր ազգային երգչախմբի համերգներին՝ առաջին հերթին մեծ հպարտությամբ եմ լցվում, որ ունենք այսպիսի ազգային հարստություն, որը միանշանակ եզակի է ոչ միայն իր կուռ հնչողությամբ և բազմաթիվ գուներանգներով, այլ նաև ապշեցնող կարգապահությամբ և միաժամանակ նուրբ մեղեդայնությամբ:

Առաջիկայում Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը Մաեստրոյի և երգչախմբի հետ նվագախմբի կողմից կազմակերպվող Արամ Խաչատրյանի անվան միջազգային երկրորդ փառատոնի փակման գալա համերգի ժամանակ պատրաստվում է հնչեցնել Արամ Խաչատրյանի «Ձոն ցնծության» ստեղծագործությունը՝ մեցցո-սոպրանոյի, տավիղների անսամբլի, ջութակահարների անսամբլի, նվագախմբի և երգչախմբի համար: 2015թ. ապրիլին մեկ այլ համագործակցություն է սպասվում. հայ հանդիսատեսն առաջին անգամ հնարավորություն կունենա ունկնդրելու Դմիտրի Շոստակովիչի 13-րդ սիմֆոնիան՝ “Бабий яр”-ը, որը ակադեմիական երգչախմբի բասային խմբի և երիտասարդական նվագախմբի համատեղ ջանքերով Հայաստանում կկատարվի առաջին անգամ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մերի Կիրակոսյան Գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին .....	5
Աննա Ասատրյան Հովհաննես Չեքիջյան. խմբերգային արվեստի մարշալը .....	26
Աննա Ադամյան Հովհաննես Չեքիջյանը և Հայաստանի Հանրապետության գիտու- թյունների ազգային ակադեմիան .....	40
Маргарита Рухян Оганес Чекиджян как торжество классической хоровой традиции ...	49
Լիլիթ Երնջակյան Հովհաննես Չեքիջյանը և Սփյուռքի երաժշտարվեստը .....	56
Յուրի Յուզբաշյան Խմբերգային կատարողական արվեստի չեքիջյանական մեկնաբա- նությունների մասին .....	64
Нелли Аветисян Эстетические взгляды Оганеса Чекиджяна .....	70
Մարգարիտա Քամալյան Հովհաննես Չեքիջյանը և հայ կերպարվեստագետները .....	83
Հովհաննես Մանուկյան Հովհաննես Չեքիջյանը՝ կոմպոզիտոր .....	90
Նաիրա Մադոյան Հովհաննես Չեքիջյանը և Արամ Խաչատրյանը .....	96

Լիլիթ Արտեմյան Հովհաննես Չեքիջյանը և Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպե- րայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը .....	105
Սերգեյ Առաքելյան Հովհաննես Չեքիջյանը մեծերի գնահատմամբ .....	112
Դավիթ Ղազարյան Հովհաննես Չեքիջյան. մեր ազգային հարստությունը .....	115
Արուսյակ Պետրոսյան Վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունները Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ .....	124
Վալենտին Թովմասյան Դիրիժոր չեն դառնում, ծնվում են .....	133
Աննա Հարությունյան Հովհաննես Չեքիջյանը և Ֆրանսիան .....	144
Էմմա Առաքելյան Հովհաննես Չեքիջյանը՝ Կոմիտասի խմբերգերի մեկնաբան .....	157
Սոնա Մակարյան Հովհաննես Չեքիջյանի երևանյան դերյուտը .....	163
Սարգիս Բայրաբյան Սերունդների խաչմերուկում. Մաեստրո Հովհաննես Չեքիջյանը և Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը .....	170



**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ – 85**

**Գիտական նստաշրջան՝  
նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին  
(26-27 սեպտեմբերի, 2014)  
Նստաշրջանի նյութեր**

Խմբագիր՝ Ա. Սահակյան  
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Ստորագրված է տպագրության՝ 2014թ.

Չափսը՝ 60 x 84 <sup>1</sup>/<sub>16</sub>, թուղթ N 1

11,25 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ: